Գաբրիէլ Մէնէվիշեանի «Հանքաբանութիւն» գրքից երեք պատկեր





ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԺԵ-ԺԷ ԴԱՐԵՐՈՒՄ

(Երկու հնատիպ վաւերագրի քննութիւն)

Արմէն Այվազեան

Ա. ՄԱՍ

Լեւոն Մինասեանը նկարագրել է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիւանում պահուող երկու վաւերագիր (ըստ հեղինակի՝ կոնդակ), որոնք 1693 թ. տպագրուել էին Նոր Ջուղայի տպարանում՝ երկու հարիւր օրինակով, մէկական էջի վրայ, մէկի չափերը 80x28 սմ, միւսինը՝ 44x35 սմ: Նկարագրութեան մէջ ասուած էր, թէ «երկու կոնդակի բովանդակութիւնն էլ բողոք ու հանրաստորագրութիւն է կաթողիկոսական ընտրութեան շուրջ»: Նշուած էր երկրորդ վաւերագրի խորագիրը՝ «Յաղագս կարգի կաթողիկոս ձեռնադրութեան, գրեալ ի Մովսիսէ վարդապետէ Բջնեցոյ. համաձայնութեամբ սրբազան վարդապետաց եւ եպիսկոպոսաց», նշուած էր նաեւ, որ այն ստորագրել են 27 հոգի՝ եպիսկոպոսներ, վարդապետներ, խոջաներ եւ ուրիշներ (անունները չէին յիշատակուած)[1]: Այս տեղեկութիւնները, բնականաբար, վաւերագրերի մասին առարկայական պատկերացում կազմելու համար բաւարար չէին:

Վաւերագրերը, առանց էական նորութեան, նկարագրուել են նաեւ Երեւանում լոյս տեսած՝ 1512-1800 թթ. հայ տպագիր գրքի կոթողային մատենագիտութեան մէջ[2]:

Այդ վաւերագրերի ներկայ՝ ստորեւ տրուող գիտական հրատարակութիւնը պատրաստել ենք Հայաստանի Ազգային գրադարանում պահուող լուսապատճէնների հիման վրայ:

Սկզբից եւեթ նշենք վաւերագրերը նկարագրած հեղինակների ուշադրութիւնից վրիպած կարեւոր երեք փաստ.

Ա. թէեւ երկու փաստաթուղթն էլ տպագրուել են միաժամանակ՝ 1693 թ. մայիսի 1-ին, դրանցից մէկը գրուել էր 28 տարի առաջ՝ 1665 թ.: Հետեւաբար, որքան էլ այս վաւերագրերը փոխկապակցուած են թէ՛ միասին տպագրուած լինելու, թէ՛ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան կանոնակարգին վերաբերելու առումով, դրանով հանդերձ, նրանցից իւրաքանչիւրը պահանջում է առանձին մօտեցում եւ քննութիւն:

Բ. Այս վաւերագրերը (ինչպէս կոչել են նկարագրողները) կոնդակ, այսինքն՝ հայրապետական կամ առաջնորդական ուղերձներ չեն, այլ մէկը 1665 թ. Արեւելահայաստանի մի խումբ երեւելի հոգեւոր եւ աշխարհիկ գործիչների գումարած ժողովի որոշումն է, իսկ միւսը՝ 1693 թ. Ջուղահայութեան անունից Արեւելահայաստանի հոգեւոր կենտրոններին առաքուած շրջաբերականը:

Գ. Յ. Տէր-Յովհաննեանցը դեռեւս 1881 թ. ամբողջութեամբ հրապարակել է 1693 թ. շարադրուած շրջաբերականը, առանց որեւէ քննութեան՝ «յաղագս լինելոյ ազգային հնութեան, թէպէտ արտաքոյ կարգի պատմութեանս է գործ»[3]: Սակայն, այս արժէքաւոր վաւերագիրը հետագայում մատնուել է անուշադրութեան ու որեւէ քննութեան չի արժանացել[4]: Այդ իսկ պատճառով, կրկին վերահրատարակելով այն, տողատակում նշանակում ենք Տէր-Յովհաննեանցի շեղումներն ու

© National Library of Armenia

թիւրընթերցումները եւ բացատրում օտար բառերը: Բնագրերին յաջորդում է առթած հարցերի մեր քննութիւնը, որի տրամաբանութեանը հետեւելով էլ վաւերագրերը հրապարակել ենք ժամանակագրական հակադարձ կարգով:

Նախ ամբողջութեամբ հրատարակում ենք 1693 թ. գրուած վաւերագիրը:

Ա վաւերագիր (1693 թ.)

ՍՈՒՐԲ ԵՒ ՍԻՐԵԼԻ ՊԱՇՏՕՆԱԿՑԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԱՑ *հաւատարմաց, երջանկացելոց եղբարց ճշմարտախոհից եւ ուղղասիրաց, վերադիտողացդ սրբազանից զետեղելոց ի գերագահ եւ ի գերահոչակ, ի սուրբ եւ ի սրբարար Աթոռդ Էջմիածին՝ ի մայրդ հասարակաց, նաեւ՝ որոց ընդ հովանեաւ դորին որդիացելոց յաշխարհիդ Արարատայ եւ յԱտրպատականի. քահանայապետից եւ քահանայից, եւ համօրէն լրման ուխտի ժառանգաւորաց եւ վիճակաւորաց սուրբ եկեղեցոյ. ողջո՛յն ի Քրիստոս մատուցանեմք, սիրալրական սիրով սրբութեան, երկնաւոր խաղաղութեամբն հանդերձ, մեք՝ ի Ծօշ եղեալ քրիստոնէախումբ դասք եկեղեցականաց եւ աշխարհականաց:*

Ընդ որոյ եւ որով ծանուցանեմք պատուականութեան ձերոյ զեղելոց իրաց դիպելոց, որ ի մերումս եղեալ թշուառութեան ամանակի յանզգուշութեան եւ յանպատրաստութեան մերոյ պատճառէ, որով կամք ամենեքեան երերեալ եւ տատանեալ՝ իբրեւ զնաւ խողովեալ յալեաց ծովու: Քանզի սկիզբն եւ աւարտ խաղաղութեան զբարեկարգութիւնն լինել[5] իմանամք, զի ուրանօր բարձեալ է բարեկարգութիւն՝ արմատացեալ լինի աղմուկ խռովութեան, որպէս եւ տեսանեմք մերովք տեսանելեօք: Քանզի որքան վախճան առեալ է ի կենցաղոյս ընդ երանելիսն հանգուցեալ երջանիկ հայրապետն մեր Տէր Եղիազար՝ վրդովումն խռովութեան ոչ պակասի ի մէնք: Պատճառն՝ անխոհեմ եւ անհանճար մարդոց գործ եւ արարմունք, որք յիրեանց փառամոլութեանց ախտիցն ձգեալք եւ պատրեալք[6], որոց գլուխ եւ զօրավիգ զԱստապատցի Մինասն, որ ո՛չ գրոց աշակերտեալ ի մանկութենէ եւ ո՛չ ճշմարտութեան վարուց հետեւեալ, ո՛չ զտեսականն ծանուցեալ եւ ո՛չ գործնականին մասին հաղորդեալ, այլ զօրէն գոեհկաց զերկրաւորս եւեթ ողջունեալ եւ ի նոյնն ցանկ դեգերեալ, ժամադիր եղեալ ընդ Նահապետին ձեռագրով եւ կնքով միմեանց, թէ՝ «միշտ ի քո կաթուղիկոսութեանդ ես եղէց աթոռակա՛լ»: Այսու պայմանաւ յառաջեցուցեալ զայդ գործ, որ մեզ ամենեցուն ստոյգ եւ իրաւապէս յայտնի եղեւ, որ այդ այդպէս է: Եւ առաւել քան զայդ, գիտակ եղաք ամենայնի, զոր չէ պարտ մի ըստ միոջէ արձանացուցանել ի գիրս:

Արդ, ո՞վ իցէ Աստապատցի Մինասն, որ զայդ առնիցէ: Մի՞թէ ազգս արծաթագին է հօր դորա՛, որ ում[7] եւ կամիցի՝ վաճառիցէ յաղագս պորտոյ եւ յորովայնի իւրո՞յ: Եթէ այդպիսի է կարգ եւ կանոն կաթուղիկոս ձեռնադրութեան, ո՞վ է[8] պակաս քան զնա, որ ոչ կարիցէ զոմն կատարօղ ախտի իւրոյ ձեռնադրել կաթուղիկոս: Քանզի ի ձերում աշխարհի յոլովք գոն վանորայք եւ եպիսկոպոսունք, նաեւ՝ ի մերս աշխարհի: Եթէ այդպէս իցէ, որ առանց ընտրութեան եւ վկայականի թղթոյ ձեռնադրեալն է կաթուղիկոս, որում պարտ է հնազանդել՝ ո՞վ է, որ ոչ կարիցէ իբրեւ զԱստապատցին օծանել զոք ի պատիւ կաթուղիկոսութեան: Ո՞վ է, որ պակա՛ս է քան զնա, որ օծեալ նորա լիցի կաթուղիկոս, եւ այլոցն՝ ո՛չ: Եթէ նորայն ընդունելի է, ուրեմն այլոցն պա՛րտ է լինիլ եւ ընդունելի, իսկ թէ այլոցն ո՛չ, ուրեմն՝ եւ նորայն ո՛չ: Տի՛նա, որ Աստապատցին ոչ է ի յարգի[9] հասարակաց, այլ յոռի եւ անարգ քան զամենեսեան՝ յաղագս անուսման եւ անվարժութեան իւրոյ: Զոր տգիտութիւնն մայր գոլ սահմանեցին ամենայն մոլութեանց, որովք դա՛ կայ պարաւանդեալ, որ այդպիսի ոճրագործութիւն գործեաց ի մէջ ազգիս: Որ եւ յետ կատարման գործոյն գրեալ են առ մեզ կրկին պատճառ. նախ՝ թէ «ըստ կտակի Հոգեւոր Տիրին արարաք զայս», երկրորդ՝ թէ «ի ձէնջ առաքեալ թղթոյն բանին գործեցաք»:

Առաջնոյն զայս պատասխանեմք, թէ Եղիազար Հոգեւոր Տէրն ո՛չ է արարեալ զայդ կտակ, որպէս եւ կանխագոյն յայտ իսկ է ձեզ եւ

յետոյ մեզ եւս եղեւ զստոյգն[10] յայտնի, զոր, եթէ կամիք, մե՛ք ծանուցուք ձեզ զճշ[մ]արիտ կտակ Հոգեւոր Տիրին:

Արդ, որովհետեւ արար՝ վասն է՞ր ոչ դրոշմեաց ձեռամբ իւրով ի քարտիսի, զոր կանխագոյն իսկ ունէր սովորութիւն յաւարտ բանին դնէր ձեռս, ասելով թէ. «առ ի հաստատութիւն բանիս եդի զձեռագիրս[11] ի վերայ»: Որ քանի՛ թուղթ առ մեզ գոյ՝ այսպիսի գրեալ եւ դրոշմեալ: Հարկաւորապէս եւ առաւելապէս դմին իրի յաւէտ պա՛րտ էր[12] զայդ սովորութիւն ի գործ ածել, զի համաշխարհական է[13] բանդ եւ իրագործութիւն, որով երեւի ոչ գոլ ճշմարիտ զասացեալն:

Ասեմք, թէ եւ ասացեալ եւս լիցի. հայեցարո՛ւք ի կարգս եւ ի կանոնս հարցն սրբոց եւ երանելի նախնեաց՝ եթէ այդպէ՞ս է սովորութիւն եւ կարգ, որ[14] կաթուղիկոսն, թարց ժողովոյ եպիսկոպոսաց եւ վարդապետաց, նաեւ հարց վանականաց լեռնականաց կրօնաւորաց եւ աշխարհաժողով հանդիսի, ինքնահաճ կամօք, ըստ ախորժակաց սրտի իւրոյ, կոչեսցէ զոք ի պատիւ կաթուղիկոսութեան: Եթէ այնպիսին ընդու[ն]ելի եղեալ է՝ եւ ա՛յժմս[15] լինիցի, ապա թէ թիւր եւ զարտուղի է յընթացից նախնեաց՝ ուրեմն ո՛չ է ընդունելի:

Եթէ հարցն առաջնոց եւ նոցին կանոնաց ոչ անսան, գոնէ ի մերումս եղեալ ժամանակի հարցն անսասցեն, որ ի թուահաշու[ու]թեան տոհմիս հայկական հազարերորդի հարիւրորդի եւ տասներեքին[16] ամի մեծանուն վարդապետք, երեւելիք եւ նշանաւորք ժողովեալ են ի Սուրբ Աթոռդ Էջմիածին, հետեւելով հարցն սրբազանից, եւ քանի գլխով բան կարգեալ յաղագս կաթուղիկոս ձեռնադրութեան, թէ որ ոչ լինի այնպէս՝ խոտելի է: Որոց գրեալ բանքն լուսաւոր հոգի Մովսէս վարդապետին ձեռնագրով եւ այլ սրբազան վարդապետաց կնքով եւ գրով առ մեզ է, որոյ սաւատն[17] եւս առ ձեզ ապաքեցաք: Եթէ այնց բանից միոյն համաձայնի արարեալն ներկայիս, ապա է՛ մեզ ընդունելի, իսկ թէ ո՛չ՝ մեք ումեք ոչ եմք պարտական՝ եթէ զպարտսն պահանջեսցէ: Այսքան առ առաջինն:

Երկրորդին զայս տամք պատասխանի. թէ գրեալ եմք մեք առ Տէր Եղիազար կաթուղիկոսն եւ ոչ կարեմք յուրաստ լինել, թէ «որքան դու կենդանի ես՝ մեր կաթուղիկոս դու ես, եւ յետ քո կատարօղ եմք կամաց քոց եւ քոյոցն առնելոց եմք կաթուղիկոս»: Ահա Եղիազար Հոգեւոր Տիրին ո՛չ մի ունէր աշակերտ, այլ յոլով: Եթէ մեք յանուանէ՛ մարդոյ անուն գրեալ եմք, ապա թէ մեզ վերայ հաստատի բանդ: Իսկ թէ անորոշակի եմք գրեալ, ապա՝ զուր եւ նանիր է մեզ վերայ ասացեալդ եւ անպատշաճ արարեալդ:

Ի յաւիտենից ոչ ոք լուաւ, թէ նախքան զթաղումն վախճանեալ կաթուղիկոսի օծանիցի նոր կաթուղիկոս, զոր ահա եղեւ: Մի՞թէ Եղիազար Հոգեւոր Տէրն այր տգէտ երեւեցաւ յաչս ոմանց, քանզի, իւր խոհեմութեամբն եւ խորագիտութեամբն, ի գալն յԵրուսաղէմայ նստաւ ի Կոստանդնուպօլիս՝ ասելով, թէ «ոչ եկից ի Սուրբ Աթոռն, մինչեւ ո՛չ գայցէ մանսար Իսպահանու»: Եւ յորժամ առաքեցաք՝ իսկոյն եկն: Այսպէս լինի արարք առն խոհեմագունի: Եթէ յաղագս ինքեան այսպէս խորհէր, ապա վասն այլոյ զիա՞րդ հրամայէր լինել առանց մեր մանսարի: Զոր յետ գործոյն կատարման թարց վկայականի թղթոյ ապա խնդրեալ էին ի մէնք մանսար, զոր մեք[18] նարդեանս գրեալն յայնժամն էաք գրելոց: Բայց երկրորդ Հողեփեռնէսս[19] եւ Գոգդոսս՝ անկեալ եւ կործանեալ չԱւետս[20], կաշառակուր եղեալ եւ արծաթով կուրացեալ, կրկին եւ երեքկին անգամ ընկալեալ զկաշառ, լի՛պասի հուքս[21] հանեալ եւ առաքեալ առանց մեր մանսարի[22], սալահի[23] եւ գիտութեան, որոյ վասն եւ ինքն կործանեցաւ եւ նոր քալանթար հաստատեցաւ Մահտասի-խօջա[24] Պետրոսի որդի՝ Քրիստոսիւ օրհնեալ խօջա Ղուկասն, ամենեքի՛ն յար եւ նման բարեպաշտութեան հօրն իւրոյ: Այսուհետեւ կաշառն անգործ եղեալ՝ ճշմարտութիւնն է թագաւորելոց եւ ուղղութիւնն հաստատելոց: Ծա՛մ է այսուհետեւ մեզ, սիրելիք, ի քնոյ զարթնուլ, քանզի գիշերն մերժեցաւ եւ տիւն մերձեցաւ:

Զայս թուղթ վասն այնր առաքեցաք առ մեծութիւն ձեր, զի ցուցանիցէք կաթուղիկոս եղծութիւն ձեր, զի գուցանիցէք կաթուղիկոս եղծողիդ. եթէ կամի դա բռնութեամբ եւ ուժգնունողիդ. եթէ կամի դա բռնութեամբ եւ ուժգնունողիդ.

© National Library of Armenia

թեամբ բազկի իւրոյ տիրել մեզ՝ ո՛չ կարէ: Քանզի մեք ոչ ումեք եմք արծաթագին: Զի բարձրեալն, որոյ տէրութիւնն սեփական է[25] եւ իշխանութիւնն՝ բնութեամբ, բոնաբար ոչ ումեք տիրէ, թո՛ղ թէ մարդ: Իսկ ապա թէ արդարութեամբ եւ իրաւամբք տիրէ՝ հնազանդիմք եւ մեք առաւել քան զառաւել:

Եւ թէ զի՞նչ է արդարութիւն եւ իրաւունք, այսինքն է՝ գնալ անխոտոր զշաւիղս յառաջնոցն սրբոց. եթէ նախնեացն եւ գերագունիցն ոչ, սակայն յետնոցն, որ ի մերումս ամանակի զառաջնոցն ստացան վարս եւ առաքինութիւնս, ճշմարտութեան կարգաց եւ կրօնից հետեւելով: Զլուսաւոր հոգիք Մովսէս եւ Փիլիպպոս կաթուղիկոսացն ասեմք, որ ի վերջին ժամանակս փայլեցան իբրեւ զարեգակն ջահաւորեալք ի մէջ սուրբ եկեղեցոյ[26] եւ յազգս[27] Հայաստանեայց:

Եւ զի՞նչ է խնդիր մեր եւ զո՞րս՝ համառօտաբար կարգեսցուք երկոտասան գլխօք:

Նախ. զի կաթուղիկոսն միշտ եւ անպարապ ընթերցցի՛ զԱստուածային գիրս եւ ինքն նովիմբ վարեսցի՛ եւ վարեսցէ՛ զեկեղեցի:

Երկրորդ. զի դպրատունս եւ զդասատունս հաստատեսցէ՛ յամենայն տեղիս, որպէս սովորութիւն է այլազգեաց քրիստոնէից, եւ մանաւանդ թէ մեզ իսկ գլխովին, նաեւ պարսից եւս, զոր գիտողացն է քաջայայտ՝ թէ որքան ունին ջանք եւ փոյթ յայդմ իրի: Քանզի շինութիւն եւ հաստատութիւն ազգի դովա՛ւ լինի: Որպէս եւ տեսանեմք խոպանացեալ եւ անգիտանացեալ ազգն վրաց՝ յաղագս ոչ ունելոյ փոյթ զայնմանէ:

Երրորդ. զի եւ ինքն ասուեղէն զգեցցի՛ եւ ո՛չ բամբակեղէն կամ վշեղէն, եւ ո՛չ այլոց թոյլ տայցէ:

Չորրորդ. զատ եւ առանձին ի միաբանից ո՛չ յաղօթս կացցէ եւ ո՛չ հաց կերիցէ, այլ ընդ միաբանսն հաղորդեսցի՛ ի յամենայն աղօթսն եւ ի հացկերոյթ սեղանատեղսն:

Հինգերորդ[28]. մի՛ լիցի առանձին տնտեստուն եւ մառան եւ մի՛ իմ եւ քո ի մէջ բերիցէ ի հասարակ տան. ինքն իրայովքն աւելորդօք քան զհարկաւորն շատացեալ, եւ հասարակն անխնամ եւ անայցելու մնացեալ կարօտ հարկաւորին: Այլ զամենայն մի լիցի՝ եթէ՛ գանձարան[29], եթէ՛ շտեմարան, եթէ՛ տնտեստուն, եւ եթէ՛ սեղանատուն:

Վեցերորդ. մի՛ զարդարեալ սիգաքայլ երիվարօք յոխորտացեալ յօրանայցէ, այլ կիսիշեօ՛ք շրջեսցի, որպէս եւ տեսեալ ի՛սկ եմք զնախնիսն աչօք մերովք:

Եօթներորդ. ո՛չ ունիցի երկու կամ երեք եւ չորք փայեակ[30], որպէս այժմս լսեմք, այլ միով սուրհանդակաւ բաւականանալ՝ որպէս նախնի կաթուղիկոսունքն:

Ութերորդ. նոր զարմանս եւ ծիծաղելիս ո՛չ առնել, այսինքն՝ թէ քարշել առաջի, ըստ·օրինի իշխանաց, եղակս[31] մէկ, երկու եւ կամ աւելի եւ պակաս: Եւ կապել թիւր եւ դադարայ[32], որ կարի հեռի է ի հոգեւոր իշխանութենէ, զի զէն զինուորութեան մերոյ ո՛չ է մարմնաւոր, այլ հոգեւոր՝ ըստ առաքելոյ[33]:

Ինններորդ. ո՛չ պահել մատաղ մանկունս զսպասաւորս առաջի, զարդարեալ զգեստիւք՝ ի գայթակղութիւն տկարամտաց, այլ կատարեալ հասակաւ եւ մուրուօք, սեւազգեստ եւ խոշորահանդերձ՝ ի յամօթ հակառակորդաց բամբասողաց:

Տասներորդ. արանց տգիտաց եւ անվարժից մի՛ տայցէ պատիւ եպիսկոպոսական եւ իշխանութիւն վարդապետական, քանզի նոքա՝ որ ունին ջան եւ աշխատասիրութիւն ուսման, տեսանելով զայլս թարց ջանից եւ աշխատանաց ընկալեալ զպատիւ եպիսկոպոսութեան եւ զաստիճան վարդապետութեան, եւ նոքա յուսահատեալ խափան լինին ի բարի յառաջադիմութենէ, եւ մնայ ազգս ի մէջ անգիտութեան խաւարի յաղագս անընտրութեան՝ ըստ Արիստոտէլի, որ ասէ. «եթէ կամիս բարեկարգութիւն տան՝ ընտրեայ զլաւն ի վատթարէն եւ զվաստ[ա]կաւորն յանջանէն»: Եւ ըստ իմաստնոյն, թէ «զփառս իմաստունք ժառանգեսցեն»:

Մետասաներորդ. ո՛չ ածել պատիժս անպատշաճս ի վերայ ուրուք անյարմար կարգի եւ աստիճանի, որպէս լսեմք, թէ այս ինչ մարդոյ մուրուս կտրեալ է եւ այս ինչ մարդ՝ ի սիւն կապեալ: Ոչ մի անգամ լսեմք, այլ յոլովակի: Ուստի՞ ունի օրինակ զայդպիսի անոպայ արարմանց. զայր եպիսկոպոս առանց ժողովոյ եւ դատաստանի, ի ժամ հացկերութեան եւ գինի ըմպութեան կապեալ ի սիւն եւ բրածեծ տալ առնել արանց սրիկայից եւ ելուզակաց, եւ յեռնել արանց սրիկայից եւ ելուզակաց, եւ հայրապետքն սուրբք ե՞րբ օրէնս վարկան եւ իրաւունք համարեցան այդպիսի դատաստանաւ դատել զեկեղեցական եւ մանաւանդ եպիսկոպոս, որպէս գրէ սուրբն Կիւրեղ Աղեքսանդրացի յաղագս պղծոյն Նեստորի՝ թէ. «լուծումն ա՛ր արաք զնա յեպիսկոպոսութենէն իրաւամբք ժողովոյն»: Զի Մովսէս Հոգեւոր Տէրն ե՞րբ ա՛ր արար զայդ, եւ կամ լուսաւոր հոգի Փիլիպպոս կաթուղիկոսն՝ ԻԴ (24) ամ վարեալ զկաթուղիկոսութիւնն, ե՞րբ եւ կամ ո՞ւմ մուրուս կտրեաց կամ սիւն կապեաց: Նոյնպէս եւ Ցակոբ Հոգեւոր Տէրն, քսան եւ հինգ ամ կացեալ յԱթոռն, միայն Ոնոփրիոսին էած զայդ պատիժ, նմին՝ աշխարհ վկայէր մահու գոլ արժանի եւ ո՛չ լոկ պատժոյ: Զոր ա[յ]ժմս տարի եւ կէս է՝ քանիսն լսեմք զայդպիսի խայտառակեալ զուր եւ ուղղանայն պատճառաւ: Այդպիսի պատիժ քաղաքական օրինի եւ դատաստանի է անկ եւ ո՛չ եկեղեցական: Վասն որոյ ոչ կամիմք զայր եպիսկոպոս կամ վարդապետ, թարց ժողովոյ եւ կանոնաց, դատել կամ պատժել: Ցորմէ պատճառէ վնասս յոլովս[34] ծնանի, զի ժամանակս չար է[35]:

Երկոտասաներորդ. մի փոփոխեսցէ զթեմ եւ զվիճակ եպիսկոպոսաց ըստ նմանութեան Բրքիշոյի եւ Ծմուէլի, որ մինն զմեռեալ եպիսկոպոսաց վիճակն յափշտակէր, իսկ զմիւսն՝ եւ զկենդանի եպիսկոպոսաց, որպէս գրէ քերթողահայրն Մովսէս ի Վիպագրութեան իւրում[36], այլ, ըստ ուղիղ կանոնաց առաքելական եւ հայրապետական՝ իւրաքանչիւր եպիսկոպոս տիրէ յիւրում վիճակին, եւ իւրաքանչիւր թէմ՝ յիւրում աթոռոյ կացցէ եւ մնասցէ, զոր ի բնէ ունի կարգեալ եւ հաստատեալ: Բայց թէ առաջնորդ եպիսկոպոսն անուղղագործս ունիցի՝ դատեսցի ըստ իրաւանց կանոնաց եկեղեցւոյ եւ որպէս արժա՛ն է՝ պատժեսցի: Քանզի ի փոփոխմանէ եւ ի բաժանմանէ բազում չարիս ծնեալ է, ծնանի եւ ծնանելոց է: Ըստ տէրունականն բանի՝ «տուն, քաղաք եւ թագաւորութիւն բաժանեալ՝ կործանի»[37]: Եւ զի ամենեցունցդ է քաջայայտ, որ իւրաքանչիւր աթոռ պսակեալ է ընդ իւրոյ վիճակին, որոց ո՛չ է պարտ բաժանիլ ի միմեանց, թէպէտ յետ սրբասէր կաթուղիկոսին Տեառն Փիլիպպոսի ոմանց բաժանումն եղեալ է, եւ այն՝ ոչ կանոնական իրաւամբք, այլ յանիրաւ յարձակմանէ, որոց յայսմ հետէ ոչ կամիմք եւ ոչ թողացուցանեմք լինիլ զայն անկարգութիւն[38]: Եւ ի վերայ այսր ամենայնի Աստուածատացի Մինասն արտաքսեսցէ՛ եւ հալածեսցէ՛ ի Սուրբ Աթոռոյդ եւ յԱյրարատ գաւառէ եւ կորուսցէ՛ ի բնիկ տեղի իւր, եւ զոր ինչ ստացեալ է եւ ունի, խլեսցէ՛ ի ձեռացն: Մուրուս կտրելոյ, սիւն կապելոյ եւ բրածեծ առնելոյ դա՛ է արժանի, եւ ո՛չ այս եւ այն: Հալածեալ կորուսանիցե՛ք ձեռագրով, որ այլ յերեւան[39] չկոխէ. բարի է: Ապա թէ ո՛չ, Ճշմարտին յայտնի է՝ մե՛ք առնեմք արքունի հրամանաւ: Եւ գիտեմք, թէ որպէս անպատմելի եւ անասելի խայտառակութեամբ կորուսանելոց եմք հանդերձ դատապարտական պատժիւք, քանզի դա՛ եւս բազմադիմի կաշառօք կուրացուցանէր զայս գարշելի այրակերպ գազանս[40] յաղագս ի գլուխ հանելոյ զիւր չարութեան գործն: Վասն որոյ ոչ կամիմք այդպիսի բանսարկու եւ շոգմոգ առն մնալ ի սուրբ եւ ի հոչակաւոր տեղիդ, այլ յանկեան ուրեք ծակամուտ կացցէ՛, որպէս եւ արժան ի՛սկ է:

Ահա զայս երկոտասան բանք կարգեալք պահանջեմք ի կաթուղիկոսէն՝ ով որ եւ իցէ: Եւ զայս բանս խնդրանաց եղբայրական սիրով առ ձեզ առաքեցաք՝ իբրեւ անդամք միմեանց լինելով ցաւակիցք: Եւ դուք տարեալ ցուցէք իւրն: Եթէ հաւանի եւ ընդունի՝ գրով եւ կնքով իւրով եւ վկայութեամբ երջանիկ եպիսկոպոսաց, առ մեզ առաքեսցէ իբրեւ զայետիկար[41] անջի[ն]ջ մնալ առ մեզ՝ յայնժամ եւ մեք սիրով հլու հպատակութեամբ հնազանդ լիցուք նմա իբրեւ գլխոյ, եւ ինքն թագաւորեսցէ յեկեղեցիս մեր որպէս զարեգակն: Ապա թէ ոչ ընդունիցի զասացեալս մեր եւ կամ գրեալքս խոտան համարեսցի, յայնժամ զգրեանս մեր դարձուսջիք

© National Library of Armenia

յետս: Ցայնմ հետէ գիտեմք եւ մեք, թէ որպէս պա՛րտն իցէ առնել յամենայն կողմանէ անխիղճ:

Տպեցաւ տիպս երկու հարիւր. ի դրան Սուրբ Ամենափրկչի վանացս Նոր Ջուղայու յիսպահան քաղաքի. ի թուում կենարարին մերոյ հազար վեց հարիւր [ին]նսուն եւ երեք եւ ի Հայոց՝ հազար հարիւր քառասուն եւ երկու (1693), յամսեանն մայիսի Ա (1):

ՔՆՆութիւն Ա վաւերագրի ՆԱՀԱՊԵՏ ԵԴԵՍԱՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԴՐԱ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

1. Տպագրութիւնը

Այսպիսով, 1693 թ. Նոր Ջուղայի հայութիւնը («...ի Շոշ եղեալ քրիստոնէախումբ դասք եկեղեցականաց եւ աշխարհականաց») այս գրութիւնն ուղարկել է Մայր Աթոռի միաբաններին եւ Արարատեան ու Ատրպատականի երկրների հոգեւոր հայրերին: Օգտուելով 1636 թ. ի վեր Նոր Ջուղայում հաստատուած եւ ընդմիջումներով գործող տպարանի ընձեռած հնարաւորութիւնից եւ, անշուշտ, նկատի ունենալով շրջաբերականի կարեւորութիւնը՝ այն 200 օրինակ բազմացրել են: Ի միջի այլոց, ընթացիկ խնդիրների այսպիսի արծարծումն աննախադէպ երեւոյթ է ԺԶ-ԺԸ դդ. հայ տպագրութեան պատմութեան մէջ: Ընդ որում, այս երկու փաստաթուղթը Նոր Ջուղայի հայ տպագրութեան առաջին շրջանի (1636-1696 թթ.) վերջին նմուշն են (հայ տպագրութիւնն այնտեղ վերսկսուել է միայն 1872 թ.)[42]:

2. Պատմական ետնախորքը

Մեզ հետաքրքրող իրադարձութիւնների մասին ցարդ յայտնի էր հետեւեալը: 1691 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս է դարձել Նահապետ Եդեսացին: Ժամանակակից հայ հեղինակները սրան բնութագրում էին իբրեւ «ճոռոմախօս, փառապերճ, ահարկու»[43], սակայն «կարգալոյ եւ յօրինաց թոյլ» կաթողիկոս[44]: Այսպէս, Զաքարիա Քանաքեռցին Նահապետի մասին գրել է.

...կարի սաստիկ էր ի վերայ յանցաւորաց, եւ եթէ ոք պակասութիւն ինչ գործէր, սա կալեալ հրապարակաւ կախէր, եւ գանալից առնէր, եւ տուգանէր մարմնաւոր իշխանութեամբ, հարէր զմօրուսն եւ գանգուրն, եւ արկանէր ի բանտ եւ շղթայէր: Եւ այսպէս ահարկութեամբ կայր ի վերայ ամենայն եկեղեցականաց եւ քահանայից[45]:

Քանաքեռցին նաեւ յայտնում է, որ այդպիսի վերաբերմունքի արժանանալուց յետոյ միայն «վիրաւորեցան ոմանք ի սեւագլխոց ի մերումս աշխարհէ» եւ, միաբանելով Նախիջեւանի ու Գողթնի եպիսկոպոսների հետ՝

գրեցին առ Ստեփաննոս վարդապետն, որ էր առաջնորդ Ասպահանայ եւ Ջուղայու, թէ «կաթուղիկոս այս խանգարեաց ամենայն կարգ եւ օրէնք, զոր սահմանեալ էին նախնիքն մեր, եւ ինքն զոր ինչ եւ կամի՝ այնպէս վարէ առանց կանոնաց եւ վկայութեանց գրոյ»[46]:

Ցովհաննավանքում, այսինքն՝ Էջմիածնի անմիջական վերահսկողութեան ներքոյ, պաշտօնավարող Զաքարիա Քանաքեռցին վերը նշուած եւ «այլ» (չյիշատակուած) ամբաստանութիւնները «սուտ» է անուանում, որ հակասում է իր իսկ վերոբերեալ տողերին եւ մի այլ առիթով արած պարզ դիտողութեանը՝ «...Բայց զկարգ եւ զկանոն առաջին կաթուղիկոսացն քայքայեցաւ ի Սուրբ Աթոռոյն եւ յամենայն վանորէից վասն թոյլ տալոյ նոցա... (իմա՛ Եղիազար եւ Նահապետ կաթողիկոսների, Ա. Ա.)»[47]: Ինչպէս շուտով կտեսնենք, այս ցաւալի իրողութիւնը հաստատում են նաեւ այլ փաստեր:

Այնուհետեւ, դէպքերը զարգացել են այսպէս. Ստեփաննոս Ջուղայեցին ձեռք է բերել Նահապետին գահազրկելու եւ նրա փոխարէն կաթողիկոսանալու շահական հրովարտակ եւ իրենից առաջ Էջմիածին է ուղարկել Դաւիթ Ջուղայեցու աշակերտ Աղեքսանդր Ջուղայեցուն՝ Նահապետին Տաթեւում արգելափակելու առաջադրանքով: Բայց վերջինս խոյս է տուել: 1696 թ. նոյեմբերի 2-ին Էջմիածնում Ստեփաննոսը՝ Մինաս Ամդեցու ձեռքով, օծուել է Ամենայն Հայոց կաթողիկոս: Սակայն ընդամէնը երկու-երեք ամիս անց[48] Նահապետը, օգնական ունենալով իր «մտերիմ բարեկամ», ընտանեօք մահմեդականացած եւ շահի արքունիքում կարեւոր դիրքի արժանացած Նոր Ջուղայի նախկին քալանթար Աւետիսին[49], ինչպէս նաեւ կաշառքի զօրութիւնը, վերագրաւել է Մայր Աթոռը: Ստեփաննոս Ջուղայեցին բանտարկուել է, ենթարկուել դաժանագոյն խոշտանգումների եւ մեռցուել: Այնուհետեւ, Նահապետի կամքին հակառակ, Նոր Ջուղայի առաջնորդ է ընտրուել Աղեքսանդր Ջուղայեցին (ապագայ կաթողիկոսը): Ցայտնի է նաեւ, որ մինչեւ Նահապետի մահը (1705 թ. յունիսի 13)[50] Նոր Ջուղայի հայութիւնը հրաժարուել է ընդունել նրան որպէս Ամենայն Հայոց կաթողիկոս[51]: Զաքարիա Քանաքեռցին, լռութեան մատնելով այս հանրայայտ փաստը, դրանով իսկ բացայայտում է Նահապետին վերաբերող հարցերում իր գրչի կաշկանդուածութիւնը[52]:

Արդ, ինչպէս տեսնում ենք, մինչ այժմ մեր ձեռքի տակ եղած նիւթերը, չնչին բացառութեամբ[53], շրջանցում են 1691-1696 թթ. միջեւ եղած անցուդարձը: Ահա այս բացն է, որ զգալիօրէն լրացնում է 1693 թ. Նոր Ջուղայում տպագրուած շրջաբերականը:

3. Նահապետ Եդեսացու կաթողիկոսանալու հանգամանքները

Ըստ Զամչեանի, Նահապետի օծումը եղել է Եղիազար Այնթապցի կաթողիկոսի մահից ընդամէնը երկու օր անց՝ օգոստոսի 10-ին[54]: Այս արագութիւնը շփոթեցրել է անգամ ժամանակակիցներին. Աւետիք Եւդոկիացին իր յիշատակարանի մէջ գրում էր, թէ Եղիազարը, կանխազգալով իր մօտալուտ վախճանը, ելել է մահճից, պատարագ մատուցել եւ իր ձեռքով օծել Նահապետին, այնուհետեւ, անկողին վերադառնալով, «նոյնժամայն» մահացել[55]: Օրմանեանը, Զամչեանի հաղորդած «ընտրելագոյն» ժամանակագրական տուեալների հիման վրայ, իրաւամբ հերքել է Աւետիք պատրիարքի այս հաղորդման հաւաստիութիւնը, սակայն, ձեռքի տակ չունենալով լրացուցիչ աղբիւրներ, սխալմամբ ենթադրել է, թէ Նահապետի ընտրութիւնը ժամանակի օրինականութեան սահմաններում է եղել, որից յետոյ՝ «ոչ մի կողմէն նկատողութիւն չի յարուցուիր եւ ամէն կողմէ առանց դիտողուցեան կընդունուի Նահապետի կաթողիկոսութիւնը»[56]:

Մինչդեռ, արդէն 1693 թ. մայիսի 1-ին, ջուղայեցիները, արձանագրելով, որ Նահապետի ձեռնադրութիւնը կատարուել էր «նախքան զթաղումն վախճանեալ կաթուղիկոսի»՝ մի բան, որ «ի յաւիտենից ոչ ոք լուաւ», վճռականօրէն դատապարտում էին եկեղեցական կանոնադրութեան այս կոպիտ խախտումը: Դէպքի մասին յայտնելեալ մանրամասնութիւններ է հայտնում Աղեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսը՝ 1708 թ. փետրուարի 20-ին արձակած շրջաբերականով.

Իսկ յետ վախճանի սորա (իմա՛ Եղիազար Այնթապցու, Ա. Ա.)՝ յինն ժամու, ձեռնադրեցաւ Այնթոնն Հայրապետական Տէր Նահապետ կաթուղիկոս...՝ թարց ազգիս գիտութեան եւ ա-

© National Library of Armenia

ռաջնորդաց եկեղեցեաց հաւանութեան: Որպէս ի վերոյ գրեցաք յաղագս Յակոբ [Դ Ջուղայեցի] հայրապետի, թէ յԱրզրում եւ ի Դաւրէժ ոչ եհաս լուրն[57], *իսկ սորայս ի Կաղզուան եւ ի Նախչուան ո՛չ իմացան: Քանզի յաւուր յորում Եղիազարն փոխադրեցաւ, եւ սա ի նոյնում աւուր եւ ի նոյնում պատարագուջ, ուր էր դի նորա եդեալ ի դագաղի, նախ ինքն ձեռնադրեցաւ կաթուղիկոս եւ ապա օծեալ՝ զնա իջոյց ի գերեզման: Զորպիսի ձեռնադրութիւն ո՛չ վայել է գեղջկան երիցու միոյ, թող թէ՝ կաթուղիկոսի եւ հայրապետի, եւ մանաւանդ ազգի գլխոյ*[58]:

Աւելին՝ ոտնահարուած էր ժէ դարում աւանդական դարձած Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան կարգը, ըստ որի, եթէ էջմիածնում ազգային կամ եկեղեցական ընտրական ժողով չէր հաւաքւում, Մայր Աթոռի միաբանութիւնը կաթողիկոս ձեռնադրելուց առաջ իր առաջադրած թեկնածուի անունը (որ սովորաբար որոշւում էր նախորդ կաթողիկոսի կամքը հաշուի առնելով)[59] *պէտք է հաղորդէր բոլոր կարեւոր թեմերին, այնուհետեւ նրանցից ստանար համաձայնութեան վկայականներ (այսպէս կոչուած՝ վկայական թղթեր կամ մահզարներ)*[60]: *Այս իսկ պատճառով Փիլիպոս Աղբակեցու ձեռնադրութիւնն, օրինակ, հետաձգուել է ութ ամսով՝ 1632 թ. մայիսից մինչեւ 1633 թ. յունուար*[61], *իսկ Աղեքսանդր Ջուղայեցունը երեք ամսով՝ 1706 թ. սեպտեմբերից մինչեւ դեկտեմբերի 7-ը*[62] :

Նահապետ Եդեսացու ձեռնադրութիւնը կատարուած փաստի առջեւ էր կանգնեցրել ո՛չ միայն Ջուղայեցիներին. մէկ այլ փաստաթղթից գիտենք, որ Նահապետի կաթողիկոսանալը, առանց նախապէս Հայաստանեայց Եկեղեցու թեմական առաջնորդների եւ ժողովրդի համաձայնութիւնը ստանալու, դժգոհութիւն էր առաջացրել նաեւ պոլսահայութեան մէջ[63]:

4. Նորջուղայեցիների եւ պոլսեցիների մասնակցութիւնը կաթողիկոսական ընտրութիւններին

Բերուած փաստերը վկայում են, որ Նահապետը, չունենալով հայութեան երկու ամենահարուստ եւ ազդեցիկ հատուածների՝ պոլսեցիների եւ Ջուղայեցիների հաւանութիւնն ու աջակցութիւնը, օրինականութեան պահպանման դէպքում կաթողիկոս չէր ընտրուի, քանզի առաջինները ցանկանում էին կաթողիկոս ընտրել Մինաս Ամդեցուն, իսկ վերջիններըը՝ իրենց առաջնորդ Ստեփաննոսին:

1708 թ. փետրուարի 20-ի՝ վերը յիշատակուած շրջաբերականում Աղեքսանդր Ջուղայեցին յատուկ շեշտում էր կաթողիկոսական ընտրութիւններում Ջուղայեցիների եւ պոլսեցիների ձայնի առաջնայնութիւնը.

...յետ այսր եւ առ յապայ, յորում ժամանակի եւ իցէ՝ թարց սալահի եւ մանսարի եւ վկայական թղթոյ չորեքծագեան կողմանէ, որք թեմ եւ վիճակ են եւ ժողովուրդ Սուրբ Աթոռոյս եւ հարազատ որդիք Մօրս ամենայն եկեղեցեաց՝ Վաղարշապատու սուրբ քաւարանին էջմիածնի, յաւէտ եւս եւ մայրաքաղաքաց եւ արքայանիստ գահից, այսինքն՝ Իսպահանու եւ Իստամպօլու, եւ առանց մեծի ժողովոյ ի Սուրբ Աթոռս՝ մի՛ ձեռնադրեսցեն զոք ի պատիւ կաթուղիկոսութեան: Եթէ ո՛չ այսպէս՝ անընդունակ եղիցի[64]:

Հետեւաբար, հէնց այս շրջաբերականը նկատի ունէր Աբրահամ Կրետացին, երբ 1734 թ. Երեւանի փաշային ասում էր, թէ.

Մեր նախնի սովորութիւնն այն է, որ մահսար անէն Սպահան եւ Ստամպօլ, որ այն Բ (2) քաղաքացիք միաբանին եւ զմի ոմն ընտրեն եւ կացուցանեն [կաթողիկոս]: Ապա թէ ո՛չ, Սուրբ Աթոռին եւ կաթողիկոս նստողին մեծ վնաս կլինի: Որ

եւ գիր ունիմք այսպէս՝ հաստատեալ բազմաց գրով եւ կնքով եւ նզովիւք փակեալ[65]:

Միւս կողմից՝ սկսած նոյն Աղեքսանդր Ա Ջուղայեցուց՝ էջմիածնի կաթողիկոսները, բացի պարսից շահից, ենթակայ էին դառնում նաեւ օսմանեան սուլթանի հաստատմանը՝ «որոյ պատճառն է, - զայրոյթով նշում է Սիմէոն Երեւանցին, - գլխաւորապէս Եղիազարու [կաթողիկոս Այնթափցու] եւ այլոց նոյնապիսեաց լրբութիւնն»[66]: *Սրանով կաթողիկոսական ընտրութիւններն էլ աւելի էին ենթակայ դառնում օտար միջամտութիւններին:*

5. Մինաս եպս. Աստապատցի

Ջուղայեցիների 1691 թ. մայիսեան շրջաբերականից պարզւում է, որ Նահապետին օծել էր ոմն Մինաս Աստապատցի եպիսկոպոսը, որը, նաեւ կաշառելով («կաշառակուր» անելով) Նոր Ջուղայի քալանթար, կարճ ժամանակ անց (1693-1694 թթ.) ուրացած վերոյիշեալ Աւետիսին, առանց Ջուղայեցիների գիտութեան, յաջողեցնում է շահական արքունիքից Նահապետի անունով կաթողիկոսութեան հաստատ ձեռք բերել: Նահապետն էլ, հաշուի առնելով սրա ծառայութիւնները, նշանակում է նրան իր աթոռակալ-փոխանորդ: Այս Մինասի մասին մեզ հասած կցկտուր տեղեկութիւններից ժամանակագրօրէն առաջինը 1690 թ. յուլիսի 2-ին՝ «ի դրանէ Սբ. Էջմիածնի»՝ «Պարոն Մօլարէթխուցէս (=գլխաւոր գանձապահ) Քայիխոսրով բեգին» ուղարկած նամակի մի հատուածն է, որը գրել է «ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Մինաս վարդապետ, աթոռակալ ամենապայծառ եւ նախամեծար Վեհազարդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի»[67]: *Այսպիսով, պարզւում է, որ Մինաս Աստապատցին աթոռակալում էր (բայց ո՛չ աթոռակալ-փոխանորդի իրաւունքով, որ նրան շնորհեց Նահապետ կաթողիկոսը միայն) դեռեւս Եղիազար կաթողիկոսի օրօք: Սոյնով հասկանալի է դառնում, թէ ինչու եւ ինչ իրաւասութեամբ հէնց նա էր Նահապետին կաթողիկոս օծողը*[68]:

Սրա մասին եւս մի տեղեկութիւն յայտնում է Ս. Թադէի վանական Իսահակ եպիսկոպոսը (ո՛չ նոյն վանքի առաջնորդ Իսահակ վրդ. Արդարը). «Թվին ՌՃԽԱ (1692) դեկտեմբերի ամսոյ մէկին, Ծ (50) ոսկի աթոռհակալ Մինաս վարդապետէն Աստուծոյ փոխ առաւ Սարգիս վարդապետն, յորժամ ուզէ անպատճառ տայ, գիտութեամբ տէր Դաւթին եւ տէր Յովսէփին»[69]:

«Սուրբ Էջմիածնայ աթոռակալ Մինաս վարդապետի» ստորագրութեամբ յայտնի է 1702 թ. նոյեմբերի 7-ով թուագրուած մի նամակ, որը հասցէագրուած է Իսրայէլ Օրիին եւ Մինաս վրդպ. Տիգրանեանին[70]: *Աշ. Յովհաննիսեանը կարծում է, թէ այս նամակը գրուել է Մինաս Տիգրանեանի ձեռքով*[71], *բայց մեզ համար կարեւորն այն է, որ այն գրուել է Մինաս Աստապատցու անունից: 1708 թ. այս Մինասը դեռեւս ողջ էր. 1708 թ. փետրուարի 20-ի վերոյիշեալ շրջաբերականը ստորագրող-հաստատող 138 հոգուց մէկը նա էր. «Ինձ՝ սապուղ (=նախկին) աթոռակալ Մինաս վարդապետիս այս սահմանադրութիւնս զապուլ է (=ընդունելի է)՝ որպէս. սրբազան Վէհիս կողմանէ»*[72]:

1707-1714 թթ. միջեւ գրուած մէկ այլ կոնդակից մակաբերում ենք, որ 1693 թ. շրջաբերականի պահանջը՝ Մինասին Մայր Աթոռից արտաքսել «ի բնիկ տեղիւր» Աստապատ, իսկապէս կատարուել է, սակայն միայն Նահապետի մահից յետոյ[73]: *Այդ վաւերագիրն ասում է, թէ Աստապատի առաջնորդ Մինաս վարդա-*

© National Library of Armenia

պետը ժամանել է Ս. Էջմիածին, Աղեքսանդր Ջուղայեցու կողմից իբր ջերմ ընդունելութեան արժանացել եւ, ստանալով իր ծննդավայրում նուիրակութիւն անելու առաջադրանք, շուտով ետ ուղարկուել (նշենք, որ այդ ժամանակ Աստապատը Նախիջեւանի նահանգի ամենախոշոր բնակավայրերից էր[74]): Հաւանաբար, այս հաշտութիւնը, բացի մեզ անյայտ ինչ-ինչ կէտերից, կայացել էր նաեւ Մինասի՝ Մայր Աթոռի օգտին խոշոր դրամահաւաք կազմակերպելու պարտաւորութեան հողի վրայ: Մինաս Աստապատցու բնութագրութիւնը շրջաբերականում հետաքրքիր է.

ո՛չ գրոց աշակերտեալ ի մանկութենէ եւ ո՛չ ճշմարտութեան վարուց հետեւեալ, ո՛չ զտեսականն ծանուցեալ, եւ ո՛չ գործնականին մասին հաղորդեալ, այլ զօրէն գոեռկաց զերկրաւորս եւեթ ողջունեալ եւ ի նոյնն ցանկ դեգերեալ:

6. Նահապետի կաթողիկոսութեան հետեւանքները

«Կատարուած փաստի» մարտավարութիւնն սկզբում, կարծես, արդարացրեց Նահապետ Եղեսացու, Մինաս Աստապատցու եւ քալանթար Աւետիսի սպասումները: Սակայն այս ոչ օրինական (մերօրեայ բառապաշարով ասած՝ ոչ լեգիտիմ) ձեռնադրութիւնը զգացուեց ընդհուպ մինչեւ Նահապետի մահը՝ հարուածելով Հայ Եկեղեցու միասնականութեանը, հեղինակութեանը, նիւթական կացութեանը, ինչպէս նաեւ նշանաւոր գործիչների ճակատագրին: 1708 թ. Աղեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսն այսպիսի գնահատական էր տալիս իր նախորդի գահակալութեան շրջանին.

Եւ երեքտասան ամ կացեալ նա յԱթոռն՝ բայց խազմ եւ խռովութիւն ոչ պակասեցաւ ի ժամանակս սորա, այլ օր աւուր յաւելաւ, եւ բազում եղեւ Աթոռոյս եւ Ազգիս վնաս, զոր վնասուն այնորիկ արգասիքն ահա մեք կրեմք՝ անձամբ անձին հարկատութեամբ[75]:

Արդէն 1693 թ. սկզբին Ջուղայեցիների միահամուռ ճնշման տակ քալանթար Աւետիսը պաշտօնանկ է արւում ու հաւանաբար այդ ժամանակ էլ հաւատափոխ լինում[76]: Շրջաբերականում այս ուրացողը բնութագրուած է իբրեւ «գարշելի այրակերպ գազան, երկրորդ Հողեփեռնէս եւ Գոգդոս»:

Մենք պէտք է արժանին մատուցենք Ջուղայեցիներին եւ նրանց առաջնորդ Ստեփաննոս վարդապետին, որ, անգամ այս կարգի խայտառակ անցուդարձին լաւատեղեակ լինելով եւ կացութեան վրայ ներազդելու կարողութիւնն ունենալով, նրանք խուսափել են հարուածի սլաքն անձամբ ուղղել Ամենայն Հայոց կաթողիկոսի դէմ, այլ ցանկացել են նրան զգօնութեան կոչել՝ Մինաս Աստապատցուն Մայր Աթոռից վռնդելու եղանակով: Ի դէպ, վերջինս նշանակուել էր աթոռակալ-փոխանորդ Նահապետի միանձնեայ կամքով: Հէնց այս օրինախախտութեան առիթով էին Ջուղայեցիք հրապարակ հանել եւ հրապարակել 1665 թ.՝ Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի նոյնպիսի զանցանքի դէմ գրուած փաստաթուղթը:

Փաստօրէն, 1691 թ. մայիսեան շրջաբերականը Նահապետ Եղեսացի կաթողիկոսին ուղղուած վերջնագիր է. նա կա՛մ պէտք է իր գործելակերպի մէջ կտրուկ շրջադարձ կատարէր եւ մաքրէր իր շրջապատը, կա՛մ պատրաստուէր դիմակայելու Ջուղայեցիների բուռն եւ, իրենց իսկ բնորոշմամբ, «անխիղճ» յարձակումներին: Յաւօք, նա ընտրեց երկրորդը: Ինն ամիս անց, 1694 թ. փետրուարին, Սպահանում դեգերող կարմելիտների Հռոմ ուղարկած մի զեկոյցից իմանում ենք, որ Ստեփաննոս Ջուղայեցին, հաւանաբար տեղեկանալով շրջաբերականի անհետեւանք մնալու մասին, իր վիճակի եկեղեցականներին կարգադրում է պատարագի եւ ժամերգութեան մէջ չյիշատակել Նահապետի անունը[77]:

7. Ստեփաննոս Ջուղայեցու ընթացքն ու վախճանը

*Արդ, այս ամենով հերքւում է նաեւ Ստեփաննոս Ջուղայեցու գործողութիւններին Օրմանեանի տուած գնահատականը, ըստ որի, դրանք սոսկ «անխորհուրդ ձեռնարկներ» էին՝ «առանց եկեղեցական եւ կանոնական օրինաւորութեանց կաթողիկոս մը գահընկէց ընելու եւ անոր տեղն անցնելու յաւակնութեամբ, լոկ մասնաւոր խումբի մը գրգռութեամբ»[78]: Ինչպէս տեսանք, եկեղեցական-կանոնական օրէնքներն սկզբից եւեթ բացայայտօրէն եւ շարունակաբար խախտողը Նահապետ Եղեսացին էր, որն իր դիրքերն ամրապնդելու համար չէր խորշում ո՛չ ուրացած Աւետիսին, ո՛չ էլ Հռոմի պապին ու կաթոլիկ միսիոներներին դիմելուց[79]: Պատահական չենք համարում նաեւ այն, որ Նահապետի վերահաստատմանը նպաստել էին Թավրիզի կապուչինները[80]: Ժամանակակից ու հետագայ կաթոլիկ հեղինակները նրան սովորաբար ներկայացնում են Հայոց «ամենալատիներկայացնում են Հայոց «ամենալատիներկայացնում են Հայոց «ամենալատի

Զաքարիա Քանաքեռցու հաւաստումով՝

Ստեփաննոսին հանին ի թեթեւ բանտէն եւ եդին ի մթին եւ գարշահոտ զնդան, եւ ոտքն ի ծնգացն եդին ի կոճեղս, որ է տոմրուղ եւ ի ներքոյ թիկանցն քար ողորկ. եւ ի զազրութենէ հոտոյն եւ յաճմանէ հերացն, եւ ի բազմանալոյ որդանցն վշտացեալ՝ մեռաւ անդէն[87]*:*

Ու թէեւ Օրմանեանը փորձում է Նահապետի վրայից վերցնել այս գործողութեան պատասխանատուութիւնը՝ ասելով, թէ «կաթողիկոսին վրայ չէինք սիրէր ծանրացնել այդպիսի վայրագ վրէժխնդրութիւն մի»[88]*, այնուհանդերձ, Նահապետը լաւագոյն դէպքում լռելեայն համաձայնել է Ստեփաննոսի այդօրինակ վախճանին: Սա եւս փաստում է սադիստական հակումներով արեւելեան բռնապետի նրա կերպարը եւ այդ կերպարի ճշգրիտ պատկերումը 1693 թ. մայիսի 1-ի շրջաբերականում:*

Մէկ ճշտում եւս, այս անգամ՝ Նահապետի մահուան վերաբերեալ: Ցայտնի է, որ նա վախճանուել է 1705 թ. յունիսի 13-ին, թաղուած է Ս. Շողակաթ եկեղեցու բակում[89]*: Այստեղ կարելի է աւելացնել ուսումնասիրողների աչքից վրիպած մի տեղեկութիւն եւս. Ղազար Ջահկեցին՝ 1733 թ. Կ. Պոլսում լոյս տեսած իր «Դրախտ ցանկալի» ուշագրաւ աշխատութեան մէջ ծանուցում է, որ Նահապետը «հանգեաւ ի Քրիստոս ի հրեշտակաբնակ անապատն Շատիկու եւ բերեալ ամփոփեցաւ ի զանկակատուն սրբոյն Շողակաթի»*[90]*: Այս հաղորդման հաւաստիութիւնը որեւէ կասկած չի յարուցում, քանզի Ղազար Ջահկեցին ինքն այդ տարիներին Շատիկայ վանքի միաբան էր*[91]*: Այսպիսով, Նահապետն իր մահկանացուն կնքել է օր ծերութեան մեզ անյայտ նպատակներով ձեռնարկած մի ուղեւորութեան ժամանակ:*

8. Հայոց կաթողիկոսների կենցաղավարութեան եւ տարազի մասին

1693 թ. մայիսի 1-ի փաստաթղթի 3-ից 8-երորդ կէտերի առաջադրած պահանջները ունէին պատմական խոր արմատներ: Ահա թէ ինչ էր գրում Կոստանդին Ա Բարձրբերդցու (1221-1267) մասին 1230-ականներին Կիլիկիա այցելած գերմանացի մի ճանապարհորդ.

Հայոց [հոգեւոր] առաջնորդներուն գլուխը կկոչուի կաթողիկոս: Անոր քով մնացի տասնեւչորս օր, ան իր մօտ ունի արքեպիսկոպոսներ եւ եպիսկոպոսներ, վանահայրեր եւ ուրիշ եկեղեցականներ: Ան իր սնունդովն, զգեստներովն եւ կենցաղովն այնքան օրինակելի է, որ անոր նման ոչ մին տեսած եմ՝ ըլլայ կրօնական, ըլլայ աշխարհական, եւ ստոյգ կերպով կյայտարարեմ, թէ՝ իմ կարծիքովս իր հագած զգեստները հինգ ստերլին շիլին արժէք չունին: Սակայն ան ունի շատ հաստատուն դղեակներ եւ մեծ եկամուտներ, եւ հարուստ է որեւէ հասարակ մարդէ աւելի: Ան կը հագնի ոչխարի կարմիր մորթէ կոշտ մուշտակ մը, շատ մաշած եւ տգեղ եւ լայն թեւերով, եւ անոր տակէն շատ հինցած գորշ պարեգօտ մը, եւ գրեթէ մաշած: Բաց աստ ան կհագնի սեւ փորուրար մը, եւ ոժան տեսակէն հաստ սեւ կրկնոց մը[92]*:*

Մկրտիչ Աղաւնունին ծանօթագրում է, որ ԺԳ դ. «դարուն Կիլիկիոյ հայրապետներէն ոմանք կխորշէին հանդերձի փափկութենէն, ինչպէս կգրեն Օրբելեան եւ Սմբատ պատմիչ. վերջինս կաւելցնէ Յովհաննէս մեծաբարոյ կաթողիկոսին համար՝ ըսելով. «անպաճոյճ անձամբ»[93]*:*

Նկատելի է, որ աւելի վաղ շրջանից եկող այս աւանդոյթները չէին դադարել գործելուց նաեւ ԺԷ դարում. 1662 թ. Էջմիածին այցելած ճիզուիտ երկու միսիոներներից մէկը՝ Հրանչոիս Փալիւը, իր ուղեգրութեան մէջ այսպէս է նկարագրել Էջմիածնի միաբանների ընթրիքը.

...Նախ հայրապետը սեղանն օրհնեց, ինչպէս նաեւ քանի մը հաց, զոր ձեռքը բռնեց, հացը կտոր-կտոր ըրաւ, կտոր մը ինք առաւ, իսկ մնացեալը բաժնուեցաւ միաբաններուն: Խնդրած էինք, որ մեզի ալ տային, ինչ որ միւս կրօնաւորներուն պիտի տրուէր. ինչպէս հայրապետին, մեզի ալ երկու պնակ բակլայ, ձիթապտուղ եւ ծնեբեկ հրամցուցին, առանց իւղի եւ կարագի, ինչպէս նաեւ կանանչ խոտեր, եւ իբրեւ ըմպելի՝ սառով ջուր: Զարմանքով կնկատէինք, թէ որքան չափաւոր եւ սակաւապէտ էին այս կրօնաւորները, որ պահքի շրջաններուն օրը մէկ անգամ կճաշեն...[94]

...[Նրանց] տարազը քիչ կտարբերի մեր կրօնաւորներուն տարազէն, միշտ կկրեն կոշտ քուրձ մը...: Իրենց աղօթասացութիւնները շատ երկար են...: Իրենց խուցերը շատ փոքր են: Այն կրօնաւորները, որ եպիսկոպոսական կարգ կստանան, կամ նոյնիսկ հայրապետը ո՛չ իրենց տարազը կփոխեն, եւ ո՛չ ալ իրենց կենցաղը:

...[Էջմիածնի կաթողիկոսն է] միակ ճշմարիտ հայրապետը բովանդակ Հայաստանի... իր իշխանութիւնն այնքան մեծ է, որ կրնայ եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները իրենց հաւատոր պաշտօններէն զրկել: Ինքն է միայն, որ անոնց ամենուն կարգ կու տայ, բայց կղերը եւ ժողովուրդն է, որ զանոնք իրեն կյանձնարարեն: Նոյնիսկ կրնայ իրէն յաջորդ մը ընտրել, որուն պաշտօնը կհաստատեն եպիսկոպոսները: Հարիւր յիսուն եպիսկոպոս եւ արքեպիսկոպոս ունի իր հրամանին տակ...[95]*:*

Հայոց կաթողիկոսների եւ եպիսկոպոսների՝ ձի չնստելու եւ ջորիով շրջելու սովորութեան մասին մատենագրական վկայութիւններ է ժողովել Ղուկաս Ինճիճեանը[96]*: 1636 թ. Յակոբ Սսեցու գրած՝ «Վասն պախարակելոյ օրինազանցիցն» չափածոյից իմանում ենք, որ ԺԷ դարում այս կանոնի շրջանցումները յաճախացել էին.*

Այն անիրաւ նուիրակնուն,

Տաճկի դախտով (=ձիասարքով) ձի կու հեծնուն,

Շարժմունքն ամեն զէտ օսմանցուն.

Ա՛յ սուրբ մեռոն, հայիֆ սէնի (=ափսոս քեզ)[97]*:*

Ութերորդ կէտով ջուղայեցիները վրդովմունք էին յայտնում, որ Նահապետն, ըստ իրենց հասած լուրերի, որդեգրել էր աշխարհական իշխանի կեցուածք. «Նոր զարմանս եւ ծիծաղելիս ո՛չ առնել, այսինքն՝ թէ... կապել թիւր եւ ղաղարայ(°), որ կարի հեռի է ի հոգեւոր իշխանութենէ, զի զէն զինուորութեան մերոյ ո՛չ է մարմնաւոր, այլ հոգեւոր»: Այս տեղեկութիւնն այն աստիճան արտասովոր է, որ նրա արժանահաւատութիւնն ակամայ կասկած է առաջացնում: Սակայն, եղած տարակոյսները փարատւում են, երբ ընթերցում ես 1692 կամ 1693 թ. Նահապետի իսկ ձեռքով՝ բողոքարկու պոլսահայութեան առաջնորդներին գրուած հետեւեալ տողերը.

...դուք է՞ր իմ կաթուղիկոսութիւնն չուզէք, քանց ո՞վ պակաս եմ: Այս քսան երեսուն տարի է, որ Եղիազարին ղուլլուղ (=ծառայութիւն) եմ արեր այս աւուրս համար: Դուք ո՞ր տեղացդ իմ սէիսիս պարապար մարդիք, որ կաթուղիկոս ընտրեր՝ զորն է խէչվր, զորն է քօսէ, զորն քոռ, զորն կիժ... գող ու բոզ Մարկոսի պիսակոտ աշակերտն (իմա Մինաս Ամդեցուն) քանց Եղիազարին [աշակերտն] (իմա իրեն Նահապետին՝ Ա.Ա.) աւելի ուզէք: Այս է, որ մին փոքր դժուար է գալիս ինձ, թէ չէ՝ ձեր տօլվաթէն ես քան զԵղիազարն այլ մեծ եմ, քան զՅակոբն այլ: Ես բերդն առեր եմ ու նստեր, ո՛վ խօսք ունի՝ գայ խօսի... Ես կորիւն առիծու եմ՝ Եղիազարին տեղն եմ. տեսնունք Մարկոսի պիսակոտն է ուժով թէ՞ Եղիազարի ապլանն է... Ա՛յ խօճայք, դուք զիմ լաւն ու վատն ինչէ՞ն իմացայք, որ կու գրէք, թէ Նահապետ կաթուղիկոսն չենք ուզեր, հպայ այդ չալ Մինա՞սն կուզէք. լաւ է, ուզարկեցե՛ք գայ, ձեր հաթերն համար մին կաթուղիկոս շինեմ, որ աշխարհ ամենայն հազ անէ»[98]*:*

© National Library of Armenia

Նահապետի վերը մէջբերուած խօսքում շեշտուած է իր նախորդին՝ Եղիազար Այնթապցուն աշակերտելու հանգամանքը: 1695 թ. օգոստոսի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գրուած մի յիշատակարան նոյնպէս ընդգծում է, թէ Նահապետ կաթողիկոսի «զհոգեւոր ծնօղն եւ զդաստիարակն զՏէր Եղիազար, զոր երկամք աստուածայնօք դաստիարակեալ հասոյց յարքունս հասակի իւրոյ, որով եւ արժանաժառանգ գտաւ առաքելական Աթոռոյս մեծի»[99]: Ժամանակակիցները նմանութիւններ էին նկատում այս երկու կաթողիկոսների վարքագծի մէջ: Այսպէս, Զ. Քանաքեռցին գրում էր.

Այս երկու կաթուղիկոսաց ի ժամանակի շինեցաւ եւ նորոգեցաւ բազում վանորայս եւ եկեղեցիս: ...Բայց զկարգ եւ զկանոն առաջին կաթուղիկոսացն քայքայեցաւ ի Ս. Աթոռոյն եւ յամենայն վանորէից վասն թոյլ տալոյ նոցա. զի ամենայն առաջնորդք ըստ կամաց իւրեանց առնէին, եւ կաթուղիկոսացն ոչինչ լինէր փոյթ, զի ինքեանք զոր ինչ յիւրեանց աշխարհին (իմա՛ Օսմանեան կայսրութիւնում – Ա. Ա.) վարեալ էին՝ զնոյն եւ աստ առնէին: Այլեւ զոր ինչ պակասութիւն տեսանէին աբեղայից եւ երիցանց, բերեալ զերծէին զգլուխսն եւ զմորուսն եւ բրածեծ առնէին մահու չափ: Եւ այսպէս կային ի ժամանակս կենաց իւրեանց[100]:

Աւելի ուշ նրանց միջեւ զուգահեռներ էր անցկացնում նաեւ Սիմէոն Ա. Երեւանցին՝ նկատելով, որ Նահապետը «էր նման Եղիազարու (որոյ էր աշակերտ). այր ճոռամախօս եւ փառապերճ, իշխան եւ ահարկու, յորմէ կասկածէին ամենեքեան»[101]:

ԺԷ դարի հայ փիլիսոփայութեան պատմաբան Հ. Միրզոյեանի կարծիքով, Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցին (1643-1715)[102], 1690-ականների իրադարձութիւնների ազդեցութեամբ, «ստիպուած է եղել վերանայելու իր Գիրք սրբազնագործութեան երկը՝ յատուկ գլուխ յատկացնելով կաթողիկոսների ցանկալի վարքագծի վերլուծութեանը», որտեղ, ըստ հեղինակի, հետեւեալ տողերն ուղղուած էին անձամբ Նահապետ Եդեսացուն.

...Նախ ժողովել պարտիս զգիտնականս եւ արս հանճարեղս, եւ ունօղս խղճմտանս... եւ անխարդախս, եւ նոքօք խորհեսցես, եւ զվնաս պատժապարտին յայտ յանդիման առաջի ամենեցունց բացերեւոցես, եւ յետ վկայութեան ամենեցունց, ապա զսուրն սոսկալի ի գործ գործցես[103]:

Ուշադիր զննելով Յովհաննէս Ջուղայեցու երկի այդ յաւելեալ գլուխը[104]՝ նրա մէջ նշմարեցինք եւս մի քանի հատուած, ուր խօսքն անտարակոյս վերաբերում է Նահապետի գործելակերպին: Ահաւասիկ, 1693 թ. շրջաբերականի հետ ուղղակի աղերս ունեցող մի պարբերութիւն.

...Ապա թէ ոչ այսպէս (իմա առաքինաբար – Ա. Ա.), այլ բարձրայօն շրջիցէ [կաթողիկոսը], կամելով զարհուրեցուցանել զորս են ընդ ձեռամբ զմեծագոյնս եւ զփոքրագոյնս խորովելով եւ այրելով եւ զկծեցուցանելով՝ զոմանս գանելով եւ հարկանելով, ատելով եւ տառապեցուցանելով, եւ կամ հրամայելով ի վեր քան զչափն, եւ զոմանս հրաւիրելով ի գերադրական փառս, եւ յաստիճանս եւ ի պատիւս առ ի յայրել, եւ ի խորովել զաղքատսն հոգւով, յաջ եւ յահեակ խոտորմամբ՝ ոչ ապաքէն վրիպումն ցուցանի... քանզի գանելն եւ հարկանելն մարմնաւորացն է, եւ ո՛չ հոգեւորաց... Եւ ո՞ւր ընթերցեալ լինի, եթէ զոք հարեալ իցէ Քրիստոս, այլ մանաւանդ ինքն՝ հարեալ ինքն ձաղեալ, ինքն կռփահարեալ եւ

ապտակեալ, յերեսն թքեալ եւ գան հարեալ, ի խաչն բարձրացուցեալ, եւ զայլիւք բեւեռօք ի փայտին բեւեռեալ, բարձրացեալ եւ նախատեալ[105]:

Սակայն, հեղինակի մի բացականչութիւնից եզրակացնում ենք, որ այս խրատական ուղերձը գրուել է Նահապետի մահից յետոյ՝ Մայր Աթոռի գահին բազմած Յովհաննէս Մրքուզի դասընկեր Աղեքսանդր Ջուղայեցուն (Դաւիթ Ջուղայեցու «երրորդ ընտրելագոյն եւ գերահրաշ աշակերտին»)[106] եւ յաջորդ կաթողիկոսներին Նահապետի կատարած սխալներից ետ պահելու նպատակով.

...արդ, որպէս կամիս՝ հեզութեամբ եւ խոնարհութեամբ խրատեսցէ զքեզ եւ քաղցրութեամբ, եթէ՝ սրտմտութեամբ, գանի, եւ հարկանելով, եւ ի մէջ բազմաց խայտառակելով, եւ զամօթալի զքեզ ամենեսեան ցուցեալ նշաւակելով. եւ գիտեմ, զի զառաջինն ընտրեսցե՛ս[107]:

9. Հայ եւ օտար մշակոյթների չորս բաղդատութիւն (1625, 1693, 1733, եւ 1740 թթ.)

1693 թ. մայիսի 1-ին Նոր Ջուղայի հայ առաջնորդները, ընդգծելով ազգային առաջընթացի գործում կրթական-լուսաւորչական լայն ցանց ստեղծելու անհրաժեշտութիւնը, արձանագրում էին այդ պահին նոյն բնագաւառում հարեւան վրաց ժողովրդի զգալի հետամնացութիւնը.

(Ամենայն Հայոց կաթողիկոսը) դպրատունս եւ զդաստատունս հաստատեսցէ՛ յամենայն տեղիս, որպէս սովորութիւն է այլազգեաց քրիստոնէից, եւ մանաւանդ թէ մեզ իսկ գլխովին, նաեւ պարսից եւս, զոր գիտողացն է քաջայայտ՝ թէ որքան ունին ջանք եւ փոյթ յայդմ իրի: Քանզի շինութիւն եւ հաստատութիւն ազգի դո՛վ լինի: Որպէս եւ տեսանեմք խոպանացեալ եւ անգիտանացեալ ազգն վրաց՝ յաղագս ոչ ունելոյ փոյթ զայնմանէ:

Արդարեւ, ԺԶ-ԺԷ դարերում վրաց մշակոյթը խոր ճգնաժամի մէջ էր, որ արդիւնք էր օտար նուաճողների կատարած վիթխարի աւերածութիւնների, եղբայրասպան մեծ ու փոքր անվերջ պատերազմների եւ այլն: Սակայն ԺԸ դարի առաջին քառորդի ընթացքում Քարթլիի ջանիշին (փոխարքայ) (1703-1714), հետագայում՝ թագաւոր (1716-1724) Վախթանգ Զ-ի (1675-1737) շուրջը համախմբուած հայրենասէր գործիչների եռանդուն ջանքերով վրաց մշակոյթը իսկական զարթօնք ապրեց[108]: 1740 թ. յունիսի 23-ին, Կ. Պոլսի Հայոց Յովհաննէս Կոլոտ պատրիարքը տարբեր կարծիք էր յայտնում հայերի ու վրացիների մշակութային ձեռքբերումների մասին.

Բայց իմ նկատեալ ի փարթամութիւնս լատինացւոց եւ յաղքատութիւն ազին իմոյ եւ իմ իսկ գլխովին (ի կոչմանէ իմաստութեան եւ մեկնութեան Աստուածաշունչ գրոց) թաղձէի եւ մորմոքէի ի սրտի իմում, թէ վասն ո՞յր պատճառի քան զազգն իմ այլ առաւել աղքատագոյն ազինք պերճացեալք իցեն իմաստութեամբ, որպիսիք են Ասորիք եւ Վրացիք, յորոց զբազում բանս ի նոցունց թարգմանեալ ցուցանեն նախնիք մեր...[109]:

Դեռեւս 1720-1723 թթ. գրած մի չափածոյում Յովհաննէս Կոլոտը դժգոհում է հայերի որոշ յատկութիւններից, որոնք, իր կարծիքով, չունեն այլ ազգերը.

Նա եւ այս իսկ է հրաշական,
եւ զարմացման է իսկ արժան.
Ազգք եւ ազինք համանգամայն,
Իւրաքանչիւրքն ամենեքեան
Ըզգլխաւորս մեծարական՝
պատուեն սիրով խոնարհական,
Են հնազանդ յոյժ միաբան

© National Library of Armenia

եւ վայելեն ի բարութեան:
Մերքն միայն անգիտական,
սիրեն մնալ տարագրական...110

Իսկ 1733-ին Կոլոտի աշակերտ Յակոբ Նալեանը, բարի նախանձախնդրութեամբ վառուած, հետեւելով իր ուսուցչին, խտացնում էր գոյները եւ անում այսպիսի համեմատութիւն.

...եւ մեր նկատեալ, թէ ամենայն ազգք քրիստոնէից զբազում ջանս ունին ի կրթումն իւրեանց յանձնեցեալ հօտին, եւ մերս ազգ՝ կամ յիւրեանց անընդունակութենէ եւ կամ զիմաստնոց պատիւն ոչ գիտելոյ, մնացեալ են յանջրդի վայրս անճարակ եւ անդաստիարակ...111:

Կոլոտի եւ Նալեանի կարծիքին մի համահունչ համեմատական գնահատական էլ նրանցից մօտ մէկ դար առաջ տուել է Սիմէոն Լեհացին (1584-1637): Թէպէտ Սիմէոնը եռանդուն հակակաթոլիկ գործիչ էր, բայց եւ այնպէս գիտութեան եւ կրթութեան նկատմամբ հայերի եւ եւրոպացիների տարբեր վերաբերմունքը գնահատում է ոչ հայերի օգտին: 1619-1625 թթ. շարադրած իր «Ուղեգրութեան» մէջ, նա նախ ընդարձակօրէն գովաբանել է եւրոպացիներին («ազգն Ֆռանկաց»).

Զի ամենեքեան իմաստունք են, կարգաւորք եւ աշխարհականք, նաեւ շինականքն եւ ուսումնասէրք, զի Աստուածաբանք, իմաստնասէրք, երաժիշտք, երկրաչափ եւ աստեղագէտք առ նոսա գտանին. եւ տասն տարեն տղան տասն բիւր դրամի հաշիւն եւ համարն ի մի ժամն կարէ տալ ոսխամով (=թուանշանով): ...զի նոցա փոքր տղայքն բուն վարդապետք են... զի ԺԵ (15) տարի, Ի (20), ԻԵ (25) ուսանին, եւ ոչ թէ մերձ ծնողաց, այլ հեռաբնակ եւ օտար երկիրս112:

Այնուհետեւ Սիմէոն Լեհացին գնահատում է կրթական ասպարէզում հայոց մէջ ստեղծուած իրավիճակը.

Իսկ ազգն մեր յոյժ հովցել եւ զպատվիրան Աստուծոյ մոռացել. զի եւ զանունն Աստուծոյ երբեք ոչ յիշեմք. վասն զի բնաւ չունին սէր ուսման. վասն որոյ եւ զգաւակսն թողուն անձնապաստան եւ անփոյթ. իսկ նոքա մեծացեալ որպէս պախրէք (=արջառներ) տգէտ եւ յիմարք գոլով՝ ի մեղս ծնողաց եւ ի նախատինս անձանց: Վասն որոյ նուազեալ պակասեցաւ եւ ջնջեցան կարգաւորք եւ իմաստունք յազգս մեր. եւ որք կանն այժմս ամաչեմ կարգաւոր կոչել զնոսա113:

Փաստօրէն, հայերի կրթասիրութիւնն ու կրթական համակարգը փոքրիշատէ դրական է գնահատել վերը բերուած չորսից միայն մէկ վաւերագիր՝ 1693 թուականին գրուածը: Հասկանալու համար այս հակասութիւնը, բաւական է հայեացք նետել պատմական այն ժամանակաշրջաններին, երբ տրուել են այս գնահատականները: Ամենահանգիստ ժամանակները 1690-ականներն էին, երբ յիսուն տարուց աւելի Հայաստանն ապրում էր խաղաղութեան պայմաններում եւ արդէն շունչ էր քաշել թուրք-պարսկական դարուկէս տեւած պատերազմներից ու հասցրել էր բարելաւել իր ընկերային-տնտեսական վիճակը: Միւս երեք գնահատականները տրուել են Հայաստանի համար խիստ ծանր ժամանակներում: Միաժամանակ այս գնահատականներն արտացոլում են թերարժէքութեան այն բարդոյթը, որն օտար տիրապետութեան երկարատեւութեան հետեւանքով արդէն հասցրել էր խոր արմատներ գցել հայերի ազգային հոգեբանութեան մէջ:

Կարեւոր է նշել, սակայն, որ միւս երեք հեղինակները բոլորն էլ ազգասէր անհատներ էին, եւ նրանց սուր քննադատութիւնը նպատակային է՝ հայկական կրթութեան զարգացմանը զարկ տալուն միտուած: Ահաւասիկ, նոյն Սիմէոն Լեհացին, այցելելով Ամիթ-Տիգրանակերտ, տալիս է հայերի կրթասիրութեան բոլորովին այլ պատկեր.

(Տիգրանակերտ) ունէր դարպաս եւ եպիսկոպոսարան եւ դպրատուն եւ վարդապետ մի Բարսեղ անուն, որ եւ առաջնորդ, աշակերտ Սրապիոն կաթողիկոսի, այր խրթին եւ բազմիմաստ:

...Եւ քաղաքացիքն յոյժ բարեկեցիկք եւ պարկեշտ. նաեւ ընթրիս բազմեալ ոչ արբենան, ոչ շատ խօսին, այլ հեզ եւ հանդարտութեամբ. զի ամէնքն կարդացողք, տօմարագէտք եւ հանճարեղք, զրուցատրութիւն թէ առուտուր, թէ ասուլիս՝ ամէն մարդավարութեամբ եւ ամենայն ինչ իմաստութեամբ, եւ զրուցն գրաբար եւ ոճիւ բառքն... Զի անդ է այժմ Հայոց Աթէնք. զի եւ փոքր տղայք գիտունք եւ հանճարեղք են, հանապազ ի հարցում եւ ի քննումն են...114

ՅԱՊԱՒՈՒՄՆԵՐ

ԱԶԳ - **Մ. արքեպս. Օրմանեան.** Ազգապատում: Հ. Ա-Բ, Կ. Պոլիս, 1912-1914:

ԴԱԻ - **Առաքել Դաւրիժեցի.** Գիրք պատմութեանց: Աշխատասիրութեամբ՝ Լ. Ա. Խանլարեանի. Երեւան 1990:

Դրուագներ, Ա-Բ - **Աշ. Յովհաննիսեան.** Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան: Գիրք Ա-Բ, Երեւան, 1957-1959:

ՋԱՔ - Զաքարեայ սարկաւագի պատմագրութիւն: Գիրք Ա-Գ, Վաղարշապատ, 1870:

ԽԱՁ - **Խաչատուր աբեղա Ջուղայեցի.** «Պատմութիւն պարսից». (ԺԸ դար): Աշխատութեամբ՝ Բ. վրդ. Աղաւելեանցի. Վաղարշապատ, 1905:

ԿՈՍ - «Թովմա Մեծոփեցու յիշատակարանը»: Հրատարակեց իւր առաջաբանով Կարապետ Կոստանեանց. Թիֆլիզ, 1892:

ՄԺ, Ա-Բ - «Մանր ժամանակագրութիւններ ԺԳ-ԺԸ դարերի»: Կազմեց Վ. Ա. Յակոբեան, Հ. Ա-Բ, Երեւան, 1951-1956:

Մաշտոցեան Մատենադարան - ՀՀ կառավարութեանն առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան:

ՁԱՄ, Գ - **Մ. վ. Զամչեանց.** Պատմութիւն Հայոց: Հ. Գ, Վենետիկ, 1786:

Ջամբռ - **Սիմէօն Երեւանցի.** Ջամբռ. Վաղարշապատ, 1870:

ՏՅՈ - **Յ. Թ. Տէր-Յովհաննեանց.** Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան. Հ. Ա-Բ, Նոր Ջուղա, 1881:

CARM - A Cronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII Centuries. Vol. 1-2. London, 1939.

Բ ՄԱՍ

Ահա եւ 1693 թ. մայիսի 1-ին Նոր Ջուղայում տպագրուած երկրորդ վաւերագիրը (գրութեան տարեթիւը՝ 1665 թ.):

Բ վաւերագիր (1665 թ.)

Յաղագս կարգի կաթուղիկոս ձեռնադրութեան, գրեալ ի Մովսիսէ վարդապետէ Բջնեցոյ՝ համաձայնութեամբ սրբազան վարդապետաց եւ եպիսկոպոսաց վերագրելոց ի քարտիսիս.

Յամի կենարարին մարդեղութեան հազար [վեց հարիւր]երորդի եւ վաթսներորդի հինգերորդի եւ, ըստ թուահաշու[ու]թեան հայկայինս տոհմի՝ հազարերորդի հարիւրերորդի ընդ հինգետասանեկի մասնկի, մե՛ք, Արարատեան նահանգի վարդապետք եւ եպիսկոպոսունք եւ առաջնորդ վանականաց, եւ միանգամայն Արեւելեան կողմանց Աթոռոյ ունողք եւ ժողովրդեան վերադիտողք, որ ընդ տէրութեամբ պարսկական արքայից արքայի, հանդերձ աշխարհիկ արանց115 մեծամեծօք, գումարեցաք ի մի վայր եւ զայս երիս իրս սահմանեալ հաստատեցաք ի միջի մերում՝ վասն գերագահ Աթոռոյն Սուրբ Էջմիածնի պայծառութեան եւ ժողովրդեան Աստուծոյ բարեկարգութեան:

Նախ՝ զի կաթուղիկոս ոք մի՛ իշխեսցէ ըստ կամաց իւրոց նստուցանել զով ոք ախորժէ ի տեղի իւր, եթէ ո՛չ ըստ ազգաց քրիստոնէից հանրականաց աւանդութեամբ, չորիւք յեղանակօք, այսինքն.

© National Library of Armenia

կամ վիճակաւ իմիք, որպէս հոովմայեցւոց է՛ սովորութիւն.

կամ ընտրութեամբ հասարակաց, որպէս առաջնոցն եւ յետնոցն եւս.

եւ կամ ի հաւանութեանց վեհագունից բազմաց Ց սրբազան արանց:

Թողո՛ւմ ասել զչորրորդն, որ է՝ վերին յայտնութենէն, որ ա՛յժմ իսկ դադարեալ է եւ լռեալ՝ վասն անարժանութեան մերում: Եւ ի բաց ի չորիցս յայսցանէ եղելոյ մի՛ ոյ կաթուղիկոս ինքն[ն]ագլուխ մի՛ իշխեսցէ ընտրել զոք ի պատիւ հայրապետութեան փոխանակ իւր՝ արտաքոյ սահմանադրութեան հարց նախնեաց սրբոց:

Երկրորդ. եթէ բռնասցի գլուխ ազգի կարգեալ կաթուղիկոսն առնել ըստ կամաց իւրոց՝ զարտուղի խորհրդով նստուցանել զոր ոք հաճեսցի անձն իւր փոխանակ իւր - կամ այլազգեաց իշխանութեամբ, կամ անիրաւ մամոնայի ստիմամբ, եւ կամ խաբեութեամբ իմիք - ի գրելոց աստի եւ ըստ իւրաքանչիւր անուանելոց քարոզ կոչեցելոց վարդապետաց՝ խոտեսցի ինքն կաթուղիկոսն եւ ընտրեալ իւր: Քանզի թէ սկիզբն [սուրբ է]՝ սուրբ է եւ՝ զանկուածն եւ՝ արմատն, ապաքէն եւ՝ ոստքն: Իսկ եթէ է՛ ընդդէմ ճշմարտութեան մարտնչումն, եղիցի համարեալ ի մասին մեղացն, որ ոչ քաւեսցի աստէն եւ անդէն. որպէս վկայէ տէրունական վճիռն յաւետարանի հոչակութեան[116]*.*

Եւ երրորդ. եթէ երկուքս այսոքիկ յառաջեսցին անհանճար գնացիւք, հարկ լիցի ապա ուրեմն եւ՝ վարդապետաց, եւ՝ եպիսկոպոսաց, եւ՝ բոլոր ուխտի վիճակաւորաց, եւ՝ համայն աշխարհի արանց երեւելեաց՝ ընդդիմանալ միագունդ պնդութեամբ եւ ջանալ եղծանել զապարասանութիւն բռնացելոյ կաթուղիկոսին, որով հօտն Աստուծոյ արածեսցի ի վայրի դալարոջ եւ սնուսցի ի ջուրս հանգստեան եւ առաջի երկնաւոր թագաւորին պսակաց յաղթականաց արժանասցին, քան թէ սնոտի երկիւղի՝ պարտեցելոց եւ թուլամորթից պատժոց, որպէս եւ իրաւունք համօրէն ազանց ուսուցանեն զսոյն զայսոսիկ այսպէս գոլ: Վասնորոյ եւ զայս թուղթս, զոր գրեցաք առ Ցակոբ կաթուղիկոսն միաբանական համաձայնութեամբ, յաղագս հասարակաց եւ հաստատութեան Սրբոյ Աթոռոյն հանրական արամեան ազգիս Էջմիածնի՝ ոչ ի մէջ հակառակութեան եւ երկպառակութեան: Եթէ ի պատճառս սորին հոգեկան եւ մարմնական պատիժ յառաջեսցի ի նմանէ, դառնութիւն ինչ եւ բանադրանք, եւ կամ տուգանք եւ զրգռանք ի վերայ միոյ ուրուք գալ եւ կամ առ ոմանս՝ իբրու ի յոլովս ի վերայ ամենեցունց եղիցի: Զոր ուխտեցաք եւ հաստատեցաք համակամութեամբ վրէժխնդիր լինել մերժեցելոյն: Եւ զվէրս մեզ համարել եւ կոռուել յոժարութեամբ: Քանզի եթէ վշտանայ մի անդամն, վշտանալ պա՛րտին ամենայն անդամքն ընդ նմա: Իսկ եթէ ոք յայսցանէ վրիպեալ վերջասցի անհանճար խորհրդով եւ ունայնական մտօք՝ նզովեսցի յերից սուրբ ժողովոյ հայրապետացն եւ մասն ընդ Յուդայի եւ խաչահանուսցն ընկալցի, որք զճշմարտութիւն քարոզեցին եւ զթիւրութիւն եւ զմոլութիւն սերմանեալ ի բաց հերքեցին: Եւ եղիցի այնպիսին լուծեալ ի կարգէն եւ որոշեալ յաստիճանէն դատապարտական պատժիւք: Ցորոյ վերայ կնքեսցի Ամէն:

Տպեցաւ սաւատս ի Նոր Ջուղայ, ի թուին հազար հարիւր քառասուն եւ երկու (1693) եւ յամսեանն մայիսի ի մէկն:

1. *Ցովհաննէս վարդապետ Մուղնեցի*+[117]
2. *Մովսէս վարդապետի՛ է կնիքս եւ գիծս +*
3. *Միքայէլ վարդապետ. առաջնորդ սուրբ Նախավկային+*
4. *Եսայի վարդապետ. առաջնորդ սուրբ Կարապետոյ +*
5. *Պետրոս վարդապետ Ագուլեցի +*
6. *Մաթէոս վարդապետ Ջուղայեցի +*
7. *Երեմիա վարդապետ Մեղրեցի +*
8. *Ցովհաննէս վարդապետ Կարփցի +*
9. *Գաբրիէլ վարդապետ +*
10. *Ստեփաննոս վարդապետ Լեհացի +*
11. *Փիլիպպոս վարդապետ +*
12. *Մինաս վարդապետ +*
13. *Մանուէլ վարդապետ +*
14. *Ցակոբ եպիսկոպոս +*
15. *Ցոհան վարդապետ [Շամբե՞]ցի +*
16. *Դաւիթ վարդապետ +*

17. *Խաչատուր եպիսկոպոս +*
18. *Ցակոբ պատրիարք (՞՞-Ա.Ա.) +*
19. *Իսահակ վարդապետ Շախսաբանցի*[118] +
20. *Ագուլեցի խօջայ Շմաւոն +*
21. *Մելիք Գասպար Երեւանցի +*
22. *Խօջա Բարաքիազ Ագուլեցի +*
23. *Ասլան Նորքցի +*
24. *Թաթոս Երեւանցի +*
25. *Ցարութիւն Մարուքի որդի +*
26. *Սարգիս [որա]գեղցի*[119] +
27. *Ցակոբջան Երեւանցի +*

ՔՆՆՈՒԹԻՒՆ Բ Վաւերագրի

ՀԱԿԱՅԱԿՈԲԵԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ (1664-1665 ԹԹ.)

1. Վաւերագրի գրութեան ժամանակը եւ վայրը

Ը մակաբերութիւն կատարելով՝ ուղղանկիւնաձեւ փակագծերում աւելացրել ենք վեց հարիւր (վաւերագրի վրայ, հաւանաբար Լ. Մինասեանի կամ գուցէ աւելի վաղ գրչի ձեռքով՝ նոյնն է աւելացուած):

1693 թ. Նոր Ջուղայում շարադրուած փաստաթղթի հեղինակները ժամանակագրական շփոթի տեղիք են տուել, երբ, նշելով այս վաւերագրի գրութեան թուականը, բաց են թողել «մանկի» բառը, որով՝ 1665-ի փոխարէն հասկացւում է 1666 թ.:

1665 թ. վերջին կայացած ժողովի վայրը բուն վաւերագրում չի յիշւում, սակայն այն յստակ նշուած է 1693 թ. Ջուղայեցիների շրջաբերականում՝ «...[1665 թ.] մեծանուն վարդապետք, երեւելիք եւ նշանաւորք ժողովեալ են ի Սուրբ Աթոռդ Էջմիածին»:

1.1. Ժողովի ժամանակն ու վայրը ճշտող մի վարկած

Իր «Օրագրութեան» մէջ Զաքարիա Ագուլեցին շատ համառօտ կերպով նշում է, որ 1665 թ. դեկտեմբերի 3-ին Ագուլիսից մեկնել է Երեւան, ուր հասել է չորս օրից, այնուհետեւ դեկտեմբերի 15-ին բռնել է վերադարձի ճամփան[120]*: Արդ, նա մի խօսք անգամ չի ասում իր ուղեւորութեան դրդապատճառների եւ Երեւանում անցկացուած ութ օրուայ անցքերի մասին, որ այլ առիթներով սովորաբար միշտ անում է: Սա կասկած է առթում առ այն, որ այդ ձմեռային արագընթաց ճանապարհորդութիւնը կարող էր ձեռնարկուած լինել իր եղբօր՝ հակայակոբեան ժողովի վճռի տակ աշխարհականներից իր ստորագրութիւնն առաջինը դրած՝ խօջայ Շմաւոն Ագուլեցու*[121] *կանչով, քանզի այս երկու եղբայրները մշտապէս եւ սերտօրէն համագործակցում էին ե՛ւ առեւտրական, ե՛ւ միւս գործերում: Եթէ մեր այս ենթադրութիւնը համապատասխանում է իրականութեանը, ապա ժողովի անցկացման ժամանակը կարելի է ճշտել՝ 1665 թ. դեկտեմբերի առաջին կէս, իսկ վայրը՝ 1664 թ. հոկտեմբերին կայացած ժողովի*[122] *պէս՝ դարձեալ Երեւան:*

2. Երկու նախորդող ժողով (1664 թ. հոկտեմբեր եւ 1665 թ. յունուար)

Համաձայն Զաքարիա Քանաքեռցու՝ Օնոփրիոս վարդապետ Կարկուտը, Ցակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսից իր պէս դժգոհ տարրերին ի մի է բերում, որովհետեւ.

միաբանեցոյց ընդ ինքեան, եւ գրեցին բազում հայհոյանօք սուտս ի կաթուղիկոսէն առ Եղիազար վարդապետն, որ պատրիարգ [էր] Երուսաղէմի, թէ «դու եկ ի Սուրբ Աթոռս, եւ մեք

© National Library of Armenia

քեզ տամք զկաթուղիկոսութիւնն Էջմիածնի՝ արքունական նօմոսիք (=հրամանագրով): Եւ ահա առաքեցաք առ քեզ զՕնոփրիոս վարդապետ, զի զքեզ փառաւորապէս բերցէ ի Սուրբ Աթոռս»: Զայս գրեցին եւ, ընդ հաւատարմաց իւրեանց առաքեցին յառաջագոյն. եւ յետոյ գնաց Օնոփրիոսն զկնի թղթոյն[123]*:*

Ինչպէս ճիշտ նկատում է Կ. Ամատունին, «Զաքարիայի այս տուեալները կենթադրեն ժողովական գումարում»[124]*: Այդ ժողովին վերաբերող մի ընդարձակ վաւերագիր հրապարակել է Մեսրոպ Նշանեանը՝ այն համարելով Կարկուտ Օնոփրիոսից Եղիազար Այնթապցուն ուղղուած նամակ*[125]*: Այս առթիւ նկատենք, որ ա) փաստաթղթի հեղինակն իրօք Օնոփրիոսն է, բ) սա սովորական անձնական բնոյթի նամակ չէ: Այսպէս, տեսնենք, թէ ինչ են բովանդակում Օնոփրիոսի շարադրանքի վերջին տողերը.*

...եկի ի սուրբ յԵրուսաղէմ, ժամանեալ մարտի ամսոյ ի չորրորդումն աւուր (1665 թ.), եւ գտի զԵղիազար վարդապետն կաթուղիկոս եւ պատրիարք օծեալ ի վերայ նոյն Սուրբ Աթոռոյն ամսօք կանխօք, ... եւ մի ըստ միոջէ զամենայն վերոգրեալսն եւ այլ աւելիս ծանուցի նմա...: Վասն իմոյ կամաց եւ կարեաց ախորժութեամբ՝ ամենայն յօժարութեամբ իմով հաւանեալ ետու զանձն իմ ի ծառայութիւն կամաց Տեառն Եղիազարու կաթուղիկոսին Ամենայն Հայոց. վասն որոյ գրեցի զայս ձեռագրի ուխտադրութիւնս եւ կնքեցի, զի մինչ ի մահ եւ ի վճար կենաց իմոց Աստուծով զանձն իմ եդից ի վերայ անձին սորա՝ եթէ ի մահ եւ եթէ ի կապանս եւ ի տանջանս. եւ զամենայն ել եւ մուտ կացից եւ գնացից իմոց նորին կամաւ կալ եւ մնալ որքան ի մարմնի իմ, եւ թէ ստերիւրալ խեռոիցեմ ի սիրոյ նորին ծառայութենէ՝ ընդ ուխտադրուժ ուխտազանցսն կրիցեմ ըզդատապարտութիւնն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ[126]*:*

Կասկած չկայ, որ այս տողերն իսկապէս նախատեսուած էին ի տես Եղիազարի, սակայն փաստաթուղթը գրուած է ԺԷ-ԺԸ դարերի վստահագիր-երդմնագրերում հանդիպող ոճով[127]*:*

Ուստի այսուհետեւ այս գրութիւնը կանուանենք «երդմնագիր»:

Կարապետ եպս. Ամատունին, որ հանգամանօրէն անդրադարձել է այս գրութեանը[128]*, կարծում է, թէ այն գրուել է 1665 թ. մարտի 5-ին*[129]*: Սակայն Օնոփրիոսը պարզ նշում է, որ ժամանել է Երուսաղէմ 1665 թ. մարտի 5-ին, յանձնել իր բերած նամակը Եղիազարին, ապա մի քանի օր նրա մօտ մնացել՝ «առ նմա եղեալ աւուրբք ինչ...»*[130]*: Իսկ գրութիւնը շարադրել է, երբ ոմն Ղազար՝ «... առեալ հրաման յարքունուստ եւ եկեալ գողօրէն եմուտ ի սուրբ Աթոռն յԵրուսաղէմի, եւ զհին եւ զնոր արդիւնս եւ զինչս Սուրբ Տանն կողոպտեալ եւ ցրուեալ ընդ վայր ընդ վայր կորուսանելով...՝ զՍուրբ Տունն քակել եւ կործանել ջանայ, եւ զիւր ստապապատիր գործն յառաջացուցանել եւ հաստատել»*[131]*: Ամենայն հաւանականութեամբ, Օնոփրիոսի նկարագրած անցքերը, հետեւաբար՝ նաեւ «երդմնագիրը», վերաբերում են 1665 թ. մարտի կէսերից յետոյ ընկած միջոցին, երբ հակաեղիազարեան խմբակցութիւնն սկսեց հակահարուած հասցնել նորաստեղծ նրա գլուխ բերած Արեւմտահայոց կաթողիկոսութեանը:*

3. Ժողովականները

Կարկուտ Օնոփրիոսի համաձայն՝ 1664 թ. հոկտեմբերին՝ «ի տիրաշէն մայրաքաղաքն յԵրեւան մեծահանդէս ժողով եղեւ երջանկափառ վարդապետաց եւ արհիապատիւ եպիսկոպոսաց»: Ժողովի 27 մասնակիցները յիշուած են յականէ-յանուանէ[132]*: Մէկ տարի անց՝ 1665 թ. վերջին գումարուած ժողովի ընդունած (վերեւում մեր հրապարակած) փաստաթուղթը բացայայտում է մի խիստ ուշագրաւ*

փաստ. մէկ տարուայ ընթացքում Յակոբ Ջուղայեցին կարողացել էր հաշտուել իր նախկին հակառակորդների մեծ մասի հետ, որովհետեւ 1664 թ. ժողովին ներկայ 27 հոգուց 21-ը կամ 22-ը 1665 թ. վերջում կայացած ժողովին բացակայում էին: Նոյն անձերից ներկայ ենք գտնում միայն Յովհաննէս վարդապետ Մուղնեցուն, Ս. Նախավկայի առաջնորդ Միքայէլ վարդապետին, Ստեփաննոս վարդապետ Լեհացուն, Դաւիթ վարդապետին (որը յայտնի էր որպէս Մշեցի կամ պարզապէս Դաւիթ), Սուսիկ Յովհաննէս վարդապետին (սա, ամենայն հաւանականութեամբ, Կարբեցի կամ Ղափանցի Յովհաննէսն է) եւ Յոհան վարդապետ Շամբեցուն (վերջինիս մասնակցութիւնը թէական է, քանի որ 1665 թ. վերջին կայացած ժողովի փաստաթղթի մէջ «Շամպե» տառերը վերականգնել ենք ենթադրաբար[133]*):*

Սակայն հետաքրքրական է, որ այս երկու ժողովին էլ մասնակցել է ուղիղ 27 հոգի: 1665 թ. ժողովականների թիւը յաջողուել էր պահպանել՝ ներգրաւելով նոր մարդկանց՝ 8 աշխարհական, 13 կամ 14 հոգեւորական:

Նկատենք, որ 1650-60-ական թթ.՝ Մայր Աթոռի միաբանութիւնը ունեցել էր մօտ 50 վանական: 1653 թ. գրուած մի յիշատակարան յայտնում է, որ Մայր Աթոռում՝

կայաւորեալք են բազմութիւնք եղբարց կուսակրոնից իբրեւ յիսնեակ թուով. միշտ յԱստուածաշունչ գիրս պարապեալք եւ յար ի քն[ն]ութիւնս բնախօսական տառից կրթեալք[134]*:*

Այդ տարիներին Ս. Էջմիածնի միաբանութիւնը մտաւոր զօրեղ ներուժ ունէր եւ մեծ հեղինակութիւն էր վայելում: Հանրայայտ են Սիմէոն Ջուղայեցու, Առաքել Դաւրիժեցու, Ստեփաննոս Լեհացու, Ոսկան Երեւանցու անունները: Հարկ է նշել, որ իրենց գիտա-կրթական գործունէութեամբ փայլել են նաեւ ուրիշները: Այսպէս, թուարկելով Յակոբ Ջուղայեցու կաթողիկոսութեան տարիներին Մայր Աթոռի միաբանութեան անդամներից տասին, որոնցից 6-ը, մեր համեմատութեամբ, մասնակցել էր 1665-ի վերջում եղած ժողովին (Ստեփաննոս Լեհացին, Յովհաննէս Մուղնեցին, Միքայէլ, Մովսէս, Գաբրիէլ եւ Երեմիա վարդապետները), ժամանակակից Դաւիթ Բաղիշեցին գրում էր. «Սոքա ամենեքեան սիւնք Եկեղեցոյ եւ անօթք Հոգւոյն Սրբոյ, անյաղթ փիլիսոփայք»[135]*: Սրան ձայնակցում է մի այլ յիշատակագիր. «Ի հրահանգս իմաստասիրութեան կրթէին զանձինս իւրեանց, քանզի զայնու ժամանակաւ (1670) բազումք էին երեւելի վարդապետք քաջաբանք, բանաստեղծք, Աստուածային գրոց գիտունք եւ հմուտք»*[136]*:*

1665 թ. վերջում գումարուած ժողովի որոշումը խմբագրել է Մովսէս վարդապետ Բջնեցին («...գրեալ ի Մովսիսէ վարդապետէ Բջնեցոյ՝ համաձայնութեամբ սրբազան վարդապետաց եւ եպիսկոպոսաց...»), որը Արարատեան երկրի առաջնորդն էր առնուազն 1656-ից[137]*: 1666 թ. գրուած մի յիշատակարանի մէջ նրա մասին կարդում ենք. «Հրամանաւ մեծի քաջ հռետորի եւ անյաղթ փիլիսոփայի՝ Մովսէս հոգիացեալ ըաբունապետի, դիտապետի եւ արքեպիսկոպոսի Բջնւոյ մեծ նահանգի Արարատեանս երկրի»*[138]*: Մովսէսից էր նօտրգիրն ուսանել Պոլսի պատրիարք Եփրեմ վարդապետը (1684-1686, 1694-1698), որը 1695 թ. նրան յիշում է իբրեւ, քան «Աստուածաբանութեան ըաբունապետ»*[139]*: Յիշելով, որ Եփրեմ պատրիարքն «իբրեւ կաթոլիկութեան առաջին հալածիչ նկատուած է»*[140]*՝ թերեւս, կարելի է որոշ պատկերացում կազմել նաեւ*

© National Library of Armenia

նրա առաջին ուսուցչի՝ Հայ Եկեղեցու դաւանանքի պաշտպանութեան հարցում ունեցած կարծր դիրքորոշման մասին: Նոյն Մովսէս Բջնեցուց էր գրչագրութեան արուեստը սովորել նաեւ Ստեփաննոս Լեհացին[141]:

Ժողովի որոշման վերջնական խմբագրումն իր վրայ վերցնելով՝ Մովսէս Բջնեցին իր մեծ հեղինակութեամբ եւ իշխանութեամբ կարծես պատնէշում էր միւս ժողովականներին կաթողիկոսի հնարաւոր պատժամիջոցներից, որոնց վերաբերեալ փաստաթուղթը մտավախութիւն է արտայայտում: Հետաքրքիր է նաեւ այն, որ Մովսէս Բջնեցին չի մասնակցել Յակոբ կաթողիկոսի դէմ մէկ տարի առաջ՝ 1664 թ. հոկտեմբերին Երեւանում գումարուած ժողովին: Սա վկայում է, որ կաթողիկոսի աթոռակալ-փոխանորդի հարցն այնքան ցաւոտ էր, որ մէկ տարի առաջ իր լուծումը չստանալով (յայտնի է, որ Յակոբ Ջուղայեցին ցանկանում էր իրեն յաջորդ տեսնել Արդար մականուանեալ Իսահակ Մակուեցի եպիսկոպոսին)[142], ինքնին ի վիճակի էր դարձեալ ըմբոստացնելու Հայ Եկեղեցու բարձրագոյն հովիւներին, որոնցից էին ժողովին մասնակցած Ստեփաննոս վրդ. Լեհացին,[143] Միքայէլ վրդ. Շամբեցին[144], Մատթէոս վրդ. Ջուղայեցին[145], Պետրոս վրդ. Ագուլեցին[146], Յովհաննէս վրդ. Մուղնեցին (յաւանաբար, նա ամենատարէցն էր 1665 թ. վերջում գումարուած ժողովականների մէջ. դրանով ենք բացատրում ստորագրողների ցուցակի մէջ նրա անուան առաջինը դրուած լինելը)[147], Յովհաննավանքի առաջնորդ Յովհաննէս վրդ. Կարբեցին[148], Երնջակի Ս. Կարապետի առաջնորդ Եսայի վարդապետը[149], Սաղմոսավանքի առաջնորդ Գաբրիէլ վրդ. Կարբեցին[150], Էջմիածնի միաբան Երեմիա, Մինաս եւ Դաւիթ վարդապետները[151]:

Նշուած բոլոր գործիչները արքեպիսկոպոս ու եպիսկոպոս էին, իսկ վարդապետ տիտղոսով ստորագրում էին հայոց մէջ այդ ժամանակներում տարածուած սովորութեան համաձայն[152], երբ վարդապետութեան հեղինակութիւնը բարձրացել էր մինչեւ այնտեղ, որ 1658 թ. մի յիշատակագիր կարող էր ասել՝ «ի կաթուղիկոսութեանն սրբազանի Յակոբի Ջուղայացի վարդապետի»[153]: Ն. Մառը, հայ վարդապետութեան մասին խօսելիս[154], նկատում էր, որ «հին Հայ Եկեղեցու մէջ վարդապետների... հեղինակութիւնը հոգեւոր հարցերում շատ բարձր էր, երբեմն աւելի՝ քան եպիսկոպոսի եւ նոյնիսկ կաթողիկոսի հեղինակութիւնն էր»[155]: Հոգեւոր-կանոնական հարցերի նոյն այդ ոլորտին է պատկանում նաեւ վերեւում մեր հրապարակած փաստաթուղթը, ուստի վարդապետ ստորագրելը միանգամայն բնական ու սովորական պէտք է դիտել: Նմանապէս, օրինակ, 1652 թ. Երուսաղէմում կայացած՝ ԺԶ-ԺԸ դարերում հայոց. ամենախոշոր եկեղեցական ժողովներից մէկը (մասնակցում էին երկու կաթողիկոս, 18 վարդապետ, 8 եպիսկոպոս, 35 աբեղայ, 60-ից աւելի քահանայ) արձանագրող Մարտիրոս Ղրիմեցին՝ Էջմիածնի եւ Սսի կաթողիկոսներից յետոյ, նախ եւ առաջ թուարկում ու գովաբանում էր մասնակից տասնութ վարդապետներին, որոնց էլ պատկանում էր եկեղեցական կանոնները մեկնելու եւ փոփոխելու իրաւունքը[156], ու նոր միայն այն ութ «եպիսկոպոսացն, որ են ընդ սոցին»[157]: Այս ժողովին մասնակցած հոգեւորականների առաջնայնութեան հարցը նոյն տրամաբանութեամբ է լուծում նաեւ Ա. Դաւրիժեցին.

Տեառնս Փիլիպպոսի կամեցեալ գնալ յԵրուսաղէմ, որ եւ ելեալ գնաց բազում ամբոխիւ՝ (1) վարդապետօք (2) եւ եպիսկոպոսօք (3) եւ

քահանայիւք (4) եւ սպասաւորօք (համարակալումն իմն է՝ Ա.Ա.)[158]:

Պատմական այդ շրջանից առաջ անցնելով՝ նշենք, որ 1802 թ., մի նմանատիպ փաստաթուղթ՝ Դանիէլին կաթողիկոս ճանաչելու եւ Դաւթին մերժելու շրջաբերականն ստորագրելիս, առաջնայնութիւնը տրւում էր եպիսկոպոսներին, իսկ սրանցից շատերն էլ, անշուշտ ունենալով հանդերձ նաեւ վարդապետական իշխանութիւն, արդէն աւելորդ էին համարում իրենց նուիրապետական այդ աստիճանի գրանցումը, ինչը վարդապետութեան ինստիտուտի գահավէժ անկման պերճախօս վկայութիւն է[159]:

Ինչեւէ, 1665 թ. վերջին ընդունուած փաստաթղթի տակ՝ ժողովին մասնակից ութ աշխարհականներից առաջինն իր ստորագրութիւնը դրել է Զաքարիա Ագուլեցու եղբայր խօջայ Շմաւոնը: Վերջինս, շահի բարձր կարգադրութեամբ, 1658-1663 եւ 1664-1670 թթ. կառավարել է Երեւանի «զառաքիչանան» (փողերանոցը)՝ այդ պաշտօնում լինելով առաջին հայը[160], ու, թերեւս, նաեւ այդ տարիներին Երեւանի նահանգի հայ ամենաբարձրաստիճան պաշտօնեան: Նրա շրջապատից էին եւ միւս աշխարհականները. Սարգիս որագեղցին, օրինակ, Երեւանի «զառաքիչաշին» էր 1663 եւ 1674-1679 թթ.[161]: Յակոբջան Երեւանցին, իրականում, Սպահանում երեւանցիների համայնքի («թաղի») աւագն էր, որին 1656 թ. տեղի ունեցած իրադարձութիւնների առիթով յիշում է Առաքել Դաւրիժեցին[162]: Սպահանի «Երեւան» թաղից էր նաեւ մելիք-խօջայ Գասպար Երեւանցին[163] եւ Թաթոս երէց Երեւանցին[164]: Նորջուղայեցիներին (որոնցից էր, ի դէպ, նաեւ հեղինակաւոր Իսահակ վարդապետ Շախսաբանցին[165]) այս ժողովին ներկայ գտնուելու փաստը մէկ անգամ եւս վկայում է, որ 1660-ականներին, առանց նրանց մասնակցութեան, ազգային կեանքում դժուար էր որեւէ հիմնախնդիր լուծել[166]: Այս խօջաները հակայակոբեան ժողովին, ամենայն հաւանականութեամբ, միացել էին Էջմիածնի կաթողիկոսի հետ ունեցած դրամական ինչ-ինչ հաշիւների մղումով[167]: Թւում է՝ այսպիսի վտանգաւոր բախումների ծագումը հետագայում կանխելու մտահոգութեամբ է, որ 1677 թ. երկրորդ կէսին, մահից ընդամէնը երեք տարի առաջ, Յակոբ Ջուղայեցին առաջարկում էր Էջմիածնի ֆինանսա-տնտեսական գործերը յանձնել «դոլվաթաւոր երեսփոխանաց» ձեռնհաս կառավարմանը՝ հաստատելով սոյն կարգը յայնժամ, «յերբ կաթողիկոս լինիք օրհնելոյ»[168]:

4. 1665 թ. հակայակոբեան ժողովի պահանջների յարաբերական մեղմացումը եւ դրա դրդապատճառները

Ամենահետաքրքրականը, սակայն, հետեւեալն է. 1665 թ. վերջին Էջմիածնում հաւաքուածներն այլեւս չէին մեղադրում Յակոբ կաթողիկոսին այն 17 մեղքերի մէջ, որոնք մանրամասն շարադրուած են Օնոփրիոսի երդմնագրում եւ ներկայացնում են 1664 թ. հոկտեմբերին Երեւանում կայացած ժողովի վճիռը: Այդ մեղադրանքներից կրկնւում է միայն համար 3-ը՝ փոխանորդ-աթոռակալ ձեռնադրելու կաթողիկոսի ցանկութիւնը եւ այս առթիւ ժողովականների ունեցած բուռն անհամաձայնութիւնն ու ընդդիմութիւնը: Նաեւ՝ ի տարբերութիւն 1664-ի հոկտեմբերեան ժողովի, չէր դրւում Յակոբ Ջուղայեցուն անմիջապէս որեւէ մէկով փոխարինելու խնդիրը: Արդ, ո՞րն էր մէկ տարուայ ընթացքում Յակոբ կաթողիկոսի նկատմամբ տրամադրութիւնների այսպիսի մեղմացման, նրանից դժգոհ

© National Library of Armenia

շատերի եւ քաշուելու եւ ժողովին չմասնակցելու պատճառը:

Այս հարցին պատասխանելու համար նախ պիտի նկատել, որ 1664 թ. հոկտեմբերին Երեւանում գումարուած եկեղեցական գործիչները խնդրում էին «սուրբ Երուսաղէմի աթոռակալ» Եղիազար Այնթափցուն, որպէսզի նա «ի ցաւակցութիւն աղճատանաց Սուրբ Աթոռոյն Էջմիածնայ եւ բոլոր Տանս Հայոց»՝ իր ցանկացած վայրում գումարի եկեղեցական մի մեծ ժողով.

զամենեսեան զնոսա առ ինքն կոչելով՝ ըստցի դատաւոր ի միջի նոցա, եւ արասցէ դատ իրաւամբ եւ արդարութեամբ ըստ կանոնաց հարցն սրբոց եւ նախնեաց մերոց՝ ի մէջ մեր ամենեցուն եւ ի մէջ կաթուղիկոսի նարդեան ժամուս՝ Տեառն Յակոբայ, որ ըստի յԱթոռ Սուրբ Էջմիածնի[169]*:*

Այս ծրագիրն անպայման նախատեսում էր նաեւ այդ գումարուելիք ժողովի ժամանակ Մայր Աթոռի գահակալին՝ Յակոբ Ջուղայեցու գահընկէց անելը եւ նրա փոխարէն Եղիազարին կաթողիկոսացնելը: Առ այս վերն արդէն մէջբերեցինք նաեւ Զաքարիա Քանաքեռցու ուղղակի վկայութիւնը («ահա առաքեցաք առ քեզ զՕնոփրիոս վարդապետ, զի զքեզ փառաւորապէս բերցէ ի Սուրբ Աթոռս»): Սակայն յստակ է նաեւ այն, որ ժողովի անցկացման պահին Արեւմտահայ կաթողիկոսութեան հիմնադրման մասին լուրը Արարատեան երկիր դեռ չէր հասել: Այս մասին է վկայում նաեւ Օնոփրիոսը, երբ ասում է, թէ 1665 թ. մարտի 5-ին Երուսաղէմ ժամանելով, իր իսկ համար անակնկալ կերպով՝ «գտի զԵղիազար վարդապետն կաթուղիկոս եւ պատրիարք օծեալ ի վերայ նոյն Սուրբ Աթոռոյն, ընդ որ կարի յոյժ ուրախացեալ»[170]*: Յ. Անասեանի մանրազնին քննութեան համաձայն՝ Եղիազարը օծուել էր կաթողիկոս 1664 թ. հոկտեմբերի 6/15-ից մինչեւ նոյեմբերի վերջն ընկած միջոցին*[171]*, իսկ ըստ Օնոփրիոսի երդմնագրի՝ 1665 թ. մարտի 5-ից առաջ «ամսօք կանխօք», որ միանգամայն համընկնում է Անասեանի հաշուարկի հետ*[172]*:*

Գիտենք նաեւ, որ Եղիազարի կաթողիկոսանալուց յետոյ նրա նախկին համախոհներից շատերը անցել էին Յակոբ Ջուղայեցու կողմը[173]*: Արդ, վերը շարադրուած փաստերի համադրումից մակաբերում ենք, որ Էջմիածնի միաբանութիւնը, բնականօրէն, ամենից շատ պիտի հակառակուէր Եղիազար Այնթափցուն ու նորաստեղծ պայմաններում Մայր Աթոռի երերուն դիրքերն էլ աւելի չթուլացնելու համար՝ համաձայնութեան գար Յակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի հետ: Այս է փաստում նաեւ 1665 թ. յունուարի սկզբին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Եղիազարի գործի խափանման նպատակով տեղի ունեցած նոր խորհրդաժողովը. «ժողովեցան ամենայն առաջնորդք վանորէից, եպիսկոպոսք եւ վարդապետք, եւ հարք, եւ անապատականք, եւ աշխարհական արք երեւելիք, եւ մեծաւ փառօք ուղարկեցին զկաթուղիկոսն ի Կոստանդնուպոլիս»*[174]*: Ս. Էջմիածնի շահերի պաշտպանութեան նոյն նպատակով էլ Եղիազարի նախկին գաղափարակիցներ Աստուածատուր Տարօնեցին եւ Մարտիրոս Ղրիմեցին, ինչպէս նկատել է Յ. Անասեանը, շրջւում են եւ դառնում նրա կատաղի հակառակորդները*[175]*:*

Այսպիսով, Եղիազարի՝ հակաթոռ կաթողիկոս օծումով՝ Յակոբ Դ Ջուղայեցու եւ Էջմիածնի միաբանութեան միջեւ ըստ երեւոյթին վաղուց ի վեր սկիզբ առած (ու դեռեւս հետագայ մանրամասն հետազօտութեան կարօտ) սուր առճակատումը[176] *մեծապէս թուլանում էր, սակայն չէր վերանում իսպառ, որ ցոյց է տալիս*

1665 թ. վերջին Էջմիածնում գումարուած նոր ժողովը: Միաժամանակ, այս վերջին ժողովին ստիպուած էին հաշուի նստելու նորահաս անցանկալի իրողութիւնների հետ: Այս առումով շատ բնորոշ է վաւերագրում գործածուող «Արեւելեան կողմանց Աթոռ... որ ընդ տէրութեամբ պարսկական արքայից արքայի» արտայայտութիւնը, որ գալիս է փաստելու 1665 թ. վերջին Էջմիածնի ակամայ հաշտուածութիւնը՝ մէկ տարի առաջ Եղիազար Այնթապցու հիմնած Արեւմտահայ կաթողիկոսութեան գոյութեան հետ[177]*:*

5. 1664 թ. ժողովը եւ Արեւմտահայոց կաթողիկոսութեան ստեղծումը

Երեւանում կայացած հակայակոբեան «մեծահանդէս ժողովի» գումարումը հէնց Եղիազար Այնթափցու կաթողիկոսանալու նախօրէին՝ 1664 թ. հոկտեմբերին, բոլորովին էլ պատահական չէր: Ըստ Զամչեանի՝ կաթողիկոսանալու սուլթանական հրովարտակը Եղիազարը ձեռք էր բերել դեռեւս 1663 թ. եւ այդ փաստը գաղտնի էր պահել ու միայն որոշ ժամանակ անց, Հալէպից, այդ մասին տեղեկացրել Կոստանդնուպոլսում գտնուող Խաչատուր Գաղատացուն: Վերջինս, ըստ Զամչեանի, դարձեալ 1663 թ. ընթացքում՝ «կոչեաց ի ծածուկ զոմանս յերեւելեացն Հայոց եւ ի զգօնամիտ արանց, ընդ որս էր եւ Երեմիայ Զէլէպի Քեօմիւրճեանց. եւ խորհուրդ արար ընդ նոսա վասն իրացս այսոցիկ»: Կանչուածներն ընդդիմանում են Թուրքիոյ Հայոց կաթողիկոսութեան գաղափարին.

Իսկ նոքա իբրեւ լուան, ափշեցան եւ զահի հարան, յայտնի տեսանելով՝ թէ ո՛րպիսի պառակտումն հանդերձեալ է լինել ի մէջ ազգին, եւ պատառումն անկարկատելի...: Վասնորոյ բազում աղաչանօք հաւանեցուցին զԽաչատուր մի վաղվաղել, զի թերեւս գտնեն հնարս ինչ (ընդգծումն՝ Ա.Ա.)[178]*:*

Այս հնարներից մէկը Երեմիայ Զէլէպիին շտապ Հալէպ ուղարկելն էր՝ Եղիազարին տարհամոզելու նպատակով.

զի թերեւս կարասցէ նա իմաստութեամբ իւրով փոխել զմիտս նորա: [1664, ՌԾԺԳ] Հասեալ Երեմիայ ի Բերիա՝ յանդիման եղեւ Եղիազարու եւ խօսեցաւ ընդ նմա բազում ինչ ի բազում աւուրս, այլ ինչ ոչ օգտեցաւ...: Եւ Երեմիայ Զէլէպի անդոյս լեալ ի փոխելոյ զմիտս նորա՝ ծանոյց գրով ի Կոստանդնուպօլիս: Յետ սակաւուց եկն եւ Խաչատուր կաթուղիկոս Սսոյ ի Կոստանդնուպօլսոյ ի Բերիա. եւ անդ վերստին խորհեալ ընդ Եղիազարու... ձեռնադրեալ էօծ զնա կաթուղիկոս (ընդգծումն՝ Ա.Ա.)[179]*:*

Այսպիսով, նոր կաթողիկոսութիւն հիմնելու Եղիազարի մտադրութիւնը յայտնի է դարձել այդ գաղափարի հակառակորդներին 1663 թ. վերջերին կամ ամենաուշը՝ 1664 թ. սկզբին, եւ նրանք դրա դէմն առնելու փորձեր են արել ու, նախ եւ առաջ, յաջողել են որոշ ժամանակ շահել: Զամչեանի այս տուեալների համադրումից կարելի է հետեւեցնել, որ Պոլիս-Հալէպ երթեւեկը ու այդ ընթացքում եղած խորհրդաւորութիւնները առնուազն մի քանի ամսուայ միջոց էին խլել: Այս ընթացքում՝ Եղիազարին իր ծրագրից ետ պահելու համար, բացի Երեմիային Հալէպ ուղարկելուց, անշուշտ, դիմած պիտի լինէին այլ միջոցների եւս: Անկասկած, սպառնալիքի մասին շտապ տեղեկացուել են Էջմիածնի կաթողիկոսն ու միաբանները: Ընդ որում, եթէ Երեմիա Քեօմիւրճեանը եւ նրա համախոհ պոլսեցի այլ երեւելիները կարծում էին, «թէ հաւան է բովանդակ ազգն ընդ Յակոբ կաթուղիկոս Էջմիածնի եւ սիրով կապեալ ընդ նմա վասն բարելաւութեան նորա եւ չէր ուրուք գտեալ ի նմա արատս ինչ»[180]*, ապա մեր ձեռքի տակ եղած վաւերական նիւթերը ասում են, որ այդ նոյն ժամանակ Էջմիածնի միաբանութեան եւ Արեւելահայաստանի հոգեւոր*

© National Library of Armenia

ու աշխարհիկ առաջնորդներից շատերը խիստ լարուած յարաբերութիւններ ունէին կաթողիկոսի հետ, եւ, բնական է, որ նրան էին մեղադրելու Հայ կեանքին սպառնացող աննախադէպ ծանր դրութեան՝ Հայաստանեայց Եկեղեցու հնարաւոր «անկարկատելի պատառման» մէջ: Ահաւասիկ, այսպիսի հանգամանքներում է, որ 1664 թ. հոկտեմբերին Երեւանում փորձել են հասունացող վտանգը կանխել Յակոբին գահազրկելով եւ նրա փոխարէն Եղիազարին կաթողիկոսացնելով՝ մի բան, որ արուեց Յակոբի մահից յետոյ միայն: Ընդ սմին, նշելի է, որ Եղիազարին Էջմիածին հրաւիրելու գաղափարը առաջին անգամ ծագել էր 1664 եւ ո՛չ 1681 թ.[181]:

Ըստ Զ. Քանաքեռցու՝ Երեւանի ժողովի օրերին Յակոբ կաթողիկոսը Երուսաղէմի ճանապարհին էր: Իր ու իր կողմից աթոռակալ նշանակուած Իսահակ Մակուեցու դէմ սկսուած խլրտումների լուրը հասաւ կաթողիկոսին Թոխաթում եւ ստիպեց նրան շտապ Մայր Աթոռ վերադառնալ[182]: Նրա Երուսաղէմ ուղեւորուելն ինչ-որ կապ ունէր ծնունդ առնող նոր՝ «Արեւմտահայոց» կաթողիկոսութեան ու Եղիազարի հետ, քանզի, ինչպէս շատ աղօտ ասում է Քանաքեռցին՝ «Եղիազարն իբրեւ լուաւ զդառնալն կաթուղիկոսին՝ քամահանս վարկաւ ինքեան, եւ ի խոր խոցեցաւ ի սրտի իւրում»[183]:

Ի մի բերենք. Եղիազարի ընթացքը կանխելուն միտուած բոլորովին տարբեր ծրագրերով են առաջնորդուել, մի կողմից՝ Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսն ու իր մերձաւոր եկեղեցականները, միւս կողմից՝ Էջմիածնի միաբանների զգալի մասը, արեւելահայ հոգեւոր եւ աշխարհիկ նշանաւոր մի շարք գործիչներ: Ինչ խօսք, որ հակաեղիազարեան գործողութիւնների անարդիւնաւետութեանը է ամենից շատ նպաստել է 1664-1665 թթ. արձանագրուած այս ներհակութիւնը: Այս առումով ուշագրաւ է, որ Զաքարեայ Քանաքեռցին փորձում է բացատրել Արեւմտահայ կաթողիկոսութեան հիմնումը հէնց Յակոբ կաթողիկոսի ծրագրերի խանգարումով ու նրա կէս ճանապարհից վերադարձով. «վասն որոյ [Եղիազար Այնթափցին] ժողովեաց զամենայն Եպիսկոպոսունս յայնմ նահանգի ի Բերիա քաղաք՝ որ է Հալապ, եւ օրհնեցաւ կաթուղիկոս ինքնագլուխ»[184]: Իսկ արդիւնքում՝ Հայաստանեայց Եկեղեցին ունեցաւ անուղղելի վտանգներով յղի 16-ամեայ մի շրջան: Բարեբախտաբար, նոյն այդ գործիչներն էին, որ տարիներ անց յաջողեցին կացութիւնը բերել ի բնական շրջանս իւր[185]:

6. Կոնկլաւի կանոնները եւ 1441 թ. Էջմիածնի կաթողիկոսի ընտրութիւնը

1665 թ. վերջին կայացած խորհրդաժողովի որոշումը՝ Յակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսին ուղղուած վերջնագիր է: Այն ընդամէնը մէկ պահանջ ունի. Ամենայն Հայոց կաթողիկոսը իրաւասու չէ իր միաձնեայ կամքով որոշել յաջորդ կաթողիկոսի ով լինելը, այլ այս հարցում պարտաւոր է առաջնորդուել քրիստոնեայ ազգերի մէջ ընդունուած աւանդութեամբ, որոնք հոգեւոր գերագոյն հովիւ ընտրելու չորս «եղանակ» են ճանաչում: Նորից ընթերցենք մեզ հետաքրքրող հատուածը.

...զի կաթուղիկոս ոք մի՛ իշխեսցէ ըստ կամաց իւրոց նստուցանել զով ոք ախորժէ ի տեղի իւր, եթէ ոչ, ըստ ազգաց քրիստոնէից հանրականաց աւանդութեամբ՝ չորիւք յեղանակօք, այսինքն.

(1) կամ վիճակաւ իմիք, որպէս հռովմայեցւոց է՛ սովորութիւն.

(2) կամ ընտրութեամբ հասարակաց, որպէս առաջնոցն եւ յետնոցն եւս (այստեղ խօսքը

վերաբերում է ազգային-եկեղեցական համաժողովին՝ Ա.Ա.)

(3) եւ կամ ի հաւանութեանց վեհագունից բազմաց եւ սրբազան արանց (այսինքն՝ ազգի հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդների համաձայնութեամբ, որ, ինչպէս վերն արդէն խօսեցինք՝ կարող էր իրականացուել նաեւ հեռակայ կարգով՝ Ա.Ա.):

(4) Թողում ասել զչորրորդն, որ է վերին յայտնութենէն, որ ա՛յժմ իսկ դադարեալ է եւ լռեալ՝ վասն անարժանութեան մերում:

Ժէ դարի երկրորդ կէսին Յակոբ Ջուղայեցուն ու Նահապետ Եդեսացուն ուղղուող միեւնոյն այս պահանջը միանգամայն համահունչ էր հայոց նախնեաց օրէնսդրութեանը: Դեռեւս 1265 թ. Սմբատ Սպարապետն իր դատաստանագրքում յատուկ նշում էր. «կաթողիկոսն իրաւունք չունի ինքնակամօրէն որեւէ մէկին կաթողիկոս ձեռնադրելու, այլ կարող է որեւէ մէկին ձեռնադրել կաթողիկոս միմիայն բազմաց ընտրութեամբ»[186]: Նոյն դրոյթը հպանցիկ նշել է նաեւ Մխիթար Գոշը. «...ի բազմացն ընտրութենէն... ձեռնադրել կաթողիկոս»[187]:

Ուշադրութիւն է գրաւում յատկապէս 1-ին կէտը, ուր ասուած է, թէ Ամենայն Հայոց կաթողիկոսը կարող է ընտրուել նաեւ «վիճակաւ իմիք, որպէս հռովմայեցւոց է՛ սովորութիւն»: Խօսքը վերաբերում է մասնակի ձեւափոխումներով մինչեւ այսօր գործող Հռոմի պապերի ընտրութեան կարգին, որ սահմանուել է 1274 թ. Լիոնի Բ խորհրդաժողովում՝ Գրիգոր Ժ պապի «Ubi periculum» («Որտե՞ղ է վտանգը») կոնդակով: Այս կոնդակի գլխաւոր դրոյթներն հետեւեալն են. պապի մահից յետոյ կարդինալները գումարում են ընտրական ժողով մի յատուկ շենքի՝ կոնկլաւի (այսինքն՝ փակ դահլիճի) մէջ, որտեղից նրանք դուրս գալու իրաւունք չունեն այնքան ժամանակ, մինչեւ որ՝ փակ գաղտնի քուէարկութեամբ, չընտրեն իրենցից մէկին Հռոմի նոր պապ (ընտրական արարողութիւնն ունի բազմաթիւ հետաքրքրական մանրամասնութիւններ, որոնք, սակայն, մեր քննութեան համար էական չեն)[188]:

Արդ, հարց է առաջանում. եթէ Ժէ դարի հայ երեւելի վարդապետները, կաթոլիկ եկեղեցու հետ սուր հակամարտութեան մի ժամանակաշրջանում, ընդունելի են համարել կոնկլաւի կանոնների կիրառումը նաեւ մեզանում՝ արդէօ՞ք դրա համար նրանք չեն ունեցել որոշակի նախադէպ հէնց հայոց պատմութեան մէջ:

Կարծում ենք՝ ունեցել են. ստորեւ առաջարկուող վերլուծութեան արդիւնքներով, կոնկլաւի գլխաւոր պահանջների համաձայն է ընտրուել ո՛չ այլ ոք, քան 1441 թ. Էջմիածնում վերահաստատուած Մայր Աթոռի առաջին գահակալ Կիրակոս Վիրապեցին:

Որո՞նք են մեր փաստարկները:

Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց կաթողիկոսութեան վերահաստատուելը առաւելագոյնս կարեւորելու միտումով, Աստծոյ ուղղակի միջամտութիւնը Կիրակոս Վիրապեցու կաթողիկոսանալուն (այսինքն՝ վերը նշուած չորրորդ կանոնի կիրառումը) շեշտուել է ինչպէս բուն ընտրութեան պահին, այնպէս էլ հետագայում: Այդպէս է ներկայացնում 1441 թ. ընտրութիւնները նաեւ ականատէս պատմիչ Թովմա Մեծոփեցին, բազմիցս ասելով, որ այդ ընտրութիւնները կատարուել են՝

«...ազդեցութեամբ Հոգւոյն Սրբոյ, հրաշագործութեամբ բարերարին Աստուծոյ...»,

«...ընտրութեամբ Հոգւոյն Սրբոյ, տեսլեամբ գիշերոյ եւ յանուրջս երազոյ...»,

«[նախնական ընտրութիւնների անյաջողութիւնից յետոյ]...ապաւինեցաք յԱստուած եւ միաբանութեամբ սկսաք աղօթիք եւ պաղա-

© National Library of Armenia

տանօք խնդրել յԱստուծոյ տալ մեզ առաջնորդ ըստ կամաց իւրոց»,

«[ընտրութիւնից յետոյ] Փառք Քեզ ամենասուրբ Երրորդութիւն Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, զի կատարեցեր զխնդրուածս հայկազեան սեռի... Եւ մեք զոր ինչ խնդրեցաք, եւ առաք յԱստուծոյ ի Հօրէ»[189]:

Թովմա Մեծոփեցու վարքի հեղինակ ու նրա աշակերտ Կիրակոս Բանասէր Ռշտունեցին[190], որ նոյնպէս խնդրոյ առարկայ անցքերի մասնակից էր[191], հետեւելով իր ուսուցչին, Կիրակոս Վիրապեցու ընտրութեան մասին գրում էր.

[Թովմա Մեծոփեցին] հանապազ խնդրէր յԱստուծոյ զի Էջմիածինն վերստին նորոգեսցի, կաթողիկոս եւ թագաւոր նստցի յԷջմիածինն: Եւ Աստուած... կատարեաց զխնդրուածս նորա եւ ելից զփափագ սրտի նորա. եւ հրաշիւք եւ յայտնութեամբ երազոյ եւ սքանչելեօք, աւետարանին վկայութեամբ յայտնեաց զսքանչելի այրն Աստուծոյ... զսուրբ հայրապետն զՏէր Կիրակոս...[192]:

1442 թ. Արարատեան երկրի Սերկեւիլ գիւղում Ոհաննէս Թմոքուեցի գրիչը նմանապէս արձանագրում էր. «...ընդրեցին տեսլեամբ եւ կամաւք ամենասուրբ Երրորդութեան՝ ...որպէս հայրապետս մեր՝ Հոգեւոր Տէր Կիրակոս կաթողիկոսս...»[193]:

Այսուհանդերձ, երկրային ընտրութիւնը նախատեսում էր որոշակի գործողութիւններ: Ըստ Թովմա Մեծոփեցու՝ ժողովականներն՝ «արկին վիճակ ի սուրբ աւետարանն, եւ ել վիճակն Կիրակոս հայրապետին»[194]: Օրմանեանը տարակուսած գրում էր, թէ ընտրական այս ձեւը «քիչ մը տարօրինակ կերեւի..., վասնզի աւետարանին մէջ Կիրակոսի անունը գտնել հնար չէր: Ուստի, - եզրակացնում էր նա, - պէտք է ըսել, թէ Կիրակոսի վրայ համաձայնութիւն գոյացնելէն ետքը, աւետարանի վիճակին ալ դիմած են, եւ աւետարանը բացած ատեննին նպատակայարմար տունի մը հանդիպած եւ այս կերպով կատարած ընտրութիւնին վերնային կամքին համաձայն ճանչցած են»[195]:

Սակայն, 1665 թ. վերջին Յակոբ Ջուղայեցուն հասցէագրուած վերջնագրում վիճակ բառն ունի բոլորովին այլ՝ քուէաթերթիկներ գործածելու իմաստ՝ «վիճակաւ իմիք, որպէս հռովմայեցւոց է՛ սովորութիւն»: Անտարակոյս, մեր գիտնական վարդապետները քաջատեղեակ են եղել Հռոմի պապի ընտրակարգի ընդհանուր դրոյթներին: 1664 թ. հոկտեմբերին գրուած՝ Յակոբ Ջուղայեցուն ամբաստանող մէկ այլ վաւերագրում վիճակ-ը գործածուած է նոյնանման իմաստով.

... զի ոչ ըստ կանոնաց սրբոց եւ սահմանի ազգաց կամի վիճակաւ եւ հաւանութեամբ ամենայն եկեղեցւոյն ընտրել զյաջորդ Սուրբ Աթոռոյն, այլ՝ ինքնահաւան անձնայաճութեամբ զծերագոյնսն յետս ընկրկեալ եւ զեսն իմն ունակացեալ, զիւրային մակաբարոյսն յառաջացուցանէ[196]:

Այս դէպքում «վիճակաւ... ամենայն եկեղեցւոյն ընտրելը» կարող է նշանակել միայն ընտրական թղթատար ինչ-որ գործողութիւն, ինչպիսին էին վերոյիշեալ մահզարները ու նաեւ՝ անմիջական գրաւոր քուէարկութիւնը:

Հետեւաբար, Թովմա Մեծոփեցու՝ «արկին վիճակ ի սուրբ աւետարանն, եւ ել վիճակն Կիրակոս հայրապետին» հաղորդումը նշանակում է, որ Կիրակոս Ա Վիրապեցի հայրապետն ընտրուել է փակ գաղտնի քուէարկութեան մի ինչ-որ արարողակարգով, որի վերջում նրա անունով ժողովականների լրացրած թերթիկները լցուել են Աւետարանի վրայ: Դատելով անցքերի ընթացքից՝ վերապահութիւն պէտք է անել միայն ընտրութեան իրական գաղտնիութեան աստիճանի առթիւ:

1441 թ. պատմական ընտրութիւններն ունեն կոնկլաւի հետ ուրիշ նմանու-

թիւններ եւս, որոնք դժուար թէ բոլորը միասին սովորական զուգադիպութիւն լինեն:

1. Կաթողիկոս ընտրուեց ներկայ ժողովականներից մէկը, որ կոնկլաւի հիմնական կանոններից է:

2. Թէեւ, ըստ Մեծոփեցու եւ այլոց, ընտրութեանն այս կամ այն կերպ իրենց մասնակցութիւնն են բերել բազմաթիւ աշխարհականներ՝ «ազատք եւ որդիք ազատաց, ձեռնաւորք եւ տանուտէրք»[197], «սրբասէր ազտիք եւ ժողովուրդք»[198], որ եւ թոյլ է տուել Օրմանեանին խօսելու «ընդհանուր ազգային ժողովի» մասին՝ ընտրական ձայնի իրաւունքով օժտուած պիտի լինէին ոչ բոլորը, ինչպէս կարծում էր Օրմանեանը[199], անգամ ոչ բոլոր հոգեւորականները, որոնց թիւը հասնում էր 300-ի[200], այլ, ամենայն հաւանականութեամբ՝ միայն վարդապետներն ու եպիսկոպոսները, ինչպէս որ կոնկլաւում՝ միայն կարդինալները: Այսպէս ասելու համար նկատի ունէնք, նախ, Մեծոփեցու մի առիթով արած յստակ նկատողութիւնը. «զժողովս մեր...՝ վարդապետք եւ եպիսկոպոսք ի մի միաբանութիւն»[201]: Այս դիտողութիւնը բոլորովին անկախաբար կրկնուած է 1441-ի դեկտեմբերին կամ 1442-ին Վանում՝ Կարապետ երէցի գրած յիշատակարանի մէջ՝ «յամի ՊՂԱ թուականութեանս Հայոց... եղեւ ժողով եպիսկոպոսաց եւ վարդապետաց ի մայրաքաղաքն ի Վաղարշապատ... եւ եդին զՏէր Կիրակոսն յԷջմիածին կաթողիկոս Ամենայն Հայոց...»[202]: Զամչեանը՝ անյայտ ինչ-որ աղբիւր օգտագործելով, եւս ծանուցում է 1441 թ. ընտրութիւններում եպիսկոպոսների եւ վարդապետների ունեցած վճռորոշ ձայնի մասին.

Սմին իրի գրեցին եպիսկոպոսք եւ վարդապետք առ Գրիգոր Մուսաբեկեանց, եւ հրաւիրեցին գալ յԷջմիածին... Այլ իբրեւ չէառ նա յանձն գալ անդր, անուհետեւ խորհեցան առաջնորդք ազգին (իմա նոյն եպիսկոպոսներն ու վարդապետները՝ Ա.Ա.) մեծ ժողով գումարել յԷջմիածին... (ընդգծումներն՝ իմն են, Ա. Ա.)[203]:

Երկրորդ. եթէ ընդունելու լինէինք, որ ընտրական ձայնով օժտուած են եղել նաեւ աշխարհականները, ապա Մեծոփեցու շարադրանքից անպայման պիտի եզրակացնէինք, որ կանայք նոյնպէս քուէարկողների թւում են եղել, քանզի բացի հոգեւորականներից, ժողովին մասնակցում էին «ազատք եւ որդիք ազատաց, ձեռնաւորք եւ տանուտէրք, եւ անթիւ եւ անհամար բազմութիւն ժողովրդեան՝ արանց եւ կանանց»[204]: Մինչդէռ Հայոց դատաստանագրքերից յայտնի է, որ ուշ միջնադարում հայ կնոջ իրաւունքները, մասամբ, նաեւ մուսուլմանական օրէնքի՝ շարիաթի ազդեցութեամբ, խիստ սահմանափակ էին. մասնաւորապէս, կինը զրկուած էր անգամ դատարանում վկայ լինելու իրաւունքից[205]: Հետեւաբար, աշխարհականների մասնակցութիւնը 1441 թ. կաթողիկոսական ընտրութիւններին սահմանափակուել է (ա) նիւթական եւ բարոյական աջակցութեամբ, (բ) ընտրութիւնների արդիւնքին, ինչպիսին էլ որ այն լինէր՝ հաւանութիւն տալով: Այլ կերպ ասած՝ նրանք բոլորը միասին՝ տղամարդ եւ կին, հարուստ եւ աղքատ, իրօք, մասնակից են եղել ընտրութիւններին, բայց ոչ ընտրելու, այլ ընտրութիւնները ձեւականօրէն «հաստատելու» իրաւունքով, որ նոյնպէս շատ կարեւոր էր, յատկապէս՝ ժողովին համազգային բնոյթ հաղորդելու իր գործողութեամբ[206]: Իսկ ընտրելու ձայն ունեցել են, ամենայն հաւանականութեամբ, Մեծոփեցու՝ յականէ-յանուանէ յիշատակած 31 վարդապետներն ու եպիսկոպոսները եւ դուցէ հանրաճանաչ միայնակեացներից ու վանահայրերից էլի ոմանք: Սա հաստատում է նաեւ Յակոբ կաթ. Ջուղա-

© National Library of Armenia

յեցին, որը իր «Պատմութիւն կաթողիկոսաց» մեզ չհասած երկում գրել է՝ «վարդապետն Թումայ Մեծոփեցին արար ժողով եպիսկոպոսաց, վարդապետաց եւ գիտնական արանց»[207]*:*

1441 թ. Էջմիածնի ժողովում ընտրողների մէջ պէտք է հաշուել նաեւ այս ժողովին «թղթով միաբանեալ» այն 20 վարդապետներին ու եպիսկոպոսներին, որոնք, այս կամ այն պատճառով ներկայ չլինելով, նախապէս իրենց համաձայնութիւնն էին յայտնել կայացուելիք որեւէ ընտրութեանը[208]*: Այս հինգ տասնեակից անցնող քուէարկուների թիւն էլ հէնց ամենից աւելի ընդունելին ու իրականն է:*

3. Կոնկլաւում սկզբից անցկացւում են «փորձնական» ընտրութիւններ, որոնց ընթացքում ճշտւում է տարբեր կուսակցութիւնների փոխադարձ վերաբերմունքը եւ ուժերի յարաբերակցութիւնը[209]*: 1441 թ. Էջմիածնում արուել է նոյնը. ըստ Մեծոփեցու, սկզբում «բազումք ի յեղբարցն յառաջ կոչեցաք գալ ի յառաջնորդութիւն Թորգոմական գրոհիս, եւ ոչ կամեցան բառնալ զծանրութիւն դառնութեան բարձրագոյն աստիճանին»*[210]*: Օրմանեանը, մրցակից կուսակցութիւններն ի յայտ բերելով, մանրամասն մեկնաբանում է այս նախադասութիւնը եւ գալիս այն ճիշտ եզրակացութեան, որ առաջ կոչուածների ետ քաշուելը ոչ թէ «անկեղծ խոնարհամտութիւն էր», այլ «մրցակիցների մէջ մղուած խուլ պայքարի» հետեւանք*[211]*:*

4. Կոնկլաւի կանոններով, առանց նորընտիրի համաձայնութեան, նա չի կարող պապ հռչակուել: Մեծոփեցին յատուկ շեշտում է Կիրակոսի հնազանդութիւնը. «Եւ մեք հիացեալ զարմացաք զհնազանդութիւն առն Աստուծոյ... զի կարի անհնազանդ բարս ունէր եւ ատէր զփառս երկրաւորս»[212]*: Պէտք է ասել, սակայն, որ այս կանոնը սովորական է նաեւ Հայաստանեայց Եկեղեցու համար:*

5. Մեծոփեցին յիշատակում է նաեւ, որ Կիրակոսն, ընտրութիւնից անմիջապէս յետոյ «եկեալ կանգնեցաւ ի մէջ ահագին ատենին»[213]*: Կոնկլաւի կանոնների համաձայն եւս՝ նորընտիր պապը դեռ մինչեւ գահակալութեան հանդէսը յայտնւում է շէնքի առջեւ հաւաքուած ամբոխին:*

6. 1441 թ. Վաղարշապատում կայացած ընտրութիւնների տեւողութիւնը:

Կ. Կոստանեանցն սխալւում է, կարծելով, թէ ժողովը տեւել է «եթէ ոչ ամիսներ, գէթ մի քանի շաբաթ», որի ընթացքում իբր բանակցութիւններ են եղել Գրիգոր Թ Մուսաբէկեանց կաթողիկոսի հետ[214]*: Այնինչ Թովմա Մեծոփեցին այս հարցը լուծելու պարզ միջոց է ընձեռել՝ հերթագրել է ընտրական ժողովի ընթացքում եղած տեսիլներն ու երազները. փորձնական ընտրութիւններից յետոյ՝ նոյն կամ յաջորդ օրն եղել է առաջին երազը, «ի միւս օրն»՝ երկրորդը, «եւ ի միւս օրն»՝ երրորդը, նոյն կամ յաջորդ օրը՝ հոգեւորականներից մէկի Օշական գնալը, վերադարձը եւ տեսիլի պատմելը, որ մէկ կամ երկու օր պէտք է տեւէր*[215]*: Ուրեմն, ընտրական ժողովը տեւել է նուազագոյնը 4, առաւելագոյնը՝ 6 օր: Օրմանեանը, անուանելով փորձնական ընտրութիւնները «խորհրդակցութիւններ», կարծում էր, թէ դրանք եղել են Վաղարշապատում գումարուած ժողովից առաջ, դեռեւս Երեւանում, որ բացարձակապէս չի համապատասխանում Մեծոփեցու տուեալներին եւ անշուշտ սխալ է*[216]*:*

Արդ, այս 4-6 օրուայ ընթացքում ժողովականների մի առանձնավայրում խմբուած լինելն ենթադրելի է ե՛ւ շարադրանքից, ե՛ւ դէպքերի տրամաբանութիւնից, ե՛ւ յատկապէս այն հաղորդումից, որ մէկ անգամ միայն, թողնելով համատեղ աղօթքի (ասել է թէ՝ ժողովի անցկացման) վայրը, ժողովականներից մի հոգի գնում է Օշական՝ սուրբ Մաշտոցի գերեզման ուխտի՝ «որպէսզի հայցեն... զաջողումն ձեռնադրութեան»: Հաւանաբար, նա գնում է ընտրութիւններին անմիջականօրէն չմասնակցող «դրսեցիների» ուղեկցութեամբ՝ «Դարձեալ ոմն ի յեղբարցն առնու նուէր եւ մատաղ եւ գնան ի սուրբ վարդապետի գերեզմանն...»[217]*: Սա կարող է դիտուել իբրեւ կոնկլաւի կանոնների խախտում եւ մեր ենթադրութեան դէմ խօսող փաստարկ, սակայն ուշադրաւ է, որ նրա վերադառնալուն եւ «օրհնութեան տեսիլքը» պատմելուն պէս՝ տեղի է ունենում վերջնական ընտրութիւնը: Ըստ երեւոյթին, երկու հիմնական մրցակից խմբակցութիւնների՝ սիւնեցիների եւ վասպուրականցիների՝ Կիրակոսի անձի վրայ համաձայնութեան գալուց յետոյ, ժողովականներից մէկին ուղարկել են ուխտի՝ «օրհնութեան տեսիլք» բերելու առաջադրանքով: Այս փաստը վկայում է, որ 1441 թ. կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ կոնկլաւի կանոնները կիրառուել են ոչ խստօրէն, այլ միայն մասնակիօրէն՝ յարմարեցուելով առկայ պայմաններին եւ հնարաւորութիւններին: Այս առթիւ կարելի է նկատել, որ 1665 թ. վերջին գրուած փաստաթուղթը նոյնպէս ընդգծում էր միայն կոնկլաւի գլխաւոր դրոյթը՝ «վիճակաւ ի-միք» Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրելու կարգը, այսինքն՝ փակ գաղտնի գրաւոր որեւէ կերպ կազմակերպուած քուէարկութեան օրինականութիւնը, եւ ոչ՝ կոնկլաւի անխտիր բոլոր կանոնների կիրարկումը:*

Միաժամանակ, պէտք է նկատել, որ հայերն իրենք էլ ունեցել են գրաւոր քուէարկութեամբ կաթողիկոս ընտրելու սեփական իւրօրինակ փորձ: Այսպէս, 1343 թ. սկզբին Կիլիկեան Հայաստանից Հռոմ առաքուած մի վաւերագիր արձանագրում է, որ կաթողիկոսի ընտրութիւնը կատարում է Հայոց թագաւորի հրաւիրած եկեղեցական ժողովը, ուր մասնակիցներից իւրաքանչիւրը իր գրով ու կնիքով հաստատած թղթի վրայ թագաւորին է ներկայացնում իր նախընտրած թեկնածուի անունը: Եթէ թեկնածուները շատ են լինում, թագաւորը կարգադրում է միաբանել երկուսի կամ երեքի վրայ, ապա այս վերջիններից ընտրում նրան՝ ում ցանկանում է[218]*:*

Կիլիկեան Հայաստանում կաթողիկոսական ընտրութեան այս եղանակը շատ է յիշեցնում 1737 թ. Ս. Էջմիածնում անցկացուած գաղտնի գրաւոր մի քուէարկութիւնը, որն առաջարկել էր Ամենայն Հայոց կաթողիկոսի երեք թեկնածու, որոնցից մէկին Կ. Պոլսի հայութեան ժողովը (կարծես կատարելով նախկինում Հայոց թագաւորին վերապահուած դերը) հաստատում է կաթողիկոս: Ըստ մի ականատեսի՝ Ս. Էջմիածնում՝

Վաղվաղակի զմիաբանքն համայնի ժողովք առնին ամենեքեանք մի տեղի. թղթովք ընտրեն զերիս Արրս պատուելի՝ Էջմիածնայ կաթողիկոս լինելի (ընդգծումն՝ Ա. Ա.)[219]*:*

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 **Լ. Մինասեան**, *Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակը եւ մի քանի նորայայտ գրքեր ու այլ ծանօթութիւններ.*- Հասկ, 1970, էջ 380:

2 **Ն. Ա. Ոսկանեան, Ք. Ա. Կորկոտեան, Ա. Մ. Սաւալեան**, *Հայ գիրքը 1512-1800 թթ.: Հայ հնատիպ գրքի մատենագիտութիւն*, առաջաբանը՝ Ն. Ոսկանեանի, խմբագրութեամբ՝ Ռ. Ա. Իշխանեանի, Երեւան, 1988, էջ 114:

3 ՏՑՈ, Բ, էջ 114-122:

4 Մեզ ծանօթ միակ հեղինակը, որ իր քննութեան ընթացքում հպանցիկ վկայակոչում է այս վաւերագրի մի տեղեկութիւն, Ցակոբ Անասեանն է (տե՛ս **Ց. Ս. Անասեան**, *XVII դարի ազատագրա-*

© National Library of Armenia

կան շարժումներն Արեւմտեան Հայաստանում, էջ 270):
5 «շինել» (ՏՑՈ, Բ, 115):
6 «պարապեալք» (ՏՑՈ, Բ, 115):
7 «որում» (ՏՑՈ, Բ, 115):
8 «է»-ն դուրս է ընկել (ՏՑՈ, Բ, 115):
9 «ի կարգի» (ՏՑՈ, Բ, 116):
10 «զընտոյգն» (ՏՑՈ, Բ, 116):
11 «զձեռագիր» (ՏՑՈ, Բ, 116):
12 «պարտէր» (ՏՑՈ, Բ, 116):
13 «համաշխարհականէ» (ՏՑՈ, Բ, 116):
14 «որ»ը դուրս է ընկել (ՏՑՈ, Բ, 116):
15 «այժմ» (ՏՑՈ, Բ, 117):
16 «...ի թուաճաշու[ու]թեան տոհմիս հայկական հազարերորդի հարիւրորդի եւ տասնեւհինգ ամի» 6 1666, սակայն գրուել է 1665ի վերջին՝ տե՛ս ստորեւ, էջ 31:
17 Սաւատ (արաբերէն) - պատճէն:
18 «մեքն» (ՏՑՈ, Բ, 118):
19 «Հողեփեռնէոս» (ՏՑՈ, Բ, 118):
20 «զաւետս» (ՏՑՈ, Բ, 118):
21 Լի՛պասի հուքմ (արաբերէն-պարսկերէն) - ձեռնադրութիւնը հաստատող հրովարտակ, բառացիօրէն՝ զգեստաւորուելու հրովարտակ:
22 Մանսար=մանզար (արաբ.) - այստեղ՝ հանրագիր, վկայական, Սիմէոն Երեւանցու թարգմանութեամբ՝ «բազմակնիք թուղթ համահաւանութեան», «զհաւանութեան բազմակնիք» (տե՛ս **Զամբռ**, էջ 59):
23 Սալաճ (պարսկ.) - համաձայնութիւն:
24 «Մահտեսի-խօջա» (ՏՑՈ, Բ, 118):
25 «սեփականէ» (ՏՑՈ, Բ, 118):
26 «եկեղեցւոյ» (ՏՑՈ, Բ, 118):
27 «ղաղագս» (ՏՑՈ, Բ, 118):
28 Յովհաննեանցի հրատարակութեան մէջ «հինգերորդից» մինչեւ «երկոտասաներորդ» բոլոր թուահամարներն ուղղագրական սխալով են, այն է՝ բնագրի յապաւումները բացուած են երկու որով (հինգերորդ եւ այլն):
29 «գան Ցարան» (ՏՑՈ, Բ, 119):
30 Փալեակ (պարսկ.) - սուրհանդակ:
31 Եդակ=յետակ - «պատուոյ ձի, հանդիսութիւնների ժամանակ հետիոտն եւ ձեռքով առաջնորդուող նժոյգ» (**Ց. Ս. Անասեան**, *XVII դարի ազատագրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում*, էջ 384):
32 Ղադարայ - անծանօթ բառ է. հաւանաբար՝ զինահանդերձանքի ինչ-որ պարագայ:
33 Բ Կորնթ. Ժ 4:
34 «յոլով» (ՏՑՈ, Բ, 120):
35 «չարէ» (ՏՑՈ, Բ, 120):
36 Հմմտ. **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*: Քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (նմանահանութիւն), լրացումները՝ Ա. Բ. Սարգսեանի: Երեւան, 1991, էջ 349, 353:
37 Մատթէոս ԺԲ 25. Մարկոս Գ 24-25. Ղուկաս ԺԱ 17:
38 Ցակոբ Ջուղայեցու, Եղիազար Այնթապցու եւ Նահապետ Եդեսացու կողմից Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի վիճակի բաժանումների մասին տե՛ս ՏՑՈ, Բ, 96-104: Տե՛ս նաեւ **Ց. Քիւրտեան**, *Նիւթեր Ցակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կենսագրութեան համար (1655-1680)*. - Հասկ, 1952, էջ 42, 87: Նոյնի՝ Նոր նիւթեր Եղիազար կաթողիկոս Այնթապցիի մասին. - Հասկ, 1952, էջ 171-172. հմմտ. **Կ. Ամատունի**, *Ցակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոս Էջմիածնի (1600-1800)*. - Բազմավէպ, 1992, էջ 39:
1678 թ. յունուարի 2-ի մէկ այլ կոնդակով Ցակոբ Ջուղայեցին Ոստին, Հորս, Խրաշկուս, Խրովատեղ, Արատես, Կալասեռ, Արտաւին, Ազատակ եւ Զեթաց գիւղերը յանձնում էր Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքին (այն վերանորոգուել էր իր տասնամեայ անձնական ջանքերով, տե՛ս ԴԱԻ, էջ 281)՝ հաւանաբար, հանելով դրանք Ս. Թադէի վիճակից. «Այսուհետեւ ձեր իսկապէս հաստատուն Աթոռն Սուրբ Նախավկայն է, եւ դուք՝ հարազատ որդիք եւ ժողովուրդ նորին» (տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 244, վաւերագիր 245):
39 «Ղերեւան» (ՏՑՈ, Բ, էջ 121):
40 Խօսքը վերաբերում է Նոր Ջուղայի նախկին քալանթար Աւետիսին (տե՛ս Դրուագներ, Բ, էջ 300-301. ՁԱՔ, Բ, էջ 137. ԽԱՁ, էջ 152):
41 Ցետիկար, երբեմն՝ հետկար, ետկար=յատիկար (պարսկ.) - յիշատակ, կտակ:
42 Տե՛ս **Լ. Մինասեան**, *Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636-1972)*. Նոր Ջուղայ, 1972, էջ 60: Սրանով հանդերձ, վերոյիշեալ փաստը ո՛չ այս, ո՛չ էլ այլ հրապարակման մէջ չի արձանագրուել:
43 **Զամբռ**, էջ 26:
44 Տե՛ս *Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի Հայոց Կ. Պոլսոյ*, «Արարատ», 1874, էջ 113. հմմտ. ԱՁԳ, սիւն. 1826:
45 ՁԱՔ, Բ, էջ 136. հմմտ. անդ, 107. ԽԱՁ, էջ 151: Այս եւ մի քանի այլ դրուագներում Խաչատուր Ջուղայեցին գրեթէ բառացիօրէն վերարտադրում է Զաքարիա Քանաքեռցու պատմածը, որ նշանակում է, թէ Խաչատուրի աղբիւրը Զաքարիան էր:
46 ՁԱՔ, Բ, էջ 136:
47 ՁԱՔ, Բ, էջ 107:
48 1697 թ. փետր. 4-ի դրութեամբ Նահապետն արդէն վերահաստատուած էր Էջմիածնում (տե՛ս **Մեսրոպ Նշանեան**, *Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի*, Երուսաղէմ, 1939, էջ ՃԽԲ. հմմտ. ՄԺ, Ա, էջ 281-283, 285, 287, ծնթ. 10, 310, 312, ՄԺ, Բ, էջ 423, ծնթ. 31): Ստեփաննոս Ռոշքան Ստեփաննոս Ջուղայեցու գահակալութեան տեւողութիւնը հաշուել է «ամիսս վեց», իսկ Մ. Չամչեանը՝ «ամիսս տասն» (տե՛ս **Ստ. Ռոշքայ**, *Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք*, Վիեննա, 1964, էջ 189. ՁԱՄ, Գ, էջ 725):

49 Տե՛ս ԽԱՁ, էջ 152. հմմտ. **Ստ. Ռոշքայ**, *Ժամանակագրութիւն...*, էջ 189:
50 ԱՁԳ, սիւն. 1871:
51 Տե՛ս ՏՑՈ, Բ, էջ 46-48. Դրուագներ, Բ, էջ 302-304. CARM, p. 482:
52 Վազգէն Ցակոբեանն այս կողմնակալութիւնը բացատրում է նրանով, որ Զ. Քանաքեռցին «վախեցել է Նահապետ կաթողիկոսի խստութիւններից» (տե՛ս ՄԺ, Ա, էջ 283, ծնթ. 1):
53 Դրուագներ, Բ, էջ 297-8. CARM, pp. 480-481:
54 ՁԱՄ, Գ, էջ 722, 724:
55 Տե՛ս «Արարատ», 1874, էջ 112. հմմտ. ԱՁԳ, սիւն. 1826:
56 ԱՁԳ, սիւն. 1826:
57 Փիլիպպոս Ա. Աղբակեցին վախճանուել էր 1655 թ. մարտի 25-ին, Ցակոբ Ջուղայեցին էլ կաթողիկոս էր օծուել 13 օր անց՝ ապրիլի 8-ին (տե՛ս ԱՁԳ, սիւն. 1708, 1723), այսինքն՝ հանգուցեալի քառասունքը տակաւին չլրացած:
58 «*Ազգասէր Արարատեան*», Կալկաթա, 1849, թ. 12, էջ 94:
59 Աւելի հին ժամանակաշրջանում եւս երբեմն եղել են դէպքեր, երբ կաթողիկոսի ցուցումով է ընտրուել նրա յաջորդը (տե՛ս **Վարդան Հացունի**, *Կաթողիկոսական ընտրութիւն եւ ձեռնադրութիւն պատմութեան մէջ*, Վենետիկ-Ս. Ղազար, 1930, էջ 44-50): 1343 թ. մի փաստաթղթում յատուկ շեշտուած է, որ, օրինակ, թէեւ Աղուանից եւ Աղթամարի կաթողիկոսների պարագայում, նրանք են «ընտրում իրենց յաջորդներին, սակայն ընտրուածների ձեռնադրութիւնը կատարւում է ոչ նրանց կենդանութեան օրօք, այլ մահանալուց յետոյ միայն» (տե՛ս *Mansi Joannes Dominicus. Sacrorum conciliorum nova et amplissima collectio*. **Graz**, 1960-1962, Vol. 25 (Anni 1300-1344), p. 1258. հմմտ. **Վ. Հացունի**, նոյն տեղում, էջ 50):
60 **Զամբռ**, էջ 59:
61 ԴԱԻ, էջ 257-260:
62 Տե՛ս ՏՑՈ, Բ, էջ 48. **Յով. Շահխաթունեանց**, *Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառաց Այրարատոյ*, հտ. Բ, Վաղարշապատ, 1842, էջ 224. հմմտ. ԱՁԳ, սիւն. 1884:
63 Տե՛ս **Ն. Պողարեան**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Ցակոբեանց*, Երուսաղէմ, 1953, հտ. Բ, էջ 168-169:
64 «Ազգասէր Արարատեան», 1849, էջ 92:
65 Տե՛ս **Աբրահամ Կրետացի, Պատմութիւն**: *Քննական բնագիր*, ռուս. թարգմ., առաջաբան եւ ծանօթագրութիւններ՝ Ն. Կ. Ղորղանեանի, Երեւան, 1973, էջ 44-45. հմմտ. **Զամբռ**, էջ 59: Այս կարգի մասին պատմում է նաեւ Խուբեանցը՝ իր Ցաղագս վարուց եւ գործոց կաթողիկոսաց Էջմիածնայ (1737-1827 թթ.), Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. 2766, էջ 4ա-բ:
66 **Զամբռ**, էջ 238:
67 Տե՛ս **Մսեր Մսերեանց**, *Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէոնէ մինչ ցՅովհաննէս Ը* (1763-1831), Մոսկուա, 1876, էջ 296:
68 Այդ ժամանակներում Էջմիածնում էր Եղիազար կաթողիկոսի մէկ այլ մտերիմ՝ նշանաւոր Մինաս վարդապետ Ամդեցին, սակայն նամակի հեղինակը նա չէր կարող լինել, այն պարզ պատճառով, որ Էջմիածնից դուրս էր եկել 1690 թ. յունիսի 2-ին, իսկ յուլիսի 2-ին արդէն Էրզրումում էր (տե՛ս «Օրագրութիւն Երեմիայ Չէլէպի Քէօմիւրճեանի», էջ ՃԽ):
69 ՄԺ, Ա, էջ 312. հմմտ. **Աշ. Յովհաննիսեան**, *Հայոց օրինենտացիայի խնդիրը*, Էջմիածին, 1921, էջ 40:
70 **Г. А. Эзов**, *Сношению Петра Великого с армянским народом*. Документы, извлеяенные из Московского главного и С.-Петербургского архивов Министерства Иностранных Дел, ...и других учреждений. С.-Петербург; Типография Импер. АН, 1898, док. 85, с. 138-139.
71 Տե՛ս **Աշ. Յովհաննիսեան**, *Հայ-ռուս օրինենտացիայի խնդիրը*, էջ 37-41. *Դրուագներ*, Բ, էջ 523-524: Աշ. Յովհաննիսեանը նաեւ ենթադրում էր, թէ 1722 թ. դեկտեմբերի 12-ին Թիֆլիսից ռուսներին յղուած նամակը, որ գրուել էր «ձեռամբ Մինաս Փերուազեան վարդապետէ. Աթոռակալ սուրբ յԷջմիածնի. յաժմուս արքեպիսկոպոս եւ առաջնորդ Հաղբատու Սուրբ Նշանին, թագաւորաշէն աթոռոյն եւ բոլոր Վրացտանու վերատեսուչ» (տե՛ս *Армяно-русские отношения в 1-ой трети XVIII века*. Сборник документов, том II, часть II. Под редакцией Аш. Иоаннисяна, Ереван, 1967, док. 169, с. 20)՝ կարող էր նոյն Մինասի հեղինակածը լինել (**Աշ. Յովհաննիսեան**, *Հայ-ռուս օրինենտացիայի խնդիրը*, էջ 41, ծնթ.): Սակայն այս ենթադրութիւնն սխալ է. Մինաս վրդ. Փերուազեանը (1680-1757) ակնցի էր եւ այլապէս յայտնի գործիչ (նրա մասին համառօտաբար տե՛ս **Յովհաննէս Պատկերաեան**, *Նամականի*, աշխատասիրեց Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1988, էջ 27-28, ծնթ. 27):
72 «Ազգասէր Արարատեան», 1849, էջ 95:
73 Տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, կաթ. դիւան, թղթ. 243, վաւ. 5: Այս փաստաթուղթն ունի միայն ամսաթիւ՝ 12-ը յունիսի, հետագայ գրիչը, սակայն, նրա հակառակ կողմում թուագրել է ՌՃԾԵ (1706), որ եւ ստոյգ է ընդունել Ց. Անասեանը (տե՛ս նրա՝ *Հայկական մատենագիտութիւն. Ե-ԺԸ դարեր*: Հ. Ա, Երեւան, 1959, սիւն. 587): Մինչդեռ հաստատ գիտենք, որ Աղեքսանդր Ջուղայեցին հասած պիտի լինէր Ս. Էջմիածին ամենաշուտը 1706 թ. սեպտեմբերի վերջին, քանզի Նոր Ջուղայից ճանապարհ էր ընկել միայն սեպտեմբերի 18-ին (ՏՑՈ, Բ, էջ 48): Հետագայ գրչին, ըստ երեւոյթին, թիրիմացութեան է մատնել վաւերագրի վրայ եղած Աղեքսանդր Ջուղայեցու կաթողիկոսական կնիքը, որ բնակա-

© National Library of Armenia

նաբար ունի ՌՃԾԵ (1706)՝ նրա կաթողիկոս ձեռնադրուելու տարեթիւը: Նմանապէս, օրինակ, 1700 թ. գրած մի յիշատակարանի տակ դրուած Նահապետ Եդեսացու կնիքը եւս ունի ՌՃԽ (1691) թուականը, որ վերջինիս կաթողիկոսանալու տարեթիւն է (տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. 350, էջ 551բ). Կարապետ Ուլնեցու (1661-1729) վարդապետութեան շրջանի կնիքն ունի նրա՝ մասնաւոր վարդապետութիւն ստանալու տարեթիւը՝ 1684, իսկ կաթողիկոսութեան շրջանինը՝ կաթողիկոսանալու թուականը՝ 1726 (տե՛ս **Բաբգէն Կիւլէսէրեան**, *Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից. Անթիլիաս*, 1957, սիւն. 108. հմմտ. *Կարապետի կաթողիկոսի Ուլնեցւոյ Վարք ինքնագիր*. - Բազմավէպ, 1978, էջ 286):

74 1663 թ. Աստապատն ունէր 1000 ընտանիք. - տե՛ս **Սահակ Ճեմճեմեան**, *Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հոռմը*, Վենետիկ-Ս. Ղազար, 2000, էջ 138, ծնթ. 1:

75 Տե՛ս «Ազգասէր Արարատեան», 1849, էջ 94. հմմտ. Դրուագներ, Բ, էջ 304:

76 Աւետիսը, բնականաբար, չէր կարող մահմեդականութիւն ընդունել եւ շարունակել պաշտօնավարել իբրեւ Նոր Ջուղայի քալանթար, ուստի նա հաւատափոխ է եղել պաշտօնանկ լինելուց յետոյ, այսինքն՝ 1693 թ. առաջին ամիսներին: Նա Նոր Ջուղայի քալանթարն էր առնուազն 1688 թ.՝ «...ի քալանթարութեան պայազատ պարոն Աւետին» (Հայ գիրքը 1512-1800 թթ., էջ 108ա): Սակայն այս հիմքի վրայ նրան Աւետ Քալանթարեան անուանելը (նոյն տեղում, էջ 803բ) ճիշտ չէ:

77 CARM, p. 480.

78 ԱԶԳ, սիւն. 1836: Իսկ Ա. Զամինեանն էլ Նահապետին գնահատում էր իբրեւ «չափազանց խստապահանջ ու **կարգապահ**», որը սոսկ «աշխատում էր եկեղեցականներին բարեկարգել» (տե՛ս **Աբրահամ Զամինեան**, *Հայոց Եկեղեցու պատմութիւն*, մասն Բ, Նոր Նախիջեւան, 1909, էջ 37):

79 Մաշտոցեան Մատենադարանում պահուող՝ ԺԷ դարում օրինակուած մի բժշկարանի վերջին թերթը սեւագրութիւնն է կամ պատճէնը Նահապետի՝ Հոռմի Ինոնովկենտիոս ԺԲ պապին 1694 թ. սեպ. 5-ին գրուած յայտնի նամակի (տե՛ս ձեռ. 7304, էջ 88ա-բ), որ Ռոշքան, Զամչեանը եւ Ազարեանը թուագրում են 1695-ով (տե՛ս **Ստ. Ռոշքայ**, *Ժամանակագրութիւն*..., էջ 188. ՁԱՄ, Գ, 724. ԱԶԳ, սիւն. 1832. հմմտ. **Stephanus Azarian**, *Ecclesiae Armenae traditio de Romani pontificis primatu jurisdictionis et inerrabili magisterio. Romae*, 1870, pp. 130-131՝ այստեղ զետեղուած է սոյն նամակի լատիներէն թարգմանութիւնը): Մատենադարանիս համաոօտ ձեռագրացուցակի մէջ այն գրանցուել է այսպէս՝ «Թուղթ Նահապետի կթող.-ի, 1694 թ.» (հտ. Բ, էջ 503): Այս մատեանն ունի հետագայում մուծուած հատուած, որ ուրիշ գրչի արտադրութիւն է (էջ 75ա-87բ): Մատեանը վերակարելու ընթացքում Նահապետի նամակը, բժշկարանի բովանդակութեան հետ կապ չունենալու պատճառով դարձեալ տեղափոխուել է ամենավերջ, եւ 76-րդի փոխարէն դարձել 88-րդ էջը (մատեանից դուրս է ընկել սրան անմիջապէս նախորդող մէկ թերթ, որ պէտք է լինէր 75-րդը): Ինչեւիցէ, այս ձեռագիրը պատկանել է Նահապետին կամ էլ նրա քարտուղարներից որեւէ մէկին: Ցամենայն դէպս, դատելով Գ-Ք-Կ հնչիւնների, ինչպէս նաեւ արաբ.-օսմաներէն գարար-կարար (=որոշում) բառի օգտագործումից՝ կարելի է վստահաբար ասել, որ գրիչը արեւմտահայ էր: Պահպանուել է նաեւ Ինոնովկենտիոս ԺԲ պապի պատասխան նամակը, ինչպէս նաեւ նրա՝ Նահապետին ուղարկած թանկարժէք նուէրների յիշատակութիւնը (տե՛ս **Ստ. Ռոշքայ**, *Ժամանակագրութիւն*..., էջ 189. ՁԱՄ, Գ, 725. CARM, 482-483):

80 Դրուագներ, Բ, էջ 303:

81 Տե՛ս ՁԱՄ, Գ, էջ 724-727. **Jacobo Villote**, *Dictionarium Novum Latino-Armenorium. Romae*, 1714, p. 756. հմմտ. ԱԶԳ, սիւն. 1826. Դրուագներ, Բ, էջ 303-305:

82 Այս մասին մանրամասն տե՛ս **Ց. Ս. Անասեան**. *XVII դարի ազատագրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում*, էջ 256-267:

83 Տե՛ս CARM, p. 480. Դրուագներ, Բ, էջ 301-304. **Մ. Մ. Կարապետեան, Է. Խ. Թաջիրեան**, *Էջեր XVII դարի վերջի Նոր Ջուղայի պատմութիւնից*, - Բանբեր Երեւանի Համալսարանի, 1998, թիւ 2 (95), էջ 82-83: Աշ. Ցովհաննիսեանը շատ մեղմօրէն էր նշում այս հանգամանքը՝ «Ստեփաննոսն աւելի հեռու էր միսիոներներից, քան նրա հակառակորդը» (Դրուագներ, Բ, էջ 301):

84 CARM, p. 482.

85 Մժ, Ա, էջ 285: Այս տեղեկութեան առթիւ Վազգէն Ցակոբեանը գրել է. «Այստեղ արդէն ակամայ կասկած է առաջանում, թէ արդեօ՞ք սպանութեան մէջ այս կամ այն չափով մասնակցութիւն չի ունեցել նրա անհաշտ հակառակորդ Նահապետ կաթողիկոսը» (նոյն տեղում, էջ 283):

86 Տե՛ս **Գ. Սրուանձտեանց**, *Թորոս Աղբար* [մասն Բ], Կ. Պոլիս, 1884, էջ 410: Հետաքրքիր է, որ, ինչպէս եւ Զ. Քանաքեռցին, Արղնիի Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանական Սահակը՝ 1691-1696 թթ. Նահապետ կաթողիկոսի դէմ հնչած բողոքները մերժում եւ կեղծ «աւելորդաբանութիւններ» էր անուանում (նոյն տեղում, էջ 408): Այս դէպքում, սակայն, նրա կարծիքի վրայ ազդել էր ոչ թէ Էջմիածնի կաթողիկոսի անմիջական վերահսկողութիւնը, այլ այն, որ Նահապետը Եղիազարի աշակերտն էր, իսկ Եղիազարը՝ Բարձրահայեաց Ս. Աստուածածինը հիմնովին նորոգող ու կառուցապատողն էր (տե՛ս նոյն տեղում, էջ 404-405):

87 ՁԱՔ, Բ, էջ 138. հմմտ. ԽԱՁ, էջ 153:

88 ԱԶԳ, սիւն.1826:

89 Տե՛ս ԱԶԳ, սիւն.1871:

90 **Ղազար Ջահկեցի**, *Գիրք աստուածաբանական, որ կոչի «Դրախտ ցանկալի»*, Կ. Պոլիս, 1733, էջ 606:

91 Նոյն տեղում, էջ 680:

92 Տե՛ս **Մկրտիչ Աղաւնունի**, *Կիլիկիոյ հայ արքունիքին եւ հայ եկեղեցականութեան մասին ԺԳ դարուն օտար ճանապարհորդի մը տեղեկութիւնները*. - Սիոն, 1933, էջ 179:

93 Նոյն տեղում, էջ 180. հմմտ. «Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ»: Ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վրդ. Շահնազարեանց. Փարիզ, 1859, էջ 114: «*Սմբատայ Սպարապետի Տարեգիրք*», Վենետիկ-Ս. Ղազար, 1956, էջ 213:

94 Դատելով Մսեր Մսերեանցի նկարագրութիւնից՝ ԺԹ դարի առաջին կէսին Էջմիածնի միաբանների ուտեստը մեծ փոփոխութիւն չէր կրել (տե՛ս նրա՝ Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի..., էջ 273-276):

95 Տե՛ս **Հայկ Պերպերեան**, *Էջմիածնի վանքը 1662-ին*. - Հասկ, 1950, էջ 273-274:

96 Տե՛ս **Ղուկաս Ինճիճեան**, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի*: Հ. Գ, Վենետիկ, 1835, էջ 268-269 (հմմտ. **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, էջ 295. **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 104-105): Ի դէպ, Մ. Մսերեանցի մահից յետոյ նրա գրառումներում յայտնաբերելով Ինճիճեանի այս հատորից արուած ընդարձակ արտագրութիւններ՝ Զարմայր Մսերեանցը թիւրիմացաբար հրատարակել է դրանք իբրեւ իր հօր տակաւին 1852 թ. գրած «յօդուած» (հմմտ. **Ղուկաս Ինճիճեան**, անդ, էջ 238-289 եւ **Մսեր Մսերեանց**, *Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի*..., էջ 277-306):

97 *Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.)*, հտ. Բ, աշխատասիրութեամբ՝ Ցասմիկ Սահակեանի, Երեւան 1987, էջ 271:

98 Տե՛ս **Ն. Պողարեան**. *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Ցակոբեանց*, հտ. Բ, էջ 168-169: Աշ. Ցովհաննիսեանն այս ուղերձը համարում էր «ժամանակի եկեղեցական բարքերի եւ ըմբռնումների համար շատ բնորոշ» վաւերագիր (տե՛ս Դրուագներ, Բ, էջ 297-298):

99 Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. 1534, էջ 610ա:

100 **ՁԱՔ**, Բ, էջ 107:

101 **Զամբր**, էջ 26:

102 Նրա մասին տե՛ս ԽԱՁ, էջ 153-218. **Հ. Ղ. Միրզոյեան**, *XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծութիւն*, Երեւան, 1983, էջ 176-190:

103 Տե՛ս **Հ. Ղ. Միրզոյեան**, *XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծութիւն, էջ 189*:

104 Տե՛ս **Ցովհաննէս Մրքուզ Ջուղայեցի**, *Գիրք որ կոչի Սրբազնագործութիւն*, Մադրաս, 1812, էջ 222-264՝ «Գլուխ Իթ. Ցաղագս թէ սրբազան Կաթողիկոսն, պարտին առաւել խոնարհել որքան առաւել գահագլուխք են, եւ յօրինակ հայեցողացն լինել, զի զբարիս ուսցին խոնարհագոյնքն»:

105 Նոյն տեղում, էջ 239:

106 Տե՛ս ԽԱՁ, էջ 219:

107 Նոյն տեղում, էջ 243:

108 Տե՛ս **Н. Бердзенишвили, И. Дчавахишвили, С. Дчанашия**. *Историю Грузии*. Часть 1, Тбилиси, 1946, с. 383-390. **Պ. Ա. Զորաեան**, *Վրացական ուղեգրութիւնները եւ նրանց տեղեկութիւնները հայերի մասին*, Երեւան, 1981, էջ 12-14:

109 Տե՛ս **Բ. Կիւլէսէրեան**, *Կոլոտ Ցովհաննէս պատրիարք*, Վիեննա, 1904, էջ 44, 198-199. **Գ. Բամպուքճեան**, *Ցովհաննէս պատրիարք Կոլոտ*, Ստանպուլ, 1984, էջ 280:

110 **Գ. Բամպուքճեան**, *Ցովհաննէս պատրիարք Կոլոտ*, էջ 218:

111 **Ցակոբ Նալեան**, *Վէմ Հաւատոյ, Կ. Պոլիս*, 1733, էջ 8:

112 **Սիմէոն դպիր Լեհացի**, *Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք*. ուսումնասիրեց եւ հրատարակեց Ներսէս Ակինեան (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1936), էջ 111-112:

113 Նոյն տեղում:

114 Նոյն տեղում, էջ 204-207:

115 Բնագրի մէջ՝ «արարանց»:

116 Մատթէոս ԺԲ 32. Մարկոս Բ 29:

117 Ձախ կողմում, վերեւից ներքեւ, ստորագրողների անուններն են, որ մենք համարակալել ենք: 28 տարի անց, 1693 թ. մայիսի 1-ին, հրատարակելով այս փաստաթուղթը՝ ջուղայեցի տպագրիչները իւրաքանչիւր անուան աջ կողքին դրել են խաչի նշան (+): Չենք կարծում, թէ այդ խաչով նրանք նշել են ստորագրողների մահացած լինելը: Ամենայն հաւանականութեամբ, այս խաչը խորհրդանշում էր իւրաքանչիւրի դրած ստորագրութեան եւ կնիքի տեղը:

118 Ծախսաբան=Ծրխշաբան կամ Ծախշաբան՝ Սպահանի թաղ (տե՛ս ԴԱԻ, էջ 352. ՁԱՔ, Ա, էջ 19-20):

119 Փակագծերի մէջ առնուած տառերը լուսապատճէնի կամ գուցէ բնօրինակի վրայ ջնջուած են, սակայն, սա ըստ երեւոյթին Զաքարիա Ագուլեցու յիշատակած Սարգիս որագեղցին է (տե՛ս «Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը», Երեւան, 1938, էջ 123-124):

120 Տե՛ս «Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը», 8 26, էջ 65-66:

121 Նրա մասին տե՛ս աստ, էջ 39:

122 Այս ժողովի մասին տե՛ս ստորեւ:

123 ՁԱՔ, Բ, էջ 71:

124 Տե՛ս **Կարապետ Ամատունի**, *Ցակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոս Էջմիածնի* (1600-1680). - Բազմավէպ, 1993, էջ 36:

© National Library of Armenia

125Տե՛ս Սիոն, 1933, էջ 151-153:
126Տե՛ս Սիոն, 1933, էջ 153:
127Հմմտ., օրինակ, *Армяно-русские отношения в первой трети XVIII века*, том II, часть II, փաստաթղթեր թիւք 198, 200, 229, 233, 341, 342, 351:
128Տե՛ս Բազմավէպ, 1993, էջ 36-40:
129Անդ, էջ 36, 39. հմմտ. **Մեսրոպ Թերզեան**, *Յակոբ Դ. Ջուղայեցի* (1655-1680), Պէյրութ, 1956, էջ 129:
130Սիոն, 1933, էջ 153:
131Նոյն տեղում: Խօսքը վերաբերում է «դիւրիկեցի Ղազար վարդապետին» (տե՛ս **Յ. Քիւրտեան**, *Յակոբ կաթ. Ջուղայեցիի նորագիւտ խիստ կարեւոր վաւերաթուղթ մը*. - Սիոն, 1969, էջ 129):
132Սիոն, 1933, էջ 151-152. տե՛ս նաեւ Բազմավէպ, 1993, էջ 36:
133«...Էջմիածնայ յերկրէն Նախավկայի վանից **Շամբեցի Յոհան վարդապետ...**»-ը յիշւում է նաեւ 1666 թ.՝ Կ. Պոլսում ծաւալած հակաեղիազարեան գործունէութեան կապակցութեամբ (տե՛ս «*Դիւան Սուրբ Յակոբի*». - Սիոն, 1940, էջ 282):
134*Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ (1641-1660 թթ.)*, Հ. Գ. կազմեց Վազգէն Յակոբեան, Երեւան, 1984, հտ. Գ, էջ 537): Դրանից մօտ մէկ տասնամեակ առաջ, 1641-1642 թթ., երբ Սիմէոն Ջուղայեցին նոր էր եկել Էջիմածին (տե՛ս **Հ. Ղ. Միրզոյեան**, *XVII հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծութիւն*, էջ 148, ծնթ. 216), միաբանների թիւը աւելի քիչ էր՝ «...ոչ միայն Էջմիածնի միաբանքն, այլ եւ բոլոր վանօրէից գրոց աշակերտեալ աբեղայքն... միահամուռ ժողովեցան անձինք երեսուն, եւ սկսան առնուլ դաս» (ԴԱԻ, 321. հմմտ. **Պօղոս Անանեան**, *Ոսկան վարդապետի նամականին*. - Բազմավէպ, 1967, թիւ 6-8, էջ 133՝ «Սիմէոն վարդապետն ...եկն ի սուրբ Աթոռս եւ հաստատեաց զնոր Աթէնս շնորհօք ս. Հոգւոյն... եւ էին ամենեքեան (իմա՛ աշակերտողները - Ա. Ա.) մեծ եւ փոքր Լ (30) հոգի»): 1710-1720-ական թթ. Ս. Էջմիածնում կրթա-ուսումնաբիրական իրավիճակը շատ աւելի բարւոք էր (մինչեւ 1724 թ. օսմանեան ներխուժումը). Ղազար Ջահկեցու բառերով՝ «Էջմիածին փառօք պատուեալ, հայրապետօք բարգաւաճեալ, վարդապետօք փարթամացեալ, ուսումնասէր մանկամբք ծաղկեալ» (**Ղազար Ջահկեցի**, *Գիրք նորաբոյս, որ կոչի ԵՐԳԱՐԱՆ*, Կ. Պոլիս, 1737, էջ 120):
135ՄԺ, Բ, էջ 361, Դաւիթ Բաղիշեցու մասին տե՛ս նոյն տեղում, էջ 287-288: **Աշ. Աբրահամեան**, *Դաւիթ Բաղիշեցու տարեգրութիւնը եւ նրա արժէքը հայ մատենագրութեան մէջ*. - «Էջմիածին», 1946, VIII-X, էջ 55-59, XI-XII, էջ 35-42: Յակոբ Դ Ջուղայեցու օրօք Էջմիածնի միաբանութեան անդամ վարդապետներից 18-ի անունները յիշուած են նաեւ 1681 թ. յուլիսի 21-ին շարադրուած՝ «Գիր աղերսանաց գրեալ առ տէր Եղիազար Կաթողիկոսն ի միաբանիցն սրբոյ Էջմիածնի ի սուրբ Երուսաղէմ» վաւերագրում (տե՛ս **Ն. Պօղարեան**, *Մայր ցուցակ...*, հտ. Ա, էջ 480): Սակայն մէկ այլ գրչագրից գիտենք, որ «այս գրիս կայր ԼԳ (33) մօճրը (=կնիք) գլուխ վարդապետաց, եւ Լ (30) այլ իշխանաց մօճրը» (նոյն տեղում, էջ 554):
136Տե՛ս **Միսաք Թ. Խոստիկեան**, *Վերածնութեան շրջան* - ԺԷ դարու վերանորոգիչ կաթուղիկոսները. - «Արարատ», 1902, էջ 774:
137*Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ (1641-1660 թթ.)*, Հ. Գ, էջ 723, 296, 539, 769, 957: Նրա մասին տե՛ս նաեւ ԴԱԻ, էջ 285 (Ա. Դաւրիժեցու երկի վերջին հրատարակութեան ցանկում Մովսէս վարդապետ անուան տակ սխալմամբ նոյնացուած են Մովսէս Բջնեցին եւ Մովսէս Տաթեւացին. տե՛ս էջ 580. հմմտ. էջ 236, 285, 482, 483, 512): [**Մաեր Մաերեանց**], *Մովսէսի Բջնեցւոյ առեղծուած զգրոյ*. - «Ճոռաքաղ», 1861-1862, էջ 134-135: ՄԺ, Բ, 361:
138Տե՛ս **Յ. Տաշեան**, *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*. Վիեննա, 1895, էջ 260:
139Տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. 2503, էջ 494ա. հմմտ. **Ներսէս Ակինեան**, *Երեմիա Չէլէպի Քեօմիւրճեան. կեանքն եւ գրական գործունէութիւնը*, Վիեննա, 1933, էջ 57: Այս ձեռագրի առաջին ստացողը նոյն ինքը Մովսէս Բջնեցին էր՝ «(1648 թ.) յանգեալ աւարտեցաւ տառս աստուածաբանական մեծին Դիոնէսիոսի Արիսպագացւոյ... ի վայելումն անձին իմում մեղապարտի **Մովսէսի իմաստութեան սիրողի**» (տե՛ս նոյն տեղում, էջ 372բ-373ա. նաեւ՝ *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*. հտ. Գ, էջ 296):
140Տե՛ս ԱԶԳ, սիւն. 1851-1852. հմմտ. **Աբ. Զամինեան**, *Հայոց Եկեղեցու պատմութիւն*, մասն Բ, էջ 81:
141Տե՛ս **Ղ. Ալիշան**, *Կամենից*, Վենետիկ, 1896, էջ 193:
142Տե՛ս **Գ. Գալեմքեարեան**, *Ո՞վ է Ջուղայեցի Յակոբ Դ կաթողիկոսին յաջորդը*. - «Հանդէս Ամսօրեայ», 1912, էջ 577-580. **Յ. Ս. Անասեան**, *XVII դարի հայ ազատագրական շարժումները*, էջ 265-266. Դրուագներ, Բ, 192, 293-4, 300, 314, 543. **Կ. Ամատունի**, *Սահակ վրդ. Մակուեցի*. - Բազմավէպ, 1983, էջ 98-131. նոյն յօդուածը համառօտուած տե՛ս Բազմավէպ, 1988, էջ 53-56:
1431661 թ. սեպտ. 28-ին Հռոմի Աղեքսանդր Է պապին ուղղուած Յակոբ Ջուղայեցու նամակն անձամբ գրել էր Էջմիածնի կաթողիկոսի կնքապահ (Sigillarius) «Pater Stephanus Wartanowic»-ը (տե՛ս **Մեսրոպ Թերզեան**, *Յակոբ Դ Ջուղայեցի*, էջ 123), այսինքն՝ նոյն Ստեփաննոս Լեհացին, «զազատ տանէ Վարդանէնց» (հմմտ. **Ղ. Ալիշան**, *Կամենից*, էջ 140, 193): 1673 թ. Ստեփաննոս Լեհացու վարչական պաշտօնն էր՝ «վերակացու եւ գանձապետ ի սուրբ Կաթողիկոսարանն Էջմիածնի» (Մաշտոցեան Մատենադարան, ձեռ.

678, էջ 166ա. հմմտ. **Գալուստ Տէր-Մկրտչեան**, *Հայագիտական ուսումնասիրութիւններ* /Հայկականք ԺԳ-ԺԹ/, Երեւան, գիրք Ա, 1979, էջ 154): Հետաքրքիր է, որ Ստեփաննոս Լեհացին եւ Միքայէլ վրդ. Շամբեցին գրեթէ միաժամանակ՝ առաջինը 1679 թ. նոյեմբերին, երկրորդը՝ նոյն թուի դեկտեմբերին, յիշւում են իբրեւ Էջմիածնի կաթողիկոսի տեղապահ եւ աթոռակալ (ԶԱՔ, Գ, էջ 37. «Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը», էջ 145): Ամենայն հաւանականութեամբ, այդ միջոցին նրանք եղել են «աթոռակից» տեղապահներ: Ստեփաննոս Լեհացու մասին տե՛ս նաեւ ԴԱԻ, էջ 322-324: ՁԱՄ, Գ, 620: **Ներսէս Ակինեան. Ստեփանոս վրդ. Լեհացի**. - «*Հանդէս Ամսօրեայ*», 1912, էջ 62-66, 147-153. «Հայելի վարուց», աշխատասիրութեամբ՝ Քնարիկ Տէր-Դաւթեանի, Երեւան, 1994, էջ 13-21: В. К. Чалоян. История армянской философии. Ереван, 1959, с. 319-333. Ստ. Լեհացին վախճանուել է 1689 թ. (տե՛ս ՄԺ, Ա, էջ 327. **Ստ. Ռոշքա**, *Ժամանակագրութիւն*, էջ 185-186. ՁԱՄ, Գ, էջ 620):
144Դարաշամբի Ս. Նախավկայի առաջնորդ Միքայէլ վարդապետի մասին տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 244, վաւ. 244. նաեւ անդ, ձեռ. 3531, էջ 350ա. Դրուագներ, Բ, էջ 153, 156, 293:
145Յակոբ կաթողիկոսի՝ 1665-1672 թթ. բացակայութեան ժամանակ, Մատթէոս եպիսկոպոսը յիշւում է իբրեւ Էջմիածնում նստող «աթոռակալ» (տե՛ս ԶԱՔ, Բ, էջ 76. հմմտ. «*Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*». հտ. Գ, էջ 383, 632, 1654ին յիշւում է իբրեւ եպիսկոպոս, 681):
146Պետրոս Ագուլեցին եպիսկոպոս էր ձեռնադրուել 1654 թ., իսկ 1664 թ. բազմել էր Ագուլիսի Ս. Թովմայի առաջնորդութեան աթոռին (տե՛ս «Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը», էջ 63): Սա էր «Գ եպիսկոպոսների գլուխ անցած» այն հրաւիրակը, որին 1680 թ. դեկտեմբերին ուղարկել էին Երուսաղէմ՝ Եղիազարին Էջմիածին բերելու պատուէրով (տե՛ս «Արարատ», 1874, էջ 75. «*Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*», էջ 152): Այս գործը լաւագոյնս գլուխ բերելուց յետոյ (տե՛ս «Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քեօմիւրճեանի», էջ 430-433. հմմտ. **Յ. Ս. Անասեան**, *XVII դարի ազատագրական շարժումները...*, էջ 263-264, 268-269) 1683 թ. Պետրոս Ագուլեցին նշանակւում է Էջմիածնի աթոռակալ, սակայն երկու ամիս անց հեռանում է Ագուլիս՝ «իւր վանքը» (տե՛ս «*Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*», էջ 152):
1471652-1655 թթ. Յովհաննէս Մուղնեցին եղել է Կ. Պոլսի հայոց պատրիարքը, 1660-ականների սկզբին՝ Յակոբ Դ. Ջուղայեցու աթոռակալը, այդ ժամանակամիջոցին էլ այս երկուսի միջեւ սուր առճակատում է առաջացել (Մուղնեցու դժգոհութիւնները շարադրուած են 1664 թ. նոյեմբերի 4-ին Եղիազար Այնթապցուն ուղղած նամակում. տե՛ս Սիոն, 1933, էջ 119-122): Յովհաննէս Մուղնեցին Փիլիպպոս կաթողիկոսի աշակերտներից էր. «Յովհաննէս անուամբ վարդապետ՝ այր երեւելի», որին յիշում է Դաւրիժեցին այն ժամանակ, «մինչ քարոզութեամբ շրջէր Տէր Փիլիպպոս կաթուղիկոս յաշխարհին Օսմանցւոց» (տե՛ս ԴԱԻ, էջ 265)՝ կարող էր միայն այս Յովհաննէս վրդ. Մուղնեցին լինել, քանզի կաթողիկոսին 1651-1652 թթ. ուղեկցող վարդապետներից միակ Յովհաննէսը, «տեսուչ Տիգրանակերտ քաղաքին»՝ նա էր (տե՛ս «Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ»: Հ. Գ, էջ 523-524. նաեւ՝ էջ 58, 790): Յովհաննէս Մուղնեցու մասին տե՛ս նաեւ ՁԱՄ, էջ 629, 664. **Մեսրոպ Նշանեան**, *Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քեօմիւրճեանի*, Երուսաղէմ, 1939. **Յ. Ս. Անասեան**, *XVII դարի ազատագրական շարժումները...*, էջ 246-248. **Ստ. Մխիթարեան**, *Ստորագրութիւն հռչակաւոր վանաց Ս. Գէորգայ որ ի Մուղնի*. Դաւրէժ, 1889, էջ 26, 28-29: Յովհաննէս Մուղնեցին մահացել է 1669 թ. ապրիլի 4-ին (տե՛ս «Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը», էջ 83-84):
148Յովհաննէս Կարբեցու մասին տե՛ս **Կարապետ Ամատունի**, *ԺԷ դարու երեւելի վարդապետներ*. - Բազմավէպ, 1987, էջ 76. ԴԱԻ, 504: Յովհաննավանքի մեծ հեղինակութիւնն ու ազդեցութիւնը պայմանաւորուած էր նաեւ նրանով, որ նրա վիճակի մէջ էր Զուխուր-Սա'դի, այն է՝ Երեւանի նահանգի ամենահարուստ մահալը՝ Կարբին (տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. 9120, էջ 5ա. հմմտ. **Ջամբո**, էջ 291. հմմտ. **Յակոբ Փափազեան**, *Օտար տիրապետութիւնը Արարատեան երկրում (ԺԷ դար)*. - «Լրաբէր հասարակական գիտութիւնների», 1977, թիւ 1, էջ 38):
149Պոլսի վերոյիշեալ Եփրեմ պատրիարքն, որն իրեն «երաժիշտ» է անուանում (տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. 2503, էջ 495ա), բացի Մովսէս Բջնեցուց, աշակերտել էր «*նաեւ քեռորդի՝ Տեառն Եսայեայ աստուածաբանութեան մեծի բարունապետի եւ առաջնորդի Նախիջեւանու վանիցն Սրբոյ Կարապետին*» (անդ, 494ա): Եփրեմը, սակայն, «քանի մի ամ» երաժշտութիւն էր ուսանել ոչ սրանցից (եւ ոչ էլ Մարտիրոս Ղրիմեցուց - տե՛ս **Ա. Ա. Մարտիրոսեան**. *Մարտիրոս Ղրիմեցի*, Երեւան, 1958, էջ 27-28, 44), այլ մի երրորդ ուսուցչից՝ Գրիգոր վարդապետ Զեյթունցուց (տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. 789, էջ 6բ):
150«*Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*», էջ 108:
151Սրանք եւս Էջմիածնի միաբանութեան առաջին դէմքերից էին (տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 244, վաւ. 244):
152Հմմտ. **Բաբգէն ծ. Կիւլէսէրեան**, *Վարդապետութեան աստիճանները Հայ Եկեղեցւոյ մէջ*. Անթիլիաս, 1980, էջ 146-149 (այս աշխատութիւնը սկզբնապէս լոյս էր տեսել 1905-1906 թթ.՝ Կիւլէսէրեանի խմբագրած «Լոյս» շաբաթաթերթում):

© National Library of Armenia

Հեղինակը, մասնաւորապէս, նշում էր, թէ «այսպիսի սովորութիւն մը ունէին հին եպիսկոպոսներ, որոնք ի պատիւ իրենց վարդապետութեան, կպահէին իրենց վարդապետ տիտղոսը եւ եպիսկոպոսութիւնը կկցէին իրենց վիճակին հետ» (անդ, էջ 147): Կիլէսէրեանը նաեւ նկատում էր, որ ԺԷ-ԺԸ դարերում «վարդապետ ըսուած ատենը կհասկցուէր ծայրագոյն վարդապետ: Ոչ ծայրագոյնները աբեղայ կկոչուէին» (Բ. Կիլէսէրեան, *Կոլոտ Յովհաննէս պատրիարք*, էջ 34):

153 *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Գ, էջ 807:

154 Բ. Կիլէսէրեանին անծանօթ էին Վարդապետական ինստիտուտի մասին Ն. Մառի աւելի վաղ արած այս դիտարկումները (տե՛ս Н. Марр, Критика и мелкие статьи. С.-Петербург, 1903, с. 34-38):

155 Նոյն տեղում, էջ 34. հմմտ. **Գառնիկ Գէորգեան.** *Ճշտումներ Մինաս Ամթեցիի մասին*. - Բազմավէպ, 1966, թիւ 7-8, էջ 194, ծնթ. 4:

156 Հմմտ. Н. Марр, Критика и мелкие статьи, с. 35-37.

157 Տե՛ս *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Գ, էջ 522-524. հմմտ. անդ, էջ 505՝ «...այսմ ամի Ս. Էջմիածնայ կաթողիկոսն եկն ի սուրբ քաղաքս Երուսաղէմ Ի (20) վարդապետաւք եւ այլ միաբանք ընդ նմա...»:

158 ԴԱԻ, 269. հմմտ. ԱԶԳ, սիւն. 1688:

159 Տե՛ս «Արարատ», 1893, էջ 196. հմմտ. «*Դիւան հայոց պատմութեան*», գիրք Ե՝ «Դանիէլ կաթողիկոս /1800-1808/, աշխատասիրութեամբ՝ Գ. Աղանեանցի, Թիֆլիս, 1902, էջ 234-236:

160 «*Ջաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*», էջ 71, 123-124: Ծմաւոնը մահացել է 1670 թ. դեկտեմբերին Սպահանում (անդ, էջ 103):

161 Անդ, էջ 123-124:

162 Տե՛ս ԴԱԻ, 352: 1670 թ. խօջայ Ծմաւոնը՝ ագուլիսեան մի եկեղեցու շինարարութեան վրայ վերակացու է նշանակում այս Ցակոբջան Երեւանցու որդի Օհան-Բաբային (տե՛ս «Ջաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը», էջ 82): 1671 թ. «Ցակոբջան աղայ»ն, որ պէտք է նոյն Ցակոբջան Երեւանցին լինի, յիշում է ջուղայեցի այն մեծահարուստների շարքում, «որոց մէն մի ունեցեալ են զտասն կամ զքսան ստորադրեալ վաճառականս» (տե՛ս ՏՑՈ, Ա, էջ 172):

163 Տե՛ս *Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*, հտ. Գ, էջ 236, 252, 910:

164 Իր՝ «*Պատմութիւն Պետրոս աւագ գոնսուլին Հայոց եւ երկու ընկերացն՝ Քթոնչէնց Դեւոորոսին եւ Խանէնց Ստեփանին*» չափածոյում, Թադէոսն այսպէս էր ներկայանում. «Մեղօք լցեալ Թադէոսի, Անուամբ եւեթ քահանայի, Գոլով որդի տէր Սարգսի, Եւ ի ցեղէ Համազասպի. Ծօշ քաղաքու ըսպահանցի, Կոչիմ ազգաւ Երեւանցի...» (տե՛ս **Գ. Գալեմքեարեան,** *Թադէի երիցու պատմական մէկ գործը*. - «Հանդէս Ամսօրեայ», 1887, էջ 170): Թադէոս երէց Երեւանցի Համազասպեանի մասին եղած գրականութեան մատենագիտութիւնը, նորայայտ նիւթերը եւ ամփոփիչ գնահատականը տե՛ս **Սահակ Մեմճեմեան,** *Մարսիլիոյ հայկական տպարանը*. Վենետիկ-Ս. Ղազար, 1986: **Ռաֆայէլ Իշխանեան,** *Հայ գրքի պատմութիւն*, հտ. 1, Երեւան, 1977, էջ 476-495: Նոյնի՝ **Սահակ Մեմճեմեան,** *Մարսիլիոյ հայկական տպարանը (գրախօսութիւն)*. - Պատմա-բանասիրական հանդէս, 1988, թիւ 1, էջ 208-209: Թադէոս երէցի մի հետաքրքրական յիշատակարանը (1674 թ.) տե՛ս **Սահակ վրդ. Մեմճեմեան,** *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, Հ. Դ. - Վենետիկ-Ս.Ղազար, 1993, էջ 1049-1050:

165 Տե՛ս «*Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ*». հտ. Գ, էջ 570: Ըստ երեւոյթին, սա նոյն Իսահակ կամ Սահակ Ջուղայեցին էր, քանզի երկուսն էլ գրիչ էին (հմմտ. անդ, էջ 570 եւ 295) եւ նոյն տարիներին գործում էին Նոր Ջուղայում: Նա, համաոստաբար ներկայացնելով իր տոհմածառը, ինքն իր ազգանունն էլ է ճշտում. «...Սահակ վարդապետիս Ջուղայեցւոյ... որ եմ ազգաւ Ղարատանեցի» (անդ, էջ 295. հմմտ. նաեւ անդ, էջ 756-757՝ «...հեզաւոգի եւ առաքելաշնորհ քաջ հովուի Իսահակ վրդապետին Ջուղայեցւոյ», 962): Հմմտ. նաեւ **Սահակ Մեմճեմեան,** *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, Հ. Ե. - Վենետիկ-Ս. Ղազար, 1995, էջ 780:

166 Հմմտ. **Հ. Ղ. Միրզոյեան,** *XVII հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծութիւն*, էջ 42-46: Հ. Միրզոյեանն իրաւամբ նկատում է, որ «արեւելահայ հասարակական-քաղաքական կեանքում ջուղահայ առեւտրական կապիտալի այս գործունն դերն սկսել էր երեւան գալ դեռեւս Հին Ջուղայում՝ նախքան մեծ բռնագաղթը» (նոյն տեղում, էջ 46):

167 Հմմտ. *Ջաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*, էջ 110, 139:

168 Տե՛ս **Լ. Ս. Խաչիկեան,** Ցակոբ Ջուղայեցու կտակը. - Պատմա-բանասիրական հանդէս, 1966, թիւ 4, էջ 183-185: Առայժմ չենք ճշտել ժողովի միւս մասնակիցների կենսագրական մանրամասները: Երկուսի անձի վերաբերեալ, սակայն, ունենք ենթադրութիւններ. ա) Մարուքի որդի Ցարութիւնը պէտք է որ բուն երեւանցի լինէր, քանզի Ջաքարեայ Քանաքեռցին յիշում է Թահմասպկուլիխան Ղաջարի՝ Երեւանում պաշտօնավարելու տարիներին (1625-1635) խոշտանգման ենթարկուած ոմն Երեւանցի Մարուգէին (ԶԱՔ, Ա, էջ 66), որը քաղաքի ուսեւորներից պիտի լինէր. բ) Ցակոբ եպիսկոպոսը, հնարաւոր է, եղել է Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի միաբան. 1679 թ. գրուած մի յիշատակարանում, այլ միաբան վարդապետների շարքին, առաջինը յիշւում է «Մեծ Ցակոբ ռաբունապետն» (տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. 3531, էջ 350ա.

հմմտ. **Գալուստ Տէր Մկրտչեան,** *Հայագիտական ուսումնասիրութիւններ*, էջ 156):

169 Տե՛ս Սիոն, 1933, էջ 151:

170 Նոյն տեղում, էջ 153:

171 Տե՛ս **Ց. Ս. Անասեան,** *XVII դարի ազատագրական շարժումները*..., էջ 253, ծնթ. 1:

172 Կ. Ամատունին, առանց որեւէ աղբիւրի վկայակոչութեան, Եղիազար Այնթափցու օծումը դնում է 1664 թ. սեպտեմբերին, որ ընդունելի չէ (տե՛ս Բազմավէպ, 1993, էջ 35):

173 **Ց. Ս. Անասեան,** *XVII դարի ազատագրական շարժումները*..., էջ 254:

174 Տե՛ս ԶԱՔ, Բ, 73. ԱԶԳ, սիւն. 1756, 1759: Օրմանեանի հաշուարկով, Ցակոբ կաթողիկոսն Էջմիածնից դուրս է եկել 1665-ի մարտի 26-ին՝ Զատիկն անելուց յետոյ (ԱԶԳ, սիւն. 1759): 1665 թ. յուլիսի 28-ին «Եփրեմ կրօնաւորէ Տաթեւացւոյ» (որ հետագայում դառնալու էր Պոլսի վերոյիշեալ Եփրեմ պատրիարքը) գրած մի յիշատակարանից պարզւում է, որ այդ օրը նա դեռեւս Կեսարիայում էր (տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. 2291, էջ 380բ):

175 **Ց. Ս. Անասեան,** XVII դարի ազատագրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում, էջ 254:

176 Այս առնակատման սրութիւնը երեւում է նաեւ Ցակոբ Ջուղայեցու աթոռակալ Յովհաննէս Մուղնեցու՝ Եղազար Այնթապցուն ուղղուած մի նամակից (տե՛ս Սիոն, 1933, էջ 119-121):

177 Արդէն 1667 թ. սեպտ. 24-ին Ցակոբ Ջուղայեցին ազդարարում էր Եղիազարին «խաղաղութիւն եւ հաշտութիւն» բանակցելու իր ցանկութիւնը (տե՛ս Սիոն, 1941, էջ 157-158. Եղիազարի պատասխան նամակը տե՛ս անդ, էջ 200-201): 1671 թ. յուլիսի 4-ին Ցակոբ Ջուղայեցին գրում է նրան մի նամակ եւս՝ «առ ի մարգումն եւ ի հրաւիրումն զքեզ ի խաղաղութիւն... միայն թէ փութայ գալ [Պոլիս]» (տե՛ս **Նորայր Պողարեան,** *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Ցակոբեանց*: Հ. Ա, Երուսաղէմ, 1966, էջ 553. հաշտութեան որոնումների մասին տե՛ս նաեւ **Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց,** *Պատմութիւն Երուսաղէմի*: Հ. Ա, Երուսաղէմ, 1931, էջ 618-637): Սակայն 1672 թ. սուլթանի հրամանով Ցակոբ Ջուղայեցին արտաքսւում է Օսմանեան կայսրութեան տարածքից եւ եօթամեայ բացակայութիւնից յետոյ (տե՛ս **Ղ. Ալիշան,** *Կամենից*, էջ 264), նոյն թուի մայիսի 15-ին, ժամանում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին (տե՛ս *Ջաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*, էջ 66, 91):

178 ՁԱՄ, Գ, էջ 699:

179 Նոյն տեղում, էջ 700:

180 ՁԱՄ, էջ 699:

181 Հմմտ. ԱԶԳ, սիւն. 1808:

182 ԶԱՔ, Բ, էջ 72:

183 Նոյն տեղում:

184 Նոյն տեղում:

185 1665 թ. վերջին կայացած Էջմիածնի ժողովի որոշման ի յայտ գալով եւ վերը կատարուած քննութեամբ լիովին հերքւում է Կ. Ամատունու այն ենթադրութիւնը, թէ Օնոփրիոսի երդմնագիրը իբր «զուրկ է պաշտօնական հանգամանքէ, անձնական թուղթ մըն է, ինքն է (իմա՛ Օնոփրիոսը _ Ա. Ա.) միայն անոր հեղինակը...», եւ թէ «ոչ մէկ ապացոյց ունինք հաստատելու, թէ ժողովին 27 անդամները կամ գէթ անոր մեծամասնութիւնը հաւանած ըլլան օրինաւոր հայրապետը դատի հանելու հակաթոռ կաթողիկոսի ատեանին», այլապէս՝ «եթէ անոնք հաւան եղած ըլլային այդ գաղափարին, նկատած դարուն բարքերը, դժուարին չէր վար առնել կաթողիկոս մը, ուրիշ մը նստեցնելու անոր տեղը» (տե՛ս Բազմավէպ, 1993, էջ 39):

Օնոփրիոսի երդմնագրի բովանդակութիւնը որոշակի կասկած էր առաջացրել նաեւ Աշ. Ցովհաննիսեանի մօտ, քանզի նա «որպէս թէ» նախաբանով է վերաշարադրում 1664 թ. հոկտեմբերի ժողովի մանրամասնութիւնները, իսկ ժողովականների՝ Եղիազարին ուղղած համակամ խնդրանքը վերագրում է, ինչպէս եւ Կ. Ամատունին՝ միայն Օնոփրիոս Կարկուտին (տե՛ս Դրուագներ, Բ, 153):

186 Տե՛ս *Sempadschfr kodex, herausgegeben und ubersetst von Josef Karst. Strassburg*, 1905, p. 74. հմմտ. Судебник Смбата спарапета (гундстабля) 1265 г. Перевод со среднеармянского, предисловие и примечания проф. А. Г. Сукиасяна. Ер., 1971, с. 88.

187 **Մխիթար Գոշ,** *Գիրք Դատաստանի*, աշխատասիրութեամբ՝ Խոսրով Թորոսեանի, Երեւան, 1975, էջ 89:

188 Ubi periculum-ի հիմնական դրոյթները եւ հետագայ էական ձեւափոխումները շատ լաւ համառոտուած են հետեւեալ հանրագիտարանում՝ *The World of Knowledge Encyclopeadia*. Vol. VI, London-New York-Toronto-Sydney-Aucland, 1971. տե՛ս նաեւ Lector. *Conclave: son organisation, sa legislation ancienne et modern*. Paris,1894.

189 ԿՈՍ, էջ 51, 53, 69, 73:

190 Տե՛ս ՄԺ, Ա, էջ 113-114:

191 Տե՛ս ԿՈՍ, էջ 81-82:

192 Տե՛ս **Գարեգին վրդ. Յովսէփեան,** *Թովմա Մեծոփեցու կեանքը (կենսագրական նոր նիւթերով)*.- «Արարատ», 1914, էջ 8:

193 *ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, մասն Ա (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1955, էջ 531-532:

194 ԿՈՍ, էջ 72:

195 ԱԶԳ, սիւն. 1458:

196 Տե՛ս Սիոն, 1933, էջ 151-152:

197 ԿՈՍ, էջ 53:

198 «ԺԵ դ. հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ա, էջ 531:

199 ԱԶԳ, սիւն. 1453:

200 ԿՈՍ, էջ 53:

201 ԿՈՍ, էջ 68:

© National Library of Armenia

202ԴԱՒ, էջ 329: Գործածուած է հայկական շարժական տոմարը, որով ՊՂԱ (891) թուականն սկսում է 1441 թ. դեկտեմբերի 1-ին (տե՛ս, օրինակ, **Բ. Ե. Թումանեան**, *Տոմարի պատմութիւնը*, Երեւան, 1972, էջ 90): Լ. Խաչիկեանը, հաշուարկը կատարելով անշարժ տոմարով, յիշատակարանը թուագրում է 1442-ով (տե՛ս «ԺԵ դ. հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ա, էջ 536):

203ՁԱՄ, Գ, էջ 486 եւ շար.. հմմտ. **Բաբգէն Կիւլէսէրեան**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ* (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, 1939, սիւն. 1211: Այս դէպքը գրեթէ նոյն բառերով շարադրելով 1713 թ. գրուած իր Գաւազանագրքում (տե՛ս Երուսաղէմի Մատենադարանի ձեռ. 462)՝ Մաղաքիա դպիր Մեվահիրճին նախորդում է Զամչեանին (տե՛ս **Բաբգէն Կիւլէսէրեան**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ*, սիւն. 34, ծնթ.), որ կնշանակի, թէ վերջինս օգտուել է հէնց այս գործից կամ էլ՝ երկուսն էլ ունեցել են մի երրորդ՝ մեզ անյայտ աղբիւր: Ցամենայն դէպս, մի օրինակ էլ այս Գաւազանագրքից պահուում է Ս. Ղազարի մատենադարանում՝ ձեռ. թիւ 50-ը, սակայն այստեղ ժամանակագրութիւնը հասցուած է առնուազն մինչեւ 1741 թ. (տե՛ս **Սահակ Մեմճեմեան**, *Նոր նիւթեր Կ. Պոլսոյ երջանկայիշատակ պատրիարք Յովհաննէս Կոլոտի մասին*. - Բազմավէպ, 1978, էջ 282):

204ԿՈՍ, էջ 53:

205Տե՛ս **Մխիթար Գոշ**, *Գիրք Դատաստանի*, էջ 13-14, 543 (ծնթ. 17, 18, 19):

206Հետաքրքիր է, որ մի նմանատիպ պատմական փաստ՝ 1652 թ. Երուսաղէմում կայացած եկեղեցական ժողովը մեկնաբանելիս Օրմանեանը յանգել էր ճիշտ մեր վերոգրեալ եզրակացութեանը, այն է՝ որ «ժողովրդական ուխտաւորներ հազար կամ այլ աւել, որոնք կերպով մը անցած կնկատուին ի թիւ ժողովին, իբր զի (sic) ընդհանուր ազգային հաւանութեամբ հաստատուեցաւ երկու աթոռներու հաշտութիւնը» (տե՛ս ԱԶԳ, սիւն. 1688. հմմտ. «Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ (1641-1660 թթ.)», հ. Գ, էջ 522-524:)

207Տե՛ս **Լ. Ս. Խաչիկեան**, *Ցակոբ Ջուղայեցու կտակը*, էջ 179:

208ԿՈՍ, էջ 51-53:

209Տե՛ս Энциклопедический словарь. Издатели Ф. Брокгауз, И. А. Ефрон, том XXII, С. Петербург, 1897, с. 739. հմմտ. նոյն հանրագիտարանի հ. ԺԵ, էջ 956:

210ԿՈՍ, էջ 69:

211ԱԶԳ, սիւն. 1457: Այդ մրցակցութեան կարեւոր դրուագների եւ նրբութիւնների մասին տե՛ս **Ցակոբ Փափազեան**. *Մի էջ Արեւելեան Հայաստանի քաղաքական կեանքի պատմութիւնից*. - «Տեղեկագիր Հայկ. ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի», 1955, թիւ 8, էջ 96-99: 1441 թ. պատմական իրադարձութիւններին նուիրուած Թ. Մեծոփեցու յիշատակարանի ուշագրաւ քննութիւնը տե՛ս **Բաբգէն Կիւլէսէրեան**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ*, սիւն. 31-42, 1125-1214:

212ԿՈՍ, էջ 73:

213ԿՈՍ, էջ 72-73:

214ԿՈՍ, էջ 40:

215ԿՈՍ, էջ 69-72:

216ԿՈՍ, էջ 69. հմմտ. ԱԶԳ, սիւն. 1457:

217ԿՈՍ, էջ 71:

218Տե՛ս **Mansi Joannes Dominicus**, op. cit., p. 1258. հմմտ. **Ղուկաս Ինճիճեան**, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի*, հտ. Գ, էջ 255 (նոյնի արտագրութիւնը տե՛ս **Մսեր Մսերեանց**, *Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի...*, էջ 281). ԱԶԳ, սիւն. 1290-1291. **Վարդան Հացունի**, *Կաթողիկոսական ընտրութիւն եւ ձեռնադրութիւն պատմութեան մէջ*, էջ 44:

219Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. 9245, էջ 71բ: Իրականում, սակայն, Ս. Էջմիածնից Կ. Պոլիս ժամանած պատուիրակները ներկայացնում են երկու թեկնածութիւն (այս մասին մանրամասն տե՛ս գրքիս Բ մասում, գլուխ 19):

ԲՌՆԱԿՈԹԻ ՑԱՑՏՆԻ ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՑՕՐԻՆՈՒԱԾՔԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

Համլետ Պետրոսեան

Իր ուշագրաւ յօդուածներից մէկում պատմաբան-վիմագրագէտ Գ. Սարգսեանը յատուկ քննութեան առարկայ է դարձրել մի տապանաքար,[1] որը դրուած է Բռնակոթի գիւղամիջի եկեղեցու հարաւային պատի մէջ՝ դրսից (նկ. 1, աղ. Ա/1): Այն կերտուած է մոխրագոյն բազալտից. այժմ երեւում է միայն մէկ լայն նիստը, որի վրայ արձանագրութիւն չկայ: Այդ նիստի վրայ ելնդաւոր կիսագլանիկով կազմուող ուղղանկիւն շրջանակի ներսում տեղադրուած են հետեւեալ քանդակները (նկարագրութիւնը՝ ձախից աջ): Երկու կողմից ելնդաւոր կիսաշրջաններով երիզուող մօտաւորապէս քառանկիւն շրջանակի ներսում տեղադրուած է զարդարուն մի վարդեակ: Դրանից աջ քանդակուած է սրածայր գլխարկով եւ ծնկներից ներքեւ աւարտուող լայն պարեգօտով մի մարդ, որն աջ ձեռքով բռնել է մինչեւ ծնկները հասնող մի երկար իր՝ շրջանաձեւ (օղաձեւ) վերջոյթով, ընդորում այս ձեռքը երկու անգամ կարճ է պատկերուած, քան ձախ ձեռքը: Ձախ ձեռքն իջեցուած է ինչ-որ պատուանդանի վրայ: Դրանից աջ պատկերուած է գմբեթակիր մի կառոյց. գմբեթը հեծանների օգնութեամբ յենւում է զոյգ սիւների վրայ եւ աւարտւում է սրածայր ելուստով: Գմբեթի ներքնակամարից դէպի խորանն է իջնում ուղղաձիգ մի «ձող», որը խորանի կենտրոնում աւարտւում է օղով: Գմբեթի հետ այս «ձողի» միացման տեղից մինչեւ ձախակողմեան սիւնն է իջնում նման մի այլ «ձող»՝ այս անգամ առանց օղաձեւ վերջոյթի: Գմբեթի երկու կողմում՝ դրսից, հորիզոնական հեծանների վրայ պատկերուած է մէկական թռչուն: Այս կառոյցից աջ եւ ցած պատկերուած են երկու մարդիկ (թերեւս՝ նստած), որոնցից ձախակողմեանը մի ձեռքով բռնել է սափորը, իսկ միւսով՝ գաւաթը: Աջակողմեանը ձեռքը մեկնել է դէպի կողքին դրուած շրջանաձեւ իրը, որն ամենայն հաւանականութեամբ մեծ գաւաթ է կամ սկուտեղ: Զանազան ուտելիքներով (խորոված, հաւ, ձուկ, հաց, լաւաշ եւն) սկուտեղները եւ գինու գաւաթները տապանաքարային քանդակում լայն տարածում գտած խնջոյքի տեսարանների հիմնական բաղկացուցիչներն են կազմում: Սրանցից վերեւ պատկերուած է մի այծ: Ցօրինուածքն աւարտւում է անուաձեւ մի վարդեակով եւ նորից կիսագլանիկներից ու կիսաշրջաններից կազմուած երիզով:

Այս յօրինուածքի զուտ տեխնիկական նկարագրութիւնից յետոյ անդրադառնանք Գ. Սարգսեանի նկարագրութեան ու մեկնաբանութեանը: Ըստ հետազօտողի այս տապանաքարի վրայ պատկերուած է «մի բնակարան իր բակով եւ դրա ծայրին տեղաւորուած արհեստանոցով»: «Բնակարանի (նկատի ունի վարդեականախշ քառանկիւնը – Հ. Պ.) ցոյց տրուած երեք պատերն էլ շինուած են հաստ գերաններից...», այն ունի կլոր վանդականախշ պատուհան (ինչպէս հեղինակն է գրում՝ «փանջարէ»), թերեւս՝ գոյնզգոյն ապակիներով:[2] «Սենեակից դուրս... կանգնած է ձեռնափայտը ձեռքին բռնած մի մարդ, ըստ երեւոյթին՝ հաշմանդամ, որովհետեւ աջ ձեռքը ուսից ցած չկայ,[3] իսկ աջ ոտքին փոխարինում է պրոթեզը (sic!)»,[4] ըստ հեղինակի դա էլ հէնց հանգուցեալն է՝ «մի մեխանիկ գիւտարար, իր մեքենաշինական արհեստանո-

© National Library of Armenia